



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84-3

7-68

1958

2011

2003

1648 5267
Հրատ. Թիֆլ. Ընկ. Հայ. գրք. հրատարակութեան

84-3
պ 7-68

№ 42

ԱԼՓՕՆՍ ԴՕԴԷ

(224)

ՏԱՐԱՍԿՈՆՑԻ ՏԱՐՏԱՐԷՆԸ

„En France, tout le monde est un peu de Tarascon“ —

„Ասին մի Փրանսիացի փոքր ինչ տարակոնցի է“

Թարգմ. Փրանսերենից

Բժ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Գ

Տղարան „ԱՐՐՈՒ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

1891

450

1891

საქართველოს

საქართველოს

Дозв. ценз. Тифлисъ, 22-го ноября 1891 года.

Тип. Ароръ Т. Я. Назарьянъ. Барятинская улица.



Գրքագրական աստվածագրական
 համալսարանի գրադարան
 Երևան
 Բազմաթիվ օրինակներով
 Գրքագրական աստվածագրական
 համալսարանի գրադարան
 Երևան

Բ ա օ ք ա ք Ի ա ա ր տ է զ ք :

ՅԱՄԻՄ ԲՈՋՅԱՄԻ

Ս Կ Ո Շ Օ Մ Ս Մ Դ Մ Ջ

Տարասկոնցի Տարտարէնին արած առաջին
 այցելութիւնս յաւիտեան անմոռանալի պիտի լինի
 ինձ համար. արդէն տասներկու թէ տասնու-
 հինգ տարի է անցել այդ օրից, բայց այժմ էլ
 այնպէս կենդանի կերպով չիշում եմ այդ այցե-
 րութիւնը, որ կարծես թէ երէկ կատարուած
 լինէր: — Անվեհեր Տարտարէնն այն ժամանակ
 սպրոււմ էր Ավինիօնի փողոցում, դէպի ձախ,
 քաղաքի մուտքից երրորդ տանը: Այդ մի
 փոքրիկ սիրուն վիլլա էր, տարասկոնեան
 ճաշակով, ձեան պէս ճերմակ պատերով և կա-
 նաչ փեղկաւոր լուսամուտներով. առջևի կողմից
 նա գարդարուած էր մի գեղեցիկ պարտէզով,
 իսկ ետևի կողմից դասիկոնով: Մի խումբ կօ-
 շիկ սրբող փոքրիկ սավոյարներ ամեն օր այդ
 վիլլայի դռանը խմբուած գլուխկոնծի էին տա-
 լիս կամ գլուխները կօշկաներկի արկղիկների
 վրայ դրած արևի տակ մրափում:

Այսուամենայնիւ արտաքուստ Տարտարէնի տունն առանձին կերպով աչքի չէր ընկնում: Այդ տան մօտով անցնելիս մարդ դժուար կարող էր գլխի ընկնել որ անցնում է մի նշանաւոր հերոսի բնակարանի առաջից:—Ուրիշ բան է երբ մարդ ներս էր մտնում, այն ժամանակ, Օհ...

Ամբողջ տունը հիմքից սկսած մինչև կրտուրը հերոսական կերպարանք էր ստանում, մինչև անգամ պարտէզը: Օհ, Տարտարէնի պարտէզը, այդ մի հրաշալիք է. ամբողջ Եւրոպայում հազիւ թէ նրա նման ուրիշ երկու հատ էլ գտնուի... Ճշմարիտ է այդ պարտէզում դուք չէիք տեսնիլ ոչ մի տեղական ծառ, ոչ մի Փրանսիական ծաղիկ, բայց սրա փոխարէն դուք կը գտնէիք այնտեղ հասարակածի ամբողջ բուսականութիւնը—ռետինի ծառեր, դդմենիներ, բամբակենի, հնդկական ընկուզենիներ և կեռասենիներ, բանանի ծառեր, արմաւենիներ, մի հատ հսկայական բաօբաբ, կակտուսներ, բարբարիական և հնդիկ թզենիներ. մի խօսքով մի այնպիսի բուսականութիւն, որ մարդ մտնելով այդ պարտէզի մէջ մէկ անգամից իրան կարծում էր Տարասկօնից տասը հազար մղոն հեռու, կենդրոնական Աֆրիկայի խորքերում:—Բայց այդ ամենն ի հարկէ

չպիտի երևակայէք իրանց բնական մեծութեամբ. այդպէս օրինակ հնդկական ընկուզենիներն իրանց մեծութեամբ հազիւ թէ ճակնդեղի չափ լինէին. իսկ հսկայական բաօբաբը (arbores gigantea) շատ ազատ կերպով տեղաւորուած էր յափրուկի (réséda) թաղարի մէջ: Բայց այդ ոչինչ տարասկօնցիների համար այդ էլ շատ ու շատ բաւական էր. երբ որ նրանցից մէկն ու մէկը կիւրակէից կիւրակէ բաղդ էր ունենում մտնել Տարտարէնի պարտէզը և աչքէ անց կացնել նրա հսկայական բաօբաբը, նա միանգամայն հիացած և յայշած էր դուրս գալիս այդտեղից: Պայմանաւորաբար մի պարտէզում միայն Տյումինքները կարող էք երևակայել, թէ ինչքան սաստիկ էր իմ յուզումս երբ առաջին անգամ անցնում էի այդ հրաշալի պարտէզով... Բայց այդ էլ ոչինչ էր համեմատած այն յուզման հետ, որ ես զգացի երբ ոտքս ներս դրի հերոսի առանձնասենեակը... Այդ առանձնասենեակը, որ Տարասկօնի հրաշալիքներից մէկն էր, գտնվում էր պարտէզի խորքում և մի ապակեզարդ դռնով դուրս էր գալիս ուղիղ դէպի բաօբաբը: Երևակայեցէք ձեզ մի ընդարձակ դահլիճ յատակից մինչև առաստաղը ծածկուած թրեւով և հրացաններով: Կամեն երկրի ա-

մեն տեսակ զէնքեր դուք կարող էիք գտնել այդտեղ—կարաբիներ, տեսակ-տեսակ ատրը-ճանակներ, դանակներ, սրեր, թրեր, դաշոյններ, նիզակներ, նետեր. մի խօսքով ինչ ձևի և տեսակի զէնք որ կամենաք: Իսկ այդ ամենից վերև, կարծես մարդու վրայ աւելի սարսափ ձգելու համար, ճառագայթաձև դասաւորուած էին պատերազմական լայն թրեր և սուիներ, որոնք կազմում էին մի արեգակ և իրանց փալով շողշողացնում էին այդ ահուելի ժողովածուն... Միակ բանը որ փոքր ինչ մարդու սարսափը մեղմացնում էր, այդ այն օրինակելի սարքուկարգը և մաքրութիւնն էր, որ նըշմարվում էր այդ զինանոցում:—Ամեն բան կարգին իւր տեղը դրած, մաքրած, սրբած և նշանակուած էր ինչպէս ղեղարանում. զէնքերից միքանիսի վրայ կախուած էին հետևեալ զեկուցումները. Թունաւորուած նետեր—ձեռք չտաք:

Կամ
 Լցրած են—զգոյշ եղէք:
 Եթէ այդ զեկուցումները տեսած չլինէի, հազիւ թէ համարձակուէի ներս մտնել:
 Առանձնասենեակի մէջտեղում դրած էր մի կլոր սեղան. սեղանի վրայ մի շիշ ում, մի տաճկական ծխախոտի քսակ, նաւապետ

Կուկի ձանապարհորդութիւնները, Կուպերի և Գուստաւ Էմարի վէպերը, այլևայլ պատմութիւններ արջերի, փղերի և բազէների որսորդութեան մասին, և այլն և այլն Վերջապէս այդ սեղանի առաջ նստած էր մի մարդ, քառասուն-քառասունուհինգ տարեկան, կարճահասակ, հաստիկ, լայն թիկունքով, կարմիր թըշերով, ասուեայ շապիկով և վարտիկով, խիտ ու կարճ միրուքով և վառվռուն հրացայտ աչքերով: Մի ձեռքում նա բռնած էր մէկ ահագին ծխամորճ երկաթեայ կափարիչով, իսկ միւս ձեռքում մի զիւրք, որի մէջ ինչպէս երեւում էր՝ մի սարսափելի որսորդական արկած էր նկարագրուած: Նա կարգում էր և միւսնոյն ժամանակ ներքևի շրթունքը դէպի առաջ ուռեցնելով մի այնպիսի ծամածռութիւն էր անում, որ նրա տարասկօնական բարի դէմքը դառնում էր նոյնպէս տարօրինակ ահուելի, ինչպէս էր և նրա ամբողջ բնակարանը:

Այդ մարդը Տարտարէնն էր, Տարասկօնցի Տարտարէնը. անվեհեր, մեծ և աննման Տարասկօնցի Տարտարէնը:

Բ

Ընդհանուր ակնարկ երջանիկ Տարասիօնի վրայ.
վխարկների որսորդները:

Այդ ժամանակ Տարտարէնը գեռ ևս այն
Տարտարէնը չէր, ինչ որ է նա այսօր—Տա-
րասիօնցի մեծ Տարտարէնը, որ այնքան հռչա-
կաւոր և ժողովրդական է ամբողջ հարաւային
Փրանսիայում. սակայն այդ ժամանակն էլ նա
արդէն մի թագաւոր էր Տարասիօնում:

Տեսնենք թէ ինչպէս հասաւ նա այդ
բարձր աստիճանին:

Ամենից առաջ պէտք է լաւ իմացած լի-
նէք որ ամեն մի տարասիօնցի, սկսած մե-
մեծից մինչև փոքրը, ամենքն էլ որսորդներ
են:—Որսորդութիւնը տարասիօնցիների հոգին
է. և այդ սկսուել է գեռ ևս այն ժամանա-
կուանից, երբ առասպելական Տարասի անուէնով
հրէշն, աւերում էր այդ քաղաքի շրջակաները
և երբ տարասիօնցիները ստիպուած էին ան-
գագար արշաւանքներ գործել նրա դէմ: Ինչ-
պէս տեսնում էք այս բանը շատ հին է:

Եւ գուցէ հէնց այդ ժամանակուանից
սովորութիւն է դարձել որ ամեն կիւրակէ ա-
ռաւօտ ամբողջ Տարասիօնը հրացանն ուսին,
քսակը կողքից կախ արած, որսորդական փո-

ղերի և բարակների աղաղակով դուրս է դա-
լիս քաղաքից և գնում է որսորդութեան: Գե-
ղեցիկ և սքանչելի է այդ տեսարանը...

Միայն մի բան կայ, որ դժբաղդաբար
քաղաքի ամբողջ շրջակայքում մի հատ որսի
կենդանի չկայ. դեղի համար մէկն էլ չէք
կարող գտնել:

Ինչքան էլ որ ասենք լիմար լինին կեն-
դանիները, այսուամենայնիւ դարաւոր փորձը
նրանց էլ խելօքացրել է: Ամբողջ Տարասիօնի
շրջակայքում հինգ մղոն տարածութեամբ մի
հատ կենդանու որջ կամ մի հատ թռչնի բուն
չէք գտնիլ. ո՛չ մի հատ լոր, ո՛չ մի հատ սա-
րեակ, ո՛չ մի փոքրիկ նապաստակ, ո՛չ նոյն իսկ
մի հատ հասարակ դաշտամուկ. թէև պէտք
է խոստովանել որ Տարասիօնը միանգամայն
սքանչելի է իւր գեղազուարճ բլրակներով, ս-
րունք թաղուած են մրտենիների, խնկենիների
և անուշահոտ նարդոսների տակ. էլ չեմ լի-
շում այն անուշահոտ խաղողի որթերը, որոնք
շրջապատում են Ռոնա գետի ափերը և որոնք
իրանց քաղցրահամ ողկոյցներով այնքան սի-
րուն, այնքան հրապուրիչ են: Այն, չնայելով
այդ ամենին՝ Տարասիօնի համբաւը շատ վատ
է դուրս եկել թէ չորքոտանիների և թէ թե-
ւաւորների մէջ: Նոյն իսկ տեղափոխիկ թըռ-

չունենէրն իրանց ճանապարհորդական ցուցակում մի ահագին կարմիր խաչ էն գծել Տարասկօնի անուան զիմաց: Եւ երբ վայրի բազերը մի երկայն եռանկիւնի կազմած չուում են գէպի հարաւ, հէնց որ հեռուից նկատում են այդ քաղաքի զանգակատան ծալքը, բանակի առաջնորդն իսկոյն գլուխը ծռում է և սարսափելի ձայնով կռնչում. „ահա Տարասկօնը... ահա Տարասկօնը“... և ամբողջ երամբ մէկ անգամից փոխում է իւր ճանապարհը:

Մի խօսքով որսի կենդանիներից ամբողջ երկրում միայն մի հատիկ ծեր ճագար է մնացել, որ Աստուած միայն գիտէ թէ ինչ հրաշքով կարողացել է խոյս տալ տարասկօնցիների սուր հոտառութիւնից և ապրել այդ երկրում: Այդ ճագարը յայտնի է ամբողջ Տարասկօնին. տարասկօնցիք մինչև անգամ առանձին անուն են տուել նրան և անուանում են *Մեպրնթաց*: Ամենքը գիտեն որ այդ ճագարն ապրում է պ. Բօնպարի կալուածում և, չմոռանանք հարևանցի կերպով լիշել, հէնց այդ իսկ պատճառով պարոնի կալուածի գինը կրկնապատկուել և եռապատկուել է. սակայն մինչև այսօր դեռ ոչ ոք չէ կարողացել այդ ծեր ճագարի իսկական հետքը գտնել:

Այսօրուայ օրը հազիւ երկու կամ երեք յամառը գտնուեն, որոնք դեռ ևս ձեռք չեն վեր առել այդ ճագարից: Իսկ մնացածները վաղուց արդէն յոյսները կտրել են. այնպէս որ ճեպընթացն այժմ մի տեսակ սնահաւատութեան տառակայ է դարձել տարասկօնցիների համար, չնայելով որ տարասկօնցիներն առհասարակ սնահաւատ ժողովուրդ չեն:

Եթէ որ այդպէս է, եթէ որսի կենդանի չկայ, հապա էլ թնջ են անում Տարասկօնի որսորդները կիւրակէ օրերը: Ինչ են անում:

Ահա թէ ինչ են անում: Դուրս են գալիս դաշտը և երկու երեք մղոն տարածութեան վրայ բաժանուելով փոքրիկ խմբերի, հինգ հոգի այստեղ, վեց հոգի այնտեղ նստոտում կամ պառկոտում են մի որևէ ջրհորի, որևէ հին պատի, կամ որևէ ձիթենու շուաքի տակ, բաց են անում իրանց որսորդական պայուսակների բերանները, հանում են մի-մի կտոր լաւ տապակած միս, միքանի գլուխ սոխ, միքանի հատ երշիկ, երբեմն էլ տեսակ-տեսակ փոքրիկ ձկներ և սկսում են մի անվերջանալի նախաճաշ: Ռոնայի անապակ զինին էլ ի հարկէ անպակաս է: Ուտում են ու խմում, պարում են և երգում, երգում են ու պարում: Վերջա-

պէս երբոր կատարները լաւ տաքանում է, վեր են կենում շներին կանչում են, հրացանները լցնում և սկսում են որսայ: Իսկ նրանց որսն ահա թէ ինչ է: Ամեն մէկը իւր գլխարկը վերցնում է բոլոր ուժով և ձգում դէպի վեր և օդի մէջ նշան է բռնում: Ով որ ամենից աւելի նշանին խփէ, նա էլ ընտրվում է որսի թագաւոր և երեկոյեան յաղթական կերպով մտնում է Տարասկօն շների հաչոցով և փողերի աղաղակով, ծակծկած գլխարկը հրացանի ծայրից կախ արած:

Վլխարկի որսորդութեան մէջ Տարասկօնցի Տարտարէնը իւր հատը չունէր: Ամեն կիւրակէ առաւօտ նա տնից դուրս էր գալիս մի բոլորովին նոր գլխարկ գլխին և ամեն կիւրակէ երեկոյեան վերադառնում էր մի պզտիկ կրտորով:— Բաօբարի համեստ տան ամբողջ վերնալարկը լեքն էր այդ փռաւոր յաղթանակով: Այդպիսով ամբողջ Տարասկօնը ճանաչում էր նրան իբրև գլուխ և որովհետև Տարտարէնը լաւ տեղեակ էր որսորդութեան բոլոր կանոններին, ուսումնասիրել էր ամեն տեսակ որսորդութեան բոլոր ձեռնարկները սկսած գլխարկի որսորդութիւնից մինչև Բիրմանեան վագրի որսորդութիւնը, ուստի և տարասկօնցիները միաձայն հաւանութեամբ ընտրել էին

նրան դատաւոր և միջնորդ իրանց տարածանութիւնների ժամանակ:

Ամեն օր ժամը երեքից մինչև չորսը զինավաճառ Կօստէկալդի խանութում կարելի էր տեսնել մի հասալիկ և խոշոր մարդ, ծխամորճը ատամների արանքում, կաշեսպատ բազկաթուփ վրայ բազմած և շրջապատուած գլխարկների որսորդներով, որոնք ոտքի վրայ կանգնած վիճում են: Այդ մարդը Տարասկօնցի Տարտարէնն է, որ դատաստան է կտրում. մի կատարեալ Ներբովթ հսկայ և մի կատարեալ Սողոմոն իմաստուն:

Գ

Nan! Nan! Nan!

Երջանիկ Տարասկօնի նկարագրութեան շարունակութիւնը:

Բացի որսորդութիւնից քաջասիրտ տարասկօնցիները մի ուրիշ բանի էլ մեծ սէր ունին— այն է՝ երգերի. սարսափելի շատ երգեր են երգվում այդ փոքրիկ Տարասկօնում: Աշխարհի երեսին ինչքան որ հնացած ու մոռացուած երգեր կան, այդ բոլորը դուք կըսէք Տարասկօնում:

նրանք այստեղ դեռ ևս բոլորովին թարմ ու
անթառամ են մնացել: Ամեն մի ընտանիք այդ-
տեղ ունի իւր առանձին, սեպհական երգը և ա-
մենքը գիտեն թէ որ երգը որ ընտանիքինն է:
Օրինակի համար, ամենքը գիտեն որ գեղավա-
ճառ Բեզիւքէի երգը հետևեալն է.

Ո՛վ պայծառ աստղ, պաշտելի ես ինձ
համար...

Զինավաճառ Կօստէկալդի երգն է.

Կամիս գնալ վարագնեքի աշխարհը...

Իսկ քաղաքային հաշտապահ երգն է.

Թէ ես լինէի անտեսանելի

Ինչպէս խաւարը կէսգիշերային...

Եւ այդպէս ամեն մի ընտանիք ունի իւր
սեպհական երգը, որ միայն ինքն է երգում.
Եւ այդ երգը ժառանգաբար անցնում է որդոց
որդի ու համարվում է մի ընտանեկան սըր-
բուլթիւն: Շաբաթը երկու թէ երեք անգամ
հաւաքվում են մէկ-մէկու մօտ և ամեն մէկը
սկսում է իւր երգը երգել: Մէկի մտքովն ան-
գամ չէ անցնում, զոնէ զանազանութեան հա-
մար, փոխել իւր երգը մէկ ուրիշի երգի հետ:
Այդպէս օրինակ երբէք Կօստէկալդի ընտանիքի
մտքովը չէ անցնում երգել Բեզիւքէի ընտա-
նիքի երգը, և ոչ էլ Բեզիւքէի ընտանիքն է
մտածում Կօստէկալդի երգը բերան առնել:

Այդ դեռ բաւական չէ, քառասուն տարի շա-
րունակ նրանք լսում են միևնոյն երգերը և
ինչ էք կարծում, ոչ մէկը չէ ռզենայ էլ,
չի կարող ուրիշի երգը երգել. ամեն մէկը
պինգ բռնել է իւր երգի պոչից և նրանից
զատ ոչ գիտէ, ոչ էլ ուզում է ուրիշը գիտե-
նալ: Երգեցողութեան մէջ էլ, ինչպէս և գըլ-
խարկների որսորդութեան մէջ, առաջին տեղը
բռնում էր Տարտարէնը: Նրա առաւելու-
թիւնն այն էր, որ նա ինքը իւր սեպհական
երգը չունէր, այլ երգում էր բոլոր երգերն էլ:
այդ բոլորն էլ միտքով մտախոյս չէր ամ
մի Միտն թէ մարդ կ'ատեմ, եթէ կարողանաք
նրա բերանը բաց անել ու երգել տալ. վա-
ղուց անդէն սալօնական լաջողութիւններից
ձանձրացած մեր Տարապետից հերոսն աւելի
լաւ է համարում զբաղուել որսորդական գըր-
քերի ընթերցանութեամբ և կամ ժամանակ
անց կայնել քաղաքային ակմբում, քան թէ
դաշնամուրի առաջ կանգնած, երկու տարա-
կոնեան մոմի արանքում կանանց համար եր-
գեր երգել: Այդ երաժշտական զբաղմունք-
ները նա իւր արժանաւորութիւնից ստորեւ
համարում...:

1001
XIX

Չնայելով դրան՝ այսօր անայնիւրեք բե-
մըն-երբեմն, երբ երաժշտական երկայթնեք



էին լինում Բեգիւքէնների տանը, նա իբր թէ պատահամբ մտնում էր նրանց մօտ և երկար նագուհուզ անելուց յետոյ վերջապէս համաձայնում էր Բեգիւքէի մօր հետ Ռոբերտ Դեի նշանաւոր դուէտը երգել... Վայ նրան, ով բաղդ չէ ունեցել հանդիսատես լինել այդ չնաշխարհիկ երգեցողութեան... Ես եթէ որ հարիւր տարի էլ ապրելու լինիմ, դարձեալ կենդանի պէտք է լինի իմ առաջ Տարտարէնի այդ պատկերը. ահա հանդիսաւոր քայլերով մօտենում է նա դաշնամուրին, ահա յենվում է նա իւր յաղթական բազուկները վրայ, նրա դէմքի մկանունքները սկսում են շարժուել, և լուսամփոփների կանաչ լոյսի տակ նրա դէմքը աշխատում է ստանալ Ռոբերտ Դեի դիւական և դժոխային արտայայտութիւնը: Հազիւ թէ նա կանգնում է դաշնամուրի առաջ, և ահա մի սառսուռ անցնում է ամբողջ դահլիճով. ամենքը զգում են որ ընդմէջ հանդիսաւոր է և ահա մի շատ նշանաւոր բան պիտի կատարուի...:

Այն ժամանակ մի փոքր լուռութիւնից յետոյ տիկին Բեգիւքէն սկսում է նուագել և երգել.

Ռոբերտ, որին ես սիրում եմ,
Սիրտս ու հոգիս նուիրում եմ,
Սնդո՛ւթ, նայի՛ր, ցաւերըս տես,
Ո՛հ խրդճա ինձ, խրդճա և քեզ...:

Վերջին ձայնանիշն աւարտելով տիկինը ցած ձայնով աւերացնում էր „Տարտարէն, սկսեցէք“ . և ահա Տարասկօնցի Տարտարէնը բազուկները դէպի առաջ պարզած, բռունցքները սխմած, ռնգունքն ուռցրած, ահուելի ձայնով երեք անգամ որոտում էր „Non! non! non!“, որ նրա հարաւային առողանութեամբ դուրս էր գալիս „Nan! nan! nan!“, և այդ որոտմունքը նոյնպէս ահուելի կերպով անդրադառնում էր դաշնամուրի հնամաշ լարերից: Տիկին Բեգիւքէն նորից կրկնում էր.

Ո՛հ խրդճա ինձ, խրդճա և քեզ...:

Եւ Տարտարէնը կրկին որոտում էր.

„Nan! nan! nan!“ .

Նրանով էլ վերջանում էր նշանաւոր դուէտը. ինչպէս տեսնում էք երգածները մեծ բան չէր. բայց, Աստուած իմ, որքան հանդիսաւորութիւն, ինչ դիւական կերպարանափոխութիւն. և հէնց այդ էր պատճառը որ ամենքը սարսուռում էին և չորս-հինգ անգամ մէկ մէկի վրայ ստիպում էին նրան կրկնել իւր որոտալից „Nan! nan! nan!“-ը:

Այնուհետև Տարտարէնը ճակատը սրբում էր, շնորհաշուք կերպով ժպտում տիկիններին, տղամարդկանց աչքով անում և յաղթական զգացմունքով հեռանում էր ակումբ:

Բեզիւքէնքերի մօտ էի, — ասում էր նա այնտեղ ան-
հոգութեամբ, — ինչքան արի չարի չկարողացայ
ձեռքներիցը պրծնել. դարձեալ ստիպեցին Ռոբերտ
Դեւի դուէտը երգել: Գ. Տարցայս Գառա զիւր
մա Բայց ամենից զլիսուորն զայն է որ ինքն
էլ հաւատում էր իւր ստածին...:

նրանք:

Ահա այդ բազմատեսակ տաղանդների շնոր-
հիւն էր որ Տարասկօնցի Տարտարէնը մի այդ-
պիսի բարձր դիրք էր ստացել ամբողջ քաղա-
քում: Նա կարողացել էր միանգամայն զրաւել
ամենքի սիրտը: Տարասկօնի զինուորական բա-
նակն ամբողջապէս նրա կողմն էր: Քաջայաղթ
պաշտօնաթող հրամանատար Բրաւիդան նրան
անուանում էր „կտրիճ“: Քաղաքական իշ-
խանութիւնը նոյնպէս Տարտարէնի կողմն էր.
Ծերունի քաղաքազուխ Լադէւէզը երկու թէ
երեք անգամ նրա մասին խօսելիս ասել էր.
„այդ մարդը գլուխ ունի իւր ուսերի վրայ“:
Վերջապէս նոյն իսկ ամբողջ հասարակութիւնը
Տարտարէնի կողմն էր: Նրա լայն թիկունքը,

նրա սէզ քայլուածքը, նրա ամբողջ կերպա-
բանքը, որով նա նմանում էր մի անվեհեր երի-
վարի, նրա հերոսական համբաւը, որ Սատուած
գիտէ թէ որտեղից էր բարձրացել, և վերջապէս
նրա ցրուած կոպէկներն ու բռնցքի հարուած-
ները, որոնցով նա հիւ բասիրում էր իւր դռանը
թրև եկող փոքրիկ սավոյարներին, այդ ամենը
նրան դարձրել էին մի տեսակ անդակաւ լօրդ
Սէյմօր, մի տեղական փոքրիկ թագաւոր: Կիւ-
րակի երեկոները երբ նա իւր որսորդական բաժ-
կոնակի մէջ փաթթուած և զլխարկի կտորը
հրացանի ծայրին կախած վերադառնում էր քա-
ղաք, Ռոնի ափում խնուած նաւաստիները
խորին յարգանքով գլուխ էին տալիս նրան և
աչքի տակով մէկ-մէկու ցոյց տալով նրա թե-
ւերի հաստ մկանունքները զարմացմամբ փրս-
փրսում էին. — Այ կտրիճ մարդ, նրա մկանները
կրկնակի են“:

Կրկնակի մկաններ...: Սիմիան Տարասկօնում կարելի է այդ տե-
սակ բան լսել:

Սակայն չնայելով այդ ամենին, չնայելով
իւր բոզմակողմանի տաղանդներին, չնայելով
իւր կրկնակի մկաններին և վերջապէս չնայե-
լով ընդհանուր համակրութեան և պատուին,
այսուամենայնիւ Տարտարէնը երջանիկ չէր.

այդ փոքրիկ քաղաքը նրան չափազանց նեղ էր գալիս. նա ճնշվում, նա խեղդվում էր այդտեղ: Տարասկօնի մեծ զաւակը ձսնձրանում էր Տարասկօնում: Բանն այն է որ Տարտարէնի հերոսական հոգին, նրա արկածախնդիր բնաւորութիւնը, որ միշտ պատերազմներ, վտանգալէց որսորդութիւններ, աւազոտ անապատներ, փոթորիկներ ու սարսափներ էր երեւակայում, չէր կարող բաւականանալ այնպիսի չնչին զբաղմունքներով, ինչպէս էին կիւրակնօրեայ գտակների որսորդութիւնը և կամ զինավաճառ Կօստէկալդի խանութում դատաստան կտրելը: Խեղճ մեծ մարդ, այդ տեսակ կեանքն քնչպէս կարող է չմաշել քեզ նման հերոսին:

Չնայելով էր նա աշխատում իւր հորիզոնը լայնացնելու, կամ իւր ձանձրալի զբօսավայրերը մոռանալու համար շրջապատել իրան բաօբաբով և Աֆրիկայի այլ բուսականութեամբ. զուր էր նա լցնում իւր բնակարանը տեսակ-տեսակ զէնքերով և թուռաւոր նետերով. զուր էր նա անմահ Դօն-Քիշօտի նման զանազան սարսափալից գրուածների ընթերցանութեամբ ճգնում մոռացնել տալ իրան թշուառ և խեղճ իրականութիւնը...: Աւանդ, այդ ամենը ո՛չ միայն չէր կոտորում նրա արկածախնդրութեան ծարաւը, այլ ընդհակառակն աւելի էր վառում ու բոր-

բօքում: Այդ զէնքերի տեսքն աւելի ևս զըրգում էր նրան. այդ հրացանները, նետերը, դաշոյնները կարծես չորս կողմից անդադար աղաղակում էին «պատերազմ, պատերազմ»: Նրա բաօբաբի ճիւղերի արանքից կարծես անդադար փչում էին մեծամեծ ճանապարհորդութիւնների քամիները և մղում էին նրան Տարասկօնից հեռու, հեռու: Մնացածն էլ լրացնում էին Գուպտաւ Էմարը և Փենիմօր Կուպէրը...:

Ո՛հ, քանի՛քանի անգամ ամառուայ տաք միջօրէններից յետոյ, երբ նա իւր զէնքերով շրջապատուած միայնակ պարապում էր ընթերցանութեամբ, որոտընդոստ վեր է թռել տեղից, գիրքը մի կողմը շարտել և վազել դէպի պատից կախ արած սպառազինութիւնները...:

Խեղճ մարդ. նա մոռանում էր որ Տարասկօնումն է, իւր տանը նստած, գլուխը լաթով փափաթած, մի շապկով և անդրավարտիկով. իւր կարդացածը նա իսկօյն ուզում էր գործադրել և ինքը իւր սեպհական ձայնով ողերուած, մի կացին կամ մի նիզակ ձեռքին ձօճելով աղաղակում էր.

„Հապա՛, թող առաջ դուրս գան նրանք“:

Նրանք. բայց ո՞վքեր են նրանք:

Տարտարէնն ինքն էլ լաւ չգիտէր թէ ո՞վքեր են նրանք:

Տնից դուրս գալուց առաջ նա իւր սե-
նեակում միքսանի ըոպէ դեռ վարժվում էր,
նշան էր բռնում, մարմնամարզական այլևայլ
շարժումներ էր անում, յետոյ բանալիքը ձգում
էր գրպանը և սիգարճեմ ու հանգարտ քայլե-
րով անցնում էր պարտէզից:— Անգլիացու նման,
պարոններ, անգլիացու նման. պաղարիւնու-
թիւնը քաջութեան առաջին նշանն է: Հաս-
նելով պարտէզի ծայրը նա ձեռքը տանում էր
երկաթեայ ծանր դռանը և այնպէս յանկար-
ծակի ու մէկ-անգամից բաց էր անում դուռը,
որ կարծես դռան ետևում թշնամիներ կային
պահուրտած: Ա՛յ, եթէ նրանք դռան ետևում
լինէին, ողջ ոսկորները ջարդուփշուր կըլի-
նէր: Բայց աւանդ, դժբաղդաբար ո՛չ մի ան-
գամ նրանք այնտեղ չէին հանդիպում...:

Իուրը բացուելուց յետոյ Տարտարէնը մի
ոտը դուրս գրած մի սուր ակնարկ էր ձգում
դէպի աջ և դէպի ձախ. յետոյ նոյն արագու-
թեամբ դուռը կողպում էր և ճանապարհ ընկ-
նում:

Հպարտ և հանգարտ քայլերով ընթանում
էր Տարասկօնցի Տարտարէնը քաղաքի լուռ ու
մուռն փողոցներով. գիշերուայ մթութեան մէջ
լսվում էին միայն նրա ներդաշնակ քայլերը և
ձեռնափայտի հարուածները, որոնցով նա կայ-

ծեր էր հանում փողոցի սալերից: Տարտարէնը
մի լաւ սովորութիւն ունէր որ միշտ փողոցի
մէջտեղով էր ընթանում. այդ բանը նա ա-
նում էր ի հարկէ ոչ թէ երկիւղի այլ միմիայն
զգուշութեան համար...:

Ամենալաւ սպացոյցը որ Տարտարէնն ա-
նեղիւղ էր, այդ այն է որ նա փոխանակ ու-
ղիղ ու կարճ ճանապարհով ժողովարան գնա-
լու, միշտ ծռվում էր ամենանեղ և ամենա-
մութ փողոցները և այդպիսով ճանապարհը
երկարացնում համարեա ամբողջ քաղաքի
միջով: Խեղճ մարդը միշտ սպասում էր որ ա-
հա այդ ծուռ փողոցներից մէկի անկիւնում,
գիշերուայ խաւարի միջից նրանք յարձակումն
կըզործեն իւր վրայ: Գլուխս կըտամ որ նրան-
ցից ոչ մէկը ողջ չէր պրծնիլ մեր հերոսի ձեռ-
քից, բայց արի ու տես որ անողորմ բաղդը
երբէք, ոչ մի անգամ չէր արժանացնում նը-
րան իւր ցանկացած հանդիպման: Ամբողջ ճա-
նապարհի վրայ մի շուն, մի հարբած մարդ
անգամ չէր հանդիպում. մի խօսքով ո՛չ եր-
բէք և ո՛չ ո՛ք...:

Սակայն երբեմն տեղի էին ունենում այս-
պիսի դիպուածներ. յանկարծ նրա ականջին
դիպում էին քայլերի և խօսակցութեան ձայ-
ներ... „Ուշագրութիւն“, ասում էր Տարտա-

բէնն ինքնիրան, ու կանգ առնելով, շունչը
 փորը ձգած կռանում ու ականջը կպցնում
 էր զետնին, ինչպէս որ անում են Ամերիկայի
 հնդիկները: Քայներն աւելի և աւելի մօտենում
 են. խօսակցութեան ձայներն աւելի պարզվում
 են...: Այլ ևս տարակոյս չի կարող լինել, որ
 նրանք մօտենում են, որ եկողները նրանք են...:
 Տարտարէնն արդէն աչքերը կրակ կտրած, կուրծ-
 քը ամբօխուած, յովազի նման ինքնիրան քա-
 շուած, հէնց այն է որ կամենում էր լետ գառնալ և
 ահռելի յարձակումն գործել, մէկ էլ յանկարծ
 ստուերի արանքից մի մեղմ ու բարի ձայն կան-
 ջում էր:
 „Օ, այդ դ՛ու ես Տարտարէն... բարի գի-
 շեր, բարեկամ“: Անէծք, հազար անէծք:
 Բանից դուրս էր գալիս որ եկողը զեղավաճառ
 Բեզիւքէն է, որ իւր ընտանիքով վերադառ-
 նում էր Կօստէկալդի մօտից: Այնտեղ հաւա-
 քուել էին իրանց երգերը երգելու:
 „Բարի գիշեր. — լոյս բարի“, — մըթմըթում
 էր հիասթափուած Տարտարէնը և կատաղած,
 ձեռնափայտը վեր բարձրացրած խորասուզ-
 վում էր գիշերային մթութեան մէջ:
 Հասնելով ժողովարանի գռան, անվեհեր
 Տարասկօնցին, դեռ միքանի ըսպէ ներս չէր մըտ-
 նում, այլ դռան մօտ լետ ու առաջ ման էր

գալիս...: Վերջապէս զաղարելով նրանց սպա-
 սելուց և համոզուելով որ նրանք այլևս չեն
 երևալ, նա մի վերջին սուր ակնարկ էր ձը-
 դում մթութեան մէջ և բարկացած ձայնով
 մոնջում. „Ո՛չ ոք... ո՛չ ոք... ո՛չ ոք... և ո՛չ
 երբէք“:
 Այդ ատելով քաջամարտիկ Տարասկօնցին
 մտնում էր ներս և սկսում էր իւր սովորական
 թղթախաղը պաշտօնաթող հրամանատարի հետ:
 Երկու Տարտարէնները:
 Բայց ինչինչն է որ Տարասկօնցի Տարտարէնը,
 չնայելով նրա անսահման սիրոյն դէպի ճանա-
 պարհորդութիւնները, այնուամենայնիւ դեռ
 ոչ մի անգամ ոտքը Տարասկօնցի դուրս չի դրել:
 Այդ մի ճշմարիտ փաստ է որ մինչև
 քառասունուհինգ տարեկան հասակը մեր
 անվեհեր Տարասկօնցին իւր ծննդավայրից
 դուրս ո՛չ մի տեղ դեռ չէ գիշերել: Նա մինչև
 անգամ չէ եղել Մարսէլլում, թէև Մարսէլլ
 գնալը մի տեսակ պարտք է ամեն մի զաւա-
 ռացու համար: Նա չէ ճանաչում նոյն իսկ
 Բօկէրը. թէև Բօկէր գնալու համար հարկա-

ւոր է միայն մի կամուրջ անցնել. բայց այդ անիծած կամուրջն էլ այնքան երկայն և մի-
 ևնոյն ժամանակ այնքան խախուռ, գետն
 էլ այդտեղում այնքան լայն և խոր է, որ
 գիտէք... Տարտարէնն աւելի լաւ էր համա-
 բուժման գալ հաստատ հողի վրայ:

Բայց եթէ ցանկանում էք բանի իսկա-
 կան պատճառն իմանալ, թող տուէք վերջապէս
 խոստովանել, որ մեր հերոսի մէջ ապրում է-
 ին երկու իրարից բոլորովին տարբեր մարդիկ:
 «Ես զգում եմ իմ մէջ երկու անձնաւորու-
 թիւն».—ասում է եկեղեցու սուրբ հայրերից
 մէկը. միւսն ունի կարող էր ասել և Տարտարէնը,
 որ կրում էր իւր մէջ երեւելի ասպետ Դօն-
 Քիշօտին՝ նրա ասպետական ձգտումներով,
 նրա զիւցագնական իդէալով, նրա խելա-
 գարութեան հասնող վիպական արկածասի-
 բութեամբ. դժբաղդաբար բնութիւնը չէր
 տուել Տարտարէնին չնաշխարհիկ ասպետի
 նիհար և ոսկրոտ կազմուածքը, որի դէմ ան-
 զօր էին նիւթական կեանքի զրկանքները, որ
 կարող էր քսան օր քսան գիշեր առանց
 հանուելու պառկել չոր գետնի վրայ և որ քա-
 ռասուենութ ժամուայ ընթացքում կարող
 էր բաւականանալ միայն մի բուռը չոր բլրն-
 ձով... իսկ Տարտարէնն ընդհակառակը բոլորո-

վին այլ կազմուածքի տէր մարդ էր. նրա մար-
 մինը շատ գէր էր, շատ ծանր, շատ զգայուն,
 շատ փափուկ ու քնքուշ, սովորած ընտանե-
 կան բազմատեսակ դիւրութիւններին. մի խօս-
 քով նա մի հաստիկ ու կլորիկ մարդ էր, ան-
 մահ Սանխօ-Պանչօյի կարճիկ ոտերի վրայ
 կազնած:

Դօն-Քիշօտը և Սանխօ-Պանչօն միւսն ունի
 անձնաւորութեան մէջ միաւորուած, — հա
 Տարտարէնի իսկական պատկերը: Դժուար չէ
 երեւակայել թէ ինչքան հաշտ պիտի ապրէին
 այդ երկուսը միւսն ունի յարկի տակ: Ինչ պա-
 տերազմ, ինչ երկպառակութիւն: Լիւսիէնի
 կամ սուրբ Եւրեմօնի գրիչն է հարկաւոր նը-
 կարագրելու համար այն տեսարանները, որոնք
 տեղի էին ունենում երկու Տարտարէնների—
 Տարտարէն-Քիշօտի և Տարտարէն-Սանխօյի մէջ:

Տարտարէն-Քիշօտը ոգևորուած Գուստաւ
 Էմարի պատմութիւններով, գոռում էր.—Ես
 գնում եմ:

Տարտարէն-Սանխօն ցրտից ու մրսելուց
 սարսափած պատասխանում էր.—Ես մնում
 եմ:

Տարտարէն-Քիշօտը սաստիկ ոգևորուած.
 —Տարտարէն, ծածկիր ճակատդ յաղթութեան
 և փառքի պսակով:

— ցան Տարտարէն-Սանխօն քոլորովին հան-
 դարտ. քր. ասաց. ցամած ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Տարտարէն, ծածկիր գլուխդ լաթով,
 կըմբսն: Գլխովդ քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Տարտարէն-Քիշտուն աւելի քան աւելի
 ոգևորուելով. քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.

— Ինչ սքանչելի երկհարուածեան հրացան-
 ներ, ինչ թրեր ու սրեր, նետեր ու աղեղներ:
 — Տարտարէն-Սանխօն աւելի քան աւելի հան-
 դարտութեամբ. քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Ինչ հիանալի բրդեալ բաճկոճկներ, ինչ
 տաք գունդաներ, ինչ փափուկ գլխարկներ:

— Տարտարէն-Քիշտուն քոլորովին կատա-
 ղած. քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Կացին, մի կացին տղէք, մի կացին...:
 — Տարտարէն-Սանխօն աղախնին ձայն
 տալով, քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Ժանէթ, շօկօլադս տուր:

— Եւ ահա ժանէթը ներս էր մտնում տաք,
 անուշահամ և անուշահոտ շօկօլադը ձեռին,
 շոգին վրայից բարձրանալով, քաղցրահամ պաք-
 սիմաններն էլ կողքին: Տարտարէն-Սանխօն
 բաւականութեան ժպիտը երեսին սկսում էր
 հըռ-հըռ ծիծաղել և այդ ծիծաղի ձայնը խեղ-
 դում էր Տարտարէն-Քիշտուն բարկութեան ա-
 ղաղակը:

— Ահա թէ ինչն էր արգելում մեր քաջա-
 սիրտ հեղոսին ոտը Տարասկօնից դուրս դնել:
 — մտածեցա՞ք. մի՞շտ ևս ինչպէ՞ս պիտի ընդհանրեմ
 ևս ինչպէ՞ս միտեմ միտեմ. ևս ոտը ինչպէ՞ս պիտի
 — ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Եւ արգելում էր մտածելու, որ
 էրոպացիները ընդ-հայում: Բարձր վաճառականութիւն
 թափարներ: Մի՞թէ Տարասկօնից Տարտարէնը ստախօս
 է: Միրած:

— Սաղայն մի անգամ քիչ էր մնացել որ
 Տարտարէնը հեռանար, այն էլ մի շատ
 հեռաւոր ճանապարհ: Գլխով քր. ասաց. ցմ. ցմ. քր. ասաց. ցմ. ցմ.
 — Երեք տարասկօնցի եղբայրներ, որոնք
 հաստատուած էին Մանգ-Հայում, նրան առա-
 ջարկում էին կառավարիչ լինել իրանց այնտեղի
 հաշուետներին մէկում: Այդ առաջարկութիւ-
 նը պէտք է որ Տարտարէնի սրտովը լինէր—
 ընդարձակ գործունէութիւն, գործակատարնե-
 րի մի ամբողջ բանակ, մշտական յարաբերու-
 թիւն Ռուսաստանի, Պարսկաստանի և Ասիա-
 կան Թիւրքիայի հետ և վերջապէս բարձր վա-
 ճառականութիւն:

— Այդ ըստով վաճառականութիւն խօսքը Տար-
 տարէնն այնպէս էր արտասանում, որ մարդ ալա-
 մալ աչքերը բարձրացնում էր դէպի երկինք...:
 — Մի ուրիշ բան էլ կար որ պէտքէ իսկա-

պէս շատ հրապուրիչ լինէր Տարտարէնի համար: Ստում էին, որ տարին միքանի անգամ թաթարները յարձակվում էին հաշուետան վրայ: Սյգ դէպքում դռներն իսկոյն փակում էին, բոլոր գործակատարները գէնք էին վերցնում, հիւպատոսական դրօշակը պարզում և պատուհաններից բամբ-բամբ սկսում էին կրակ տալ թաթարներին...:

Աւերորդ է ասել թէ ինչպիսի ոգևորութեամբ Տարտարէն-Քիշօտը կաւաւայդ առաջարկութեան բայց դժբաղդաբար Տարտարէն-Սանխօն ուրիշ կերպ էր նայում գործին, և որովհետեւ այդ վերջինի ձայնն աւելի զօրաւոր էր, ուստի և գործը գլուխ չեկաւ: Տարտարէնի գնալը ողջ քաղաքի բերնում խօսակցութեան առարկայ էր դարձել: Կըզնայ թէ չի գնալ, գրազ եմ գալիս որ կըզնայ, ասում էր մէկը, իսկ ես գրազ եմ գալիս որ չի գնալ, պնդում էր միւսը...: Տարտարէնը վերջիվերջոյ չգնաց, բայց ճնայելով դրան այդ դէպքը մեծապէս նպաստեց նրա պատուի բարձրանալուն: Շանգ-Հայ գնալու մտադրութիւն ունենալ և կամ թէ արդէն գնացած լինել այդ միւսնոյն բանն էր տարասկօնցիների համար: Տարտարէնի գնալու մասին այնքան երկար խօսեցին, որ վերջապէս իրանք ևս սկսեցին հաւատալ որ իբր թէ

նա արդէն գնացել ու վերադարձել է: Այնուհետև շատ անգամ ժողովարանում տարասկօնցի պարոններն ամենալուրջ կերպով տեղեկութիւններ էին հարցնում նրանից Շանգ-Հայի, նրա սովորութիւնների, կլիմայի, օպիումի և վաճառականութեան մասին:

Տարտարէնն էլ, որ շատ կարգացած և տեղեկ էր, նոյնպէս լուրջ կերպով պատասխանում էր այդ բոլոր հարցերին և հաղորդում էր ամենամանրամասն տեղեկութիւններ: Բանը վերջացաւ նրանով որ մեր բարեմիտ հերոսը ինքն էլ սկսեց հաւատալ իւր Շանգ-Հայում եղած լինել և երբ արդէն հարիւրերորդ անգամն էր որ պատմում էր թաթարների յարձակումների մասին, նա միանգամայն անկեղծ կերպով աւելացրեց. «Այն ժամանակ բոլոր գործակատարներիս ղէնք բաժանեցի, հիւպատոսական դրօշակը պարզեցի և պատուհաններից բամբ-բամբ սկսեցինք կրակ տալ թաթարներին»: Սյգ բանը նկարագրելիս ամբողջ ժողովարանը ստոսափած սկսում էր հեծկկալ...:

— Ուրեմն ձեր Տարտարէնը մի անամօթ ստախօս էր:

— Ո՛չ, քսւ լիցի. Տարտարէնը ստախօս չէր:

— Եթէ ստախօս չէր, հասկա մթթէ չգիտէր որ ինքն ամենեւին Շանգ-Հայում չէ եղել:

— Ի հարկէ գիտէր, միայն թէ...
 Միայն թէ խնդրեմ լաւ լսէք հետեւեալը։
 Արդէն ժամանակ է որ մի անգամ ընդմիջտ
 պարզենք թէ ինչու՞մ է կայանում հարաւա-
 յին ժողովրդի ստախօսութիւնը, որի մէջ այն-
 քան բամբասում են նրանց։ Հարաւի ժողո-
 վուրդը խաբեբայ չէ. նրանք չեն խաբում, այլ
 թէ չափազանց յավիշտակվում են։ Նրանց
 ասածը միշտ էլ ճշմարիտ չէ, միայն թէ նրանք
 այնպէս են կարծում, որ ճշմարիտ է... նրանց
 ստախօսութիւնը ստախօսութիւն չէ, այլ մի
 տեսակ միրաժ...։

Այո՛, մի կատարեալ միրաժ։ Եղէք մի ան-
 գամ հարաւում և այն ժամանակ դուք լաւ
 կըհասկանաք թէ ինչ եմ ուզում ասել։ Դուք
 ինքներդ կընկատէք որ այդ օրհնուած աշխար-
 հում արեւն ամեն բան կարծէք կերպարանա-
 փոխում և աւելի մեծ է ցոյց տալիս քան թէ
 է իսկապէս։ Դուք կընկատէք որ այդ աշխարհի
 փոքրիկ բլրակները ձեր աչքում մի-մի հսկայ
 լեռներ են դառնում, հասարակ տները Փարի-
 զի մայր-եկեղեցուց մեծ են թվում... մի
 խօսքով եթէ հարաւումը ստախօս կայ, այդ
 միակ ստախօսը արեւն է... ինչ բանի որ նա
 դիպչում է, այդ բանը ձեր աչքում աճում ու
 մեծանում է...։ Ասացէք խնդրեմ ինչո՞ւ այն

փոքրիկ Սպարտան, որ իսկապէս մի գիւղաքա-
 ղաք էր, կամ այն Աթէնքը, որ իւր ամենա-
 ծաղկած ժամանակ հազիւ թէ այժմեան մի
 գաւառտիկան քաղաքի չափ է եղել, այնքան
 մեծ, այնքան ընդարձակ է երևում մեր աչքին
 պատմութեան մէջ։ Պատճառը այն չէ՞ որ նը-
 րանք էլ հարաւային քաղաքներ են եղել և լուսա-
 ւորուել են միևնոյն հարաւային արևի լուսով...։

Սրանից յետոյ այլևս թնչ զարմանալու
 բան կայ, որ միևնոյն արևի տակ գտնուող
 Տարասիօնում շողգամը բաօբաբ է դառնում և
 մի Շանգ-Հայ գնալ ուզեցող մարդ, արդէն գը-
 նացած ու վերագարձած է համարվում։

Միտէ՛նի գազանանոցը։ Ատրասիան լեռների առիժը Տա-
 րասիօնում։ Ահուկի և փառահեղ տեսակցութիւն։

Այժմ երբ մենք նկարագրեցինք արդէն
 Տարասիօնցի Տարտարէնի մասնաւոր կեանքը
 իւր հայրենի քաղաքում, նրա ուրախութիւն-
 ները նրա վշտերը, նրա երագները և յոյսե-
 րը. երբ մենք ցոյց տուինք նրա կեանքի այն
 շրջանը, որ դեռ ևս չէր պսակել նրա ճակա-

տը անմահութեան և փառքի պսակով, ժամանակ է արդէն որ անցնենք նրա պատմութեան նշանաւոր էջերին և այն նշնաշխարհիկ դէպքերին, որից կախումն ունեցաւ նրա անօրինակ ճակատագիրը:

Մի երեկոյ, երբ զինավաճառ Կոստէկալզի մօտ հաւաքուածներին ճարտարէնը տաքտաք բացատրում և ցոյց էր տալիս ասեղնաւոր հրացանի գործածութիւնը, յանկարծ դուռը բացուեց և գլխաւորների որսորդներից մէկը գլուխը կորցրած ներս մտնելով աղաղակեց. « առիւծ... կենդանի առիւծ... » Մի ընդհանուր սարսափ, խռովութիւն և շփոթ տիրեց ամենքին: Ճարտարէնն իսկոյն ձեռքը տարաւ հրացանին, Կոստէկալզը վազ տուեց դուռը փակելու: Ամեն կողմից հարցուփորձ էր որ տեղում էր խեղճ որսորդի զլխին: Եւ ահա թէ բանից ինչ դուրս եկաւ. Միտէնի կենդանաբանական ժողովածուն, որ բաղկացած էր միքանի բօաններից, փոկերից, կոկորդիլոսներից և մի հատ գեղեցիկ Ատլասեան առիւծից, վերագառնալով Բօկէրի տօնավաճառից միքանի օրով կանգ էր առել Տարասկօնում:

Ատլասեան առիւծը Տարասկօնում. մինչև այդ օրը այդ մի չտեսնուած ու չլսուած բան էր Տարասկօնի համար: Դժուար չէ ե-

րևակայել մեր քաջասիրտ որսորդների ուրախութիւնը. նրանց առնական դէմքերը փայլում էին և նրանք լուռ կերպով շնորհաւորում էին մէկ-մէկու առիւծի գալուստը: Ամենքն այն աստիճանի զգացուած էին որ խօսք չէին գրանում իրանց զգացմունքն արտայայտելու համար...: Նոյն իսկ ճարտարէնը լուռ էր և մտալոյց: Երեսի գոյնը ձգած և սարսափահար, ասեղնաւոր հրացանը դեռ ևս ձեռքին բռնած դաքի վրայ կանգնել էր հաշուեանդանի մօտ և խորատուզուէլ ծանր մտքերի մէջ...: Ատլասեան առիւծը Տարասկօնում, իրանից երկու քալ հեռու: Մի կենդանի առիւծ. հանաք չէ ասելը. չէ որ առիւծը կենդանիներից ամենակատաղին է, զազանների թագաւորը, նրա վառ երազների նպատակը, ամենավտանգաւորը նրանցից, որոնց նա այնքան երկար ժամանակ և այնքան անհամբերութեամբ սպասում էր ամեն օր...:

Կենդանի առիւծ, Աստուած իմ, և այն էլ Ատլասեան լեռներից: Այդ արդէն չափազանց էր ճարտարէնի համար. նրա աչքերը փայլատակեցին, մի գողգոջուն շարժումով նա ձգեց ասեղնաւոր հրացանն ուսին և դիմելով քաջասիրտ հրամանատար Բրաւիդային, ո-

րոտա ձայն կանչեց. «Հապճ, զնանք տեսնենք
ինչ բան է, հրամանատար. . .»

Սյուստելով ճարտարէնը դուրս թռաւ
փողոց և նրա ետեւից էլ զլիարկներէ որսորդ-
ները: Երբ նրանք հասան կենդանիների տեղը,
այնտեղ արդէն ահագին բազմութիւն էր հա-
ւաքուել: Տարասկօսի քաջասիրտ ժողովուրդը,
որ շատ ժամանակից ի վեր առիթ չէր ունեցել
ներկայ լինելու մի այդպիսի տեսարանի, այժմ
գունդադունդ դիմում էր դէպի սլ. Միտէնի
գազանանոցը: Հաստիկ տիկին Միտէնն ուրա-
խութիւնից քիչ էր մնում երկինք թռչելու. . .
Սֆրիկական զգեստ հագած, ձեռքերը մինչև
արմուկները բաց և երկաթեայ ապարանջան-
ներով զարդարած, մի ձեռքին մի խարազան,
իսկ միւսումը մի կենդանի վառիկ բռնած, չը-
նաշխարհիկ տիկինն ընդունում էր հանդիսա-
տեսներին և իւր կերպարանքով ու հաստ մը-
կաններով նոյնպէս ազդում էր տարասկօնցինե-
ների վրայ ինչպէս և իւր գազան սաները:

Տարտարէնի գալուստը, այն էլ հրացանը
ուսին դրած, սարսափ ձգեց բոլոր ներկայ ե-
ղողների վրայ: Սյուստելով մարդիկը, որոնք
հանդարտ սրտով զբօսնում էին վանդակների
առաջ առանց զէնքի, բոլորովին միամիտ, ո-

չինչ չմտածելով որեւիցէ վտանգի մասին, լան-
կարծ մի բնական սարսուռ զգացին, երբ Տար-
տարէնը՝ ահռելի զէնքն ուսին ներս մտաւ:
Ուրեմն վախենալու բան կայ, որ նրանց մեծ
հերոսն այդպէս զինուորուել է. . . Մի ակնթար-
թում վանդակների առաջը դատարկուեց: Երե-
խաները վախից լաց էին լինում, տիկիները
դիմում էին դէպի դռները: Դեղավաճառ Բե-
գիւքէն անմիջապէս փախուստ տուեց, սրտածառ
բերելով որ զնում է հրացանի ետեւից. . .

Սակայն Տարտարէնի դէմքը փոքր առ փո-
քրը սկսեց սիրտ տալ վախկոտներին: Հանդարտ
ու վեհ, զլուրը բարձր բռնած, անվեհեր Տա-
րտարէնցին սկսեց իւր այցելութիւնը. . . առանց
կանգ առնելու անցաւ նա ջրային գազանների
աւազանի մօտով, մի արհամարհական հա-
յեացք ձգեց դէպի բօսաների և այլ սողունների
պահարանը և վերջապէս եկաւ ու կանգ ա-
ռաւ առիւծի վանդակի առաջ. . .

Սահեղ և փառահեղ տեսակցութիւն.
Տարտարէնի առիւծը և Ստլաստան լեռների ա-
ռիւծը դէմ լանդիման կանգնած. . . Մի կողմից
Տարտարէնը՝ ոտքի մէկն առաջ իսկ միւսը լեռ
դրած ամուր լենուել է հրացանի ծայրին, իսկ
միւս կողմից մի հսկայ առիւծ, արքայական
բաշով զարդարուած, փռուել է յարդի վրայ և

փառահանգ գլուխը հանգստացրել առաջի երկու
թաթերի մէջ: Երկուսի դէմքն էլ վեհ է և
հանդարտ, երկուսն էլ աչքերը ձգել են իրար
վրայ և մէկ-մէկու չափում են:

Եւ զարմահայլի բան: Առիւծը, որ մինչև
այդ ժամանակ հանդարտ իւր տեղը պառկած
արհամարհանքով յօրանջում էր տարասկօնցի
հանդիսատեսների երեսին, յանկարծ մի բար-
կութեան շարժում արաւ. արդեօք ասեղնաւոր
հրացանի տեսքն ազդեց նրա վրայ, թէ նա
զգաց իւր արքայական զարմի ռիերիմ ախոյեա-
նի ներկայութիւնը: Նախ և առաջ նրա ուն-
գունքը լայնացան, մի լուռ մռնչիւն արձա-
կեց, ճիրանները պարզեց և թաթերը քաշեց
իրան. յետոյ նա վեր կացաւ ոտքի, գլուխը վեր
բարձրացրեց, փառաւոր բաշը թափահարեց,
ահագին բերանը բաց արաւ և սարսափելի ձայ-
նով մռնչաց ուղիղ Տարտարէնի երեսին...:

Մի սարսափի աղաղակ արձագանք տուեց նրան:
Խելքը կորցրած տարասկօնցիները վազեցին դէպի
դուռը: Թէ մարդ, թէ կին, թէ մանուկ, թէ
երիտասարդ և նոյն իսկ քաջասիրտ հրամանա-
տար Բրաւիդան, ամենքը փախուստ տուին...:
Միմիայն Տարտարէնը մնաց անշարժ. նա տեղից
չջարժուեց...: Նա հանդարտ և վճռողական
դէմքով արձանացել էր ահուելի զազանի առաջ.

նրա աչքերը փայտակում էին և կուրծքը
բարձրանում էր ու ցածանում: Փոքր ինչ ան-
ցած՝ երբ գլխարկների որսորդները նրա հան-
դարտ դէմքից և վանդակի երկաթեայ ձողերի
ամրութիւնից քաջալերուած կամաց-կամաց ըս-
կեցին մօտենալ իրանց պետին, նրանք պարզ
լսեցին որ Տարտարէնն աչքն առիւծի վրայ
սևեռելով արտասանեց.— Ահա իսկական որսը,
ես այդ հասկանում եմ...:

Այդ ամբողջ օրը Տարասկօնցի Տարտա-
րէնն այլևս ոչ մի բան չարտասանեց...:

Թ

Մի րոժի գարմանալի հետեւանքները:

Այդ ամբողջ օրը Տարասկօնցի Տարտարէ-
նը այլևս ոչ մի բառ չարտասանեց. բայց ինչ որ
ասել էր, այն էլ շատ ու շատ բաւական էր...:

Միւս օրը ամբողջ քաղաքում արդէն լուր
էր տարածուել որ Տարտարէնը միքանի օրից
յետոյ ուղևորվում է Ալժիր առիւծներ որսա-
լու: Դուք ամենքդ էլ վկայ էք, սիրելի ընթեր-
ցողներ, որ մեր անվեհեր հերոսն այդ մասին
շուրջ անգամ չէր հանել, բայց թնչ անես որ

անիծած մերաժը դարձեալ մէջ մտաւ...:

Մի խօսքով ամբողջ քաղաքի խօսակցութեան առարկան այդ մօտալուա ուղևորութիւնն էր:

Նուկայում, ժողովարանում, Կօստէկալդի խանութում ամենքը յուզուած մօտենում էին իրար և հարցնում.

— Գիտէ՞ք ի՞նչ նորութիւն...:

— Ի՞նչ նորութիւն պիտի լինի. Տարտարէնի գնալը մեզ վաղուց արդէն յայտնի է...:

Միակ մարդը Տարտարէնն էր որ զարմացաւ, երբ լսեց թէ ինքը շուտով պիտի ուղևորուի Աֆրիկա: Բայց նայեցէք մարդու փառասիրութեան, որ փոխանակ այդ լուրը հերքելու և պարզ կերպով պատասխանելու որ ինքը ամենեւին մտադրութիւն չունի Տարասկօնից հեռանալու, առաջին անգամ երբ այդ մասին դիմեցին իրան, նա անորս լեբով պատասխանեց.

— ձմարիտ ես ինքս էլ չգիտեմ...:

Երկրորդ անգամ արդէն միքիչ աւելի ընտելանալով այդ մտքի հետ, նա յայտնեց որ «շատ հաւանական է». իսկ երրորդ անգամ թէ «այդ հարցը վճռուած է»:

Վերջապէս մի երեկոյ ժողովարանում և Կօստէկալդի մօտ մի թեթև կերուխումից յե-

տայ, յափշտակուած այն յաջողութիւնից, որ նրա ուղևորութեան լուրը ունեցել էր ամբողջ քաղաքում, Տարտարէնը հանդիսաւոր և պաշտօնական կերպով յայտնեց որ արդէն ձանձրացել է գլխարկների որսորդութիւնից և որ կարճ միջոցից յետոյ պէտք է ուղևորուի Ստասեան լեռներն առիւծներ որսալու...:

Նրա յայտարարութիւնն ընդունուեց բուռն ոգևորութեամբ և կեցցէների աղաղակներով: Բաժակները նորից լցուեցան և սկսուեց մի հարգիսաւոր թափօր և երաժշտութիւն և բաօբաբի համեստ տնակի առաջ ցօյցը տեւեց մինչև կեսգիշեր...:

Սյդ բոլոր դէպքը տակնուվրայ արաւ խեղճ Տարտարէն-Սանխօի սիրտը: Աֆրիկա ուղևորուելու և առիւծներ որսալու միտքն առաջուց արդէն անհնարին սարսափ էր ազգում նրա վրայ, և մինչդեռ պատուհանների տակ թնդում էին քաղաքացիների ոգևորուած աղաղակները, նա անկողնի մէջ պառկած սարսափելի յանդիմանութիւններ էր անում Տարտարէն-Քիշօտին, անուանելով նրան խելագար, ցնդուած, անզգօյշ, երիցս լիմար. մանրամասն կերպով նրա աչքի առաջն էր դնում այդ ուղևորութեան բոլոր վտանգները, փոթորիկներ-

ըր, ալէկոծութիւնները, տենդերը, հարինքը, սև ժանդախտը, և այլն և այլն...:

Զուր էր Տարտարէն-Քիշտը երգվում ու խոստանում որ զգոյշ կըլինի, տաք կըհագնուի, ամեն պատրաստութիւն և նախազգուշութիւն ձեռք կ'առնի. Տարտարէն-Սանխօն ոչինչ չէր ուզում լսել. նա տեսնում էր իրան արդէն առիւծների ճանկերի մէջ յօշոտուած, անապատի աւազների տակ թաղուած ինչպէս մի ժամանակ թաղուել էին Կամբիւս թագաւորի զօրքերը:--Տարտարէն-Քիշտը հազիւ հազ կարողացաւ նրան փոքր ինչ հանգստացնել, ցոյց տալով որ այդ ուղեորութիւնը դեռ ապագայի խնդիր է, որ դեռ ևս շտապելու բան չկայ և որ վերջապէս փառք Աստուծոյ նրանք դեռ ևս տանն են, իրանց սիրուն և տաք բընակարանում:

Յայտնի բան է որ այդ տեսակ ուղեորութիւնը մէկ օրուայ, երկու օրուայ բան չէ. հազար ու մի տեսակ պատրաստութիւններ են հարկաւոր: Մարդը հօ տեղափոխիկ թռչուն չէ որ վեր կենայ ու թռչի. գնալուց առաջ դեռ պէտք է մի լաւ մտածի իմանայ թէ ո՛ր է գնում...:

Այդ պատճառով էլ Տարասկօնցի հերոսը նախ և առաջ սկսեց ուսամնասիրել Ա.Ֆրիկեան

ճանապարհորդների գրուածները—Մուսգօ-Պարկի, Կայլէի, Լիվինգստօնի, Հանրի Ռիվէյրէի և ուրիշների երկասիրութիւնները:

Այդ ուսումնասիրութիւնը նրան ցոյց տուեց որ երեւելի ճանապարհորդները ճանապարհ ընկնելուց առաջ կանխապէս վարժվում էին տանել և՛ քաղց և՛ ծարաւ և՛ դադրածութիւն և հազար ու մի տեսակ վտանգներ: Տարտարէնը կամեցաւ հետևել նրանց օրինակին. այդ օրուանից սկսած նա կերակրվում էր հասարակ հացով և ջրով, մի կտոր էլ սխտոր, կամ սամիթ և կամ դափնեայ տերև ջրի մէջ ձգած: Ինչպէս տեսնում էք ծոմապահութիւնը շատ խիստ էր. հեշտ կարող էք երևակայել, թէ խեղճ Սանխօն ինչպէս էր երեսը թթուեցնում:

Բացի ծոմապահութիւնից Տարտարէնն ըսկսեց և մի շարք ուրիշ վարժութիւններ: Այսպէս օրինակ դադրածութեան սովորելու համար նա իւրաքանչիւր առաւօտ եօթ թէ ութ անգամ անընդհատ պտըտում էր քաղաքի շուրջը երբեմն արագ քայլերով, երբեմն վազելով, արմուկները կողքերին սխմած և երկու հատ փոքրիկ սպիտակ խճաքար բերանում, ինչպէս որ անում էին հին յոյները և հռոմայեցիները: Գիշերուայ ցրտին, մառախուղին և ցօղին սովորելու համար նա ամեն երեկոյ դուրս էր գա-

լիս սլարտէզ և հրացանն ուսին դրած, բաօ-
բաբի ետևում դարան մտած կանգնում էր
մինչև զիշերուայ ժամը տասը, տասնումէկը...:

Եւ վերջապէս քանի որ Միտէնի կենդա-
նաբանական ժողովածուն Տարասկօնումն էր,
ամեն զիշեր քաղաքացիները տուն դառնալիս
զիշերուայ մթութեան մէջ տեսնում էին մի
ահագին և խորհրդաւոր ստուեր, որ հանդարտ
քայլերով ճեմում էր գազանանոցի առաջ:

Այդ ստուերը Տարասկօնցի Տարտարէնն
էր, որ վարժվում էր զիշերուայ մթութեան
մէջ առանց վախենալու ականջ դնել առիւծի
մռնչալուն...:

Ժ

Ուղեւորութիւնից առաջ:

Մինչդեռ Տարտարէնն զբաղուած էր այդ
հերոսական վարժութիւններով, ամբողջ Տա-
րասկօնն ականգէտ նայում էր նրան: Գլխարկ-
ների որսորդութիւնը և ընտանեկան երաժըշ-
տութիւնը մոռացութեան էին տրուել: Բեզիւ-
քէի դաշնամուրը կանաչ ծածկոցի տակ թա-
ղուել էր փոշու թանձր խաւով և սասկո-
տած ճանճերով, որոնք փորները վեր բարձրա-

ցրած վայր էին թափուած: Տարտարէնի ուղե-
ւորութեան պատճառով ամեն ինչ առ կախ էր
մնացել...:

Իսկ նրա յաջողութիւնը Տարասկօնի սարն-
ներում միանգամայն աննկարագրելի է: Նրան
խլում, գողանում էին մէկ-մէկու ձեռից. նրա
ներկայութիւնը բաղդաւորութիւն և պատիւ
էին համարում իրանց յարկի համար: Տիկին-
ներն իրանց երջանիկ էին համարում, եթէ Տար-
տարէնի թւը մտած գնում էին Միտէնի գա-
զանանոցը և լսում էին նրա բացատրութիւն-
ներն առիւծների որսորդութեան մասին. նա
բացատրում էր թէ որտեղ են որսում գազան-
ներին, ինչպէս պէտք է դարան մտնել. քանի
քալ հեռաւորութիւնից հարկաւոր է նշան
բռնել, ինչ վտանգներ կարող են պատահել,
և այլն և այլն:

Տարտարէնն ամեն տեսակ տեղեկութիւն կա-
րող էր հաղորդել, որովհետև ուսումնասիրել էր
ժիւլ-ժէրարի գիրքը և այնպէս լաւ տեղեակ էր
տալիւծի որսորդութեան, որ կարճես թէ ամբողջ
կեանքն այդ բանումն էր անց կացրել. ուստի
և նրա նկարագրութիւնը շատ կենդանի և ճար-
տար էր դուրս գալիս:

Բայց նրա ճարտարախօսութիւնն աննման
էր դառնում այն երեկոյթներում, որոնք տեղի

էին ունենում քաղաքապետ Լադէւէզի կամ հրամանատար Բրաւիդայի տանը. երբօր սուրճը ներս էին բերում, աթոռները մօտենում էին իրար և սկսվում էր սպազայ որսորդութիւնների մասին խօսակցութիւնը...:

Ս.յն ժամանակ արմուկները փոռօցի վրայ յենած, քիթը համարեա բաժակի մէջ խրած, մեր հերոսը յուզուած ձայնով սկսում էր նկարագրել այն բոլոր վտանգները, որ սպասում էին նրան այնտեղ: Նա պատմում էր անվերջ դարանակալութիւնները անլուսին մութ գիշերուայ ժամանակ, նկարագրում էր ժանտահոտ ճահիճները, թունաւոր բոյսերով թունաւորուած գետերը, լեռների սառօյցները և անապատի սօթը, կարիճները, և մորեխների տեղատարափը. նա նկարագրում էր նմանապէս Ատլասեան առիւծների կեանքը, նրանց որսալու միջոցները, նրանց տարօրինակ ոյժը և կատաղութիւնը կռուի ժամանակ:

Յետոյ ինքը իւր նկարագրութիւններով ողևորուած, բարձրանում էր ոտքի, ցատկում էր դահլճի մէջտեղը և սկսում էր կամ առիւծի նման մռնչել, կամ հրացանի նման որոտալ և կամ վրճ-վրճ թռչող գնտակների ձայներ հանել, զանազան շարժուածներ գործել, ոռնալ, աթոռները վերուվայր տապալել...:

Հիւրերը սարսափից դեղնում էին. տղամարդիկ նայում էին իրար երեսի և չլուխները թափ էին տալիս, տիկիներն աչքները փակում և ճիչ էին արձակում, ծերունիները միռուքնին տմբտմբացնում, իսկ հարևան սենեակում երեխաները քնատեղից զարթնելով սկսում էին լաց լինել և՛ մայրիկ, մայրիկ, կանչել...:

Սակայն չնայելով այդ ամենին Տարտարէնը դեռ ևս պինդ նստած էր Տարասկօնում և տեղից չէր շարժվում:

ԺԱ

Սրով կռուեցէք, պարոններ, սրով եւ ոչ թէ գնդասեղով:

Սրդեօք Տարտարէնը իսկ և իսկ մտադէր էր ուղևորուելու թէ ոչ...: Ահա մի փափուկ խնգիր, որին Տարտարէնի պատմագիրը դժուար թէ կարողանար մի դրական պատասխան տալ...:

Ճշմարիտն այս է միայն որ Միտէնի դազանները երեք ամիս էր արդէն որ հեռացել էին Տարասկօնից, իսկ առիւծների որսորդը դեռ ևս պինդ նստած էր իւր տեղում...: Շատ կարելի է նմանապէս որ մեր միամիտ հերոսը՝ մի նոր միրաժով կուրացած կարծում էր որ արդէն զնացել է Սլփիը և կրկին յետ դարձել: Շատ

կարելի է որ նա իւր անպագայ որսորդութիւնները սլատմելով, երևակայում էր որ արդէն կատարել է, ինչպէս որ բոլորովին անկեղծ կերպով երևակայում էր որ եղել է Շանգ-Ղայում, պարզել է հիւպատոսական դրօշակը և պատուհաններից հը՛ռ-վը՛ռ կրակ է տուել թաթարներին:

Բայց դժբաղդաբար եթէ այդ անգամ ևս Տարտարէնը միրաթի զոհ էր եղել, տարասիրօցիները չէին եղել: Երեք ամիս սպասելուց յետոյ, երբոր տեսան որ նա տեղից չէ շարժվում, սկսեցին կամաց-կամաց քրթմնջել:

— Այդ էլ Շանգ-Ղայ գնալու բանը դարձաւ, ասաց մի օր Կոստէկալդը մի խորհրդաւոր ժպիտ երեսին, և այդ խօսքերը մի բոսպետում տարածուեցին ամբողջ քաղաքում. ամենքն սկսեցին թերահաւատել Տարտարէնի վրայ:

Միամիտները, վախկոտները և Բեգիւքէի նման մարդիկը, որոնք մի լուից էլ վախենում էին և որոնք առանց աչքները փակելու չէին կարող հրացան արձակել, այդ տեսակներն աւելի ևս անողորմ էին: Ժողովարանում, հրապարակի վրայ, ամեն տեղ նրանք մօտենում էին խեղճ Տարտարէնին և մի արհամարհական ձայնով հարցնում էին.

— Ի՛հ, ասա տեսնենք ի՛նչ եղաւ գնալը: Կոստէկալդի խանութում նրա ձայնին էլ

մտիկ տուող չկար. զլխարկի որսորդներն ուրանում էին իրանց պետին:

Յետոյ սկսեցին արդէն զանազան փոխաբերական երգեր հնարել: Քաղաքագլուխ Լարգէէզը, որ իւր ազատ ժամերը մէկ-մէկ նուիրում էր մուսաներին, տեղական լեզուով մի երգ յօրինեց, որ մեծ ընդունելութիւն գրտաւ: Այդ երգի մէջ լիշվում էր մի պարոն փերպէ, որի ահռելի հրացանը պիտի բնաջինջ անէր Աֆրիկայի բոլոր առիւծներին: Դժբաղդաբար այդ անիծած հրացանը մի այնպիսի կազմութիւն ունէր որ անդադար լցվում էր, ըայց տեղից չէր շարժվում:

Նա տեղից ամենեւին չէր շարժվում, դուք ի հարկէ հասկանում էք այդ կծու այլաբանութիւնը...:

Կարճ միջոցում այդ երգը դարձաւ վերին աստիճանի ժողովրդական և երբ Տարտարէնն անցնում էր փողոցով կամ գետի ափով, մանուկներն ու նաւաստիները նրա ետեւից խմբովին երգում էին.

Lou fusiou de mestre Gervai
 Toujou lou cargon, toujou lou cargon.
 Lou fusiou de mestr Gervai
 Toujou lou cargon, part jamaï.—

(Պարոն ժերվէի հրացանը միշտ լցվում է, միշտ լցվում է. պարոն ժերվէի հրացանը միշտ լցվում է, բայց երբէք չէ շարժվում):

Միայն թէ այդ բանը երգում էին հեռուից, որովհետեւ Տարտարէնի կրկնակի մկաններն այսուամենայնիւ ահռելի էին:

Ո՛վ Տարասկօնեան դիւրափոփոխ բնաւորութիւն...:

Մեծն Տարտարէնն այնպէս էր ձևացնում որ ոչինչ չէ տեսնում, ոչինչ չէ լսում. սակայն այդ խուլ և թունալից կռիւը խորը կերպով խոցոտում էր նրա սիրտը. նա զգում էր որ Տարասկօնը դուրս է պրծնում իւր ձեռքի տակից, ժողովրդի համակրութիւնն անցնում է ուրիշներին. և այդ բանը սարսափելի կերպով տանջում էր նրան:

Սակայն չնայելով այդ տանջանքին, Տարտարէնը դեռ ևս ժպտում էր և այնպէս էր պահում իրան որ իբր թէ ոչինչ չի նկատում:

Բայց երբեմն-երբեմն այդ անհոգութեան դիմակը, որով նա պաշտպանում էր իւր հրապարտութիւնը, յանկարծակի վայր էր ընկնում և այդ ժամանակ ծիծաղի փոխարէն նրա գէմքի վրայ կարգացնվում էին զգուսնք և դառն կսկիծ...:

Սյդպէս օրինակ մի գեղեցիկ առաւօտ, երբ

նա հայելու առաջ նստած երեսն էր ածելում, յանկարծ փոքրիկ սավոյարները նրա պատուհանի տակ սկսեցին խմբովին երգել պարոն ժերվէի հրացանը. նրանց ձայնը կպաւ խեղճ հերոսի ականջին:

Մէկ էլ յանկարծ պատուհանը շրջելի բացուեց և Տարտարէնը մի շապիկ հագին, գլուխը լախով փաթաթած, սապոնի սպիտակ փրփուրը երեսին, ածելին ձեռքումը ճօճելով, ահռելի ձայնով որոտաց.

Սրով կռուեցէք, պարոններ, սրով և ոչ թէ զնդասեղով:

Գեղեցիկ խօսքեր, արժանի պատմութեան էջերը մտնելու. միայն փսսոս որ այդ խօսքերըն ուղղուած էին այնպիսի արարածների, որոնց հասակը հազիւ թէ թիզուկէսից աւելի լինէր և որոնք միանգամայն անկարող էին սուր ձեռք առնելու:

ԺԲ

Բաօբաբի անակում տեղի ունեցած խօսակցութիւնը:

Սյդ ընդհանուր ուրացութեան մէջ, միմիայն զինուորական բանակն էր, որ դեռ ևս հաւատարիմ էր մնացել Տարտարէնին:

Բաջասիրտ հրամանատար Բրաւիդան դեռ
 ևս յամառութեամբ կրկնում էր, որ նա կտրիճ
 է. և այդ կարծիքը, կարծեմ, աւելի արժէք
 ունէր քան թէ դեղավաճառ Բեգիւքէիւնը: Ո՛չ
 մի անգամ քաջասիրտ հրամանատարն ամենա-
 թեթեւ ակնարկ չէր անում Աֆրիկեան ճանա-
 պարհորդութեան մասին. սակայն երբ հասա-
 րակութեան տրտունջն սկսեց աւելի և աւելի
 սաստկանալ, նա էլ վճռեց մէջ մտնել:

Եւ ահա մի երեկոյ, երբ թշուառ Տար-
 տարէնը մենակ իւր առանձնասենեակում նըս-
 տած խորասուզուել էր տխուր մտածութիւն-
 ների մէջ, մէկ էլ յանկարծ ներս մտաւ հրա-
 մանատարը, լուրջ դէմքով, սև ձեռնոցները
 հագին, մինչև վիզը կոճկուած:

«Տարտարէն», արտասանեց նա: Հանդարտ
 և անդիմադրելի ձայնով, «Տարտարէն, ժա-
 մանակ է արդէն զնալու»: Եւ արձանացած
 կանգնեց նա դռան մօտ, վեհ և խիտ ինչպէս
 մի ճակատագիր:

Տարասկօնցի հերոսը մէկ անգամից հաս-
 կացաւ թէ ինչ են նշանակում այդ խօսքերը.
 «Տարտարէն, ժամանակ է արդէն զնալու»:

Գոյնը թուցրած նա վեր կացաւ տեղից, մի
 սիրալիւր ակնարկ ձգեց իւր սիրուն, տաք ու լու-
 սաւոր առանձնասենեակին, այդ լայն ու փա-

փուկ բազկաթուին, գրքերին, գորգերին, պա-
 տուհանների մեծ ու ճերմակ վարագոյրներին,
 որոնց ետևում տատանվում էին ծառերի ճիւ-
 ղերը, յետոյ մօտենալով քաջասիրտ հրամանա-
 տարին բռնեց նրա ձեռքը, ամուր սեղմեց և
 արտասուխառն, բայց հաստատուն ձայնով
 պատասխանեց. «Ես կըզնամ, Բրաւիդա»:

Եւ նա կատարեց իւր խոստումը, միայն
 թէ ոչ իսկոյն... որովհետև հարկաւոր էր դեռ
 ճանապարհի պատրաստութիւններ տեսնել:

Ս.մենից առաջ նա պատրաստել տուեց երկու
 հատ երկաթապատ ահագին արկղ, որոնց վրայ
 խոշոր տառերով գրուած էր.

ՏԱՐԱՍԿՕՆՑԻ ՏԱՐՏԱՐԷՆ

Ձ Է Ն Բ Ե Ր Ի Ա Ր Կ Ղ

Բացի դրանից նա պատուիրեց մի փառա-
 ւոր ճանապարհորդական յիշատակարան օրա-
 գրութեան և իւր տպաւորութիւններն արձա-
 նագրելու համար:

Ս.յուհետև նա Մարսէլից բերել տուեց
 մի ամբողջ բեռը պաշարադէն, մի նոր տեսակի
 վրան, որ մի ընդամենը բացվում էր ու ծածկը-
 վում, ճահճալին կօշիկներ, երկու հատ հովա-

նոց, մի տառատոկ և կապոյտ ակնոցներ աչքերը պահպանելու համար: Վերջապէս դեղավաճառ Բեգիւքէն պատրաստեց նրա համար մի փոքրիկ, բայց շատ յարմար դեղարան բոլոր անհրաժեշտ պարագաներով:

Խեղճ Տարտարէն. այդ ամեն պատրաստութիւնները նա տեսնում էր ոչ թէ իւր համար, այլ Տարտարէն-Սանխօյի կատաղութիւնը հանդարտացնելու համար: Այն օրից երբ ուղևորութիւնը վերջնականապէս վճռուել էր, Սանխօն այլևս գիշեր ու ցօրեկ մի քաղց հանգատութիւն չէր տալիս մեր թշուառ հերոսին:

ԺԳ

Ուղեւորութիւն:

Վերջապէս հասաւ օրը. հանդիսաւոր և մեծ օր:

Առաւօտն այն գլխից ամբողջ Տարասիօնը ոտի վրայ էր, խոնուած Աւինիօնի ճանապարհի վրայ և բաօբաբի փոքրիկ տնակի շուրջը:

Մարդիկ բարձրացել էին պատուհանները, կտուրների վրայ, ծառերի գլուխը: Ռոնայի նաւատիները, բեռնակիրները, հասարակ մշակ-

ները, արհեստաւորները և վաճառականները, դերձակուհիները և կտաւագործները, ժողովաբանի անդամները, մի խօսքով ամբողջ քաղաքը ներկայ էր այդտեղ. և ոչ միայն քաղաքը այլ և շրջակայ գիւղերից բազմաթիւ հանդիսականներ:

Բոլոր այդ ահագին ամբոխն իրար հրելով խոնվում էին Տարտարէնի դռան մօտ, այն բարի ու կտրիճ Տարտարէնի, որ գնում էր Թուրքերի աշխարհը աւելծներ սպանելու:

Տարասիօնցիների համար Ալթիբը, Աֆրիկան, Յունաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը, Միջագետքը, այդ բոլորը միասին կազմում են մի շատ մութ, համարեա առասպելական մի աշխարհ, որ ընդհանուր անուամբ կոչվում է Թիւրքիա կամ ուղղակի Թուրքեր:

Այդ խուռն բազմութեան մէջ գլխարկների սրսորդներն իրանց պետի լաղթանակով փառաւորուած, գլուխները բարձր բռնած, հպարտ-հպարտ դէսուդէն էին պտրտում:

Բաօբաբի տան առաջ կանգնած էին երկու կառք: Ժամանակ առ ժամանակ դուռը բացվում էր և այդ միջոցին ներսում երևում էին միքանի անձինք, որոնք սիգոմճեմ զբօնում էին փոքրիկ պարտէզում: Ծառաներն այդ դռնով դուրս էին բերում զանազան կապոց-

ներ, արկղներ, պայուսակներ և գարտղամ էին կառքերի վրայ: Տղամիջակ մ զգամի շտիսն զգար իւրաքանչիւր կապոցը դուրս բերելիս ամբոխը գորդովում և բարձր ձայնով տալիս էր իրերի անունը. «Այդ վրանն է... այդ պաշարեղէնն է... այդ դեղարանն է... սրանք էլ զէնքերի արկղներն են...»: Եւ զլիարկների որսորդներն սկսում էին երկար ու բարակ բացատրութիւններ տալ այդ իրերի մասին:

Յանկարծ ժամը տասին մօտ մի ահագին շարժում ընկաւ բազմութեան մէջ: Պարտէզի դուռը ճանչաց և բացուեց:

— Ահա ինքը... ահա ինքը, — գոռացին ամեն կողմից:

Այն, նա ինքն էր որ կար...: Եւ երբ նա երևաց դռան շեմքի վրայ, ամբոխը սարսափած բացականչեց.

— Տէր Աստուած, կարծես թուրք լինի...:

— Ահնոցներ էլ է դրած...:

Տարասկօնցի Տարտարէնը, Ալժիր ուղևորուելով, չիրաւի պարտք էր համարել ալժիրական զգեստ հագնելու. նա հագել էր մի լայն սպիտակագոյն վարտիկ, կարճ բաճկոնակ մետաղեայ դեղին կոճակներով, մէջքին կապել էր երկու ոտք լայնութեամբ կարմիր գօտի, ծոճրակը բաց, ճակատն ամելած, գլխին մի ահա-

գին Ֆէս դրած երկայն կապտագոյն փիւսկիւլով: Բացի դրանից ամեն մի ուսից մի-մի ահագին հրացան կախ արած, մի ահագին դանակ զօտիկը խրած, փորի վրայ էլ մի հատ փամփուշտի պայուսակ և մի ատրճանակ էլ կողքից քաշ ձգած: Ահա նրա բոլոր սարսաղինութիւնը...: Բայց ներողութիւն, ես մոռացայ չիշել ակնոցները: — մի գոյգ սարսափելի խոշոր կապուտ ակնոցներ, որոնք փոքրիշատէ ծածկում էին մեր հերոսի վերին սատիճանի ահռելի կերպարանքը: Կեցցէ Տարտարէնը, կեցցէ Տարտարէնը, անդադակեց ամբոխը: Տարտարէնը ժպտաց, բայց գլուխ չտուեց, որովհետեւ հրացաններն արգելում էին նրան այդ տեսակ շարժումներ անելու. բացի դրանից նա այժմ շատ լաւ էր հասկանում ժողովրդականութեան գինը: Շատ կարելի է որ այդ ըտպէին նա իւր սրտի խորքում անիծում էր այդ չիմար ամբոխին, որ համարեա թէ ստիպել էր նրան հեռանալ Տարասկօնից, թողնել այդ սիրուն տնակը, իւր տաք սենեակներով և կակուղ կահ-կարասիքով...: Այն շատ կարելի է, որ նա սարսափելի կերպով անիծում էր այդ ամբոխին, բայց երեսոնց ի հարկէ այդ չէր ցոյց տալիս...: Զանգարտ և հպարտ, թէև փոքր ինչ

սիւթնած, նա դուրս եկաւ փողոց, նայեց
 դռան առաջ կանգնած կառքերին և տեսնելով
 որ ամեն բան կարգին է, ուղղեց իւր քայլերը
 դէպի երկաթուղու կայարանը առանց զօնէ մի
 անգամ գլուխը դէպի յետ իւր տունը դարձ-
 նելու: Նրա ետևից դնում էր քաջասիրտ հը-
 րամանատար Բրաւիդան, քաղաքագլուխ Լադէ-
 ւէզը, այնուհետև ղինավաճառ Կօստէկալզը և
 բոլոր գլխարկների որսորդները. դրանց ետևից
 կառքերը, կառքերի ետևից էլ ժողովուրդը:

Կայարանի առաջ նրան սպասում էր եր-
 կաթուղու կառավարիչը, որ ընդառաջ գալով
 միքանի անգամ ջերմ կերպով սեղմեց նրա
 ձեռքը:

Փարիզ-Մարսելյեան գնացքը դեռ չէր եկել:
 Տարտարէնը և իւր բարեկամները մտան կայա-
 րանի դահլիճը: Ժողովրդի մէջ կարգը պահպա-
 նելու համար երկաթուղու կառավարիչը զի-
 նուորներ դրաւ մուտքի առաջ որ մարդ ներս
 չթողնեն:

Քառորդ ժամուայ չափ Տարտարէնը ձե-
 մում էր դահլիճում շրջապատուած գլխարկների
 որսորդներով: Նա խօսում էր նրանց հետ իւր
 ճանապարհորդութեան, իւր վտանգաւոր որ-
 սորդութիւնների մասին և խոստանում էր մի-
 մի հատ առիւծի մօրթի ուղարկել նրանց հա-

մար: Ս.մէն մէկն շտապում էր իւր անունը
 գրել նրա յիշատակարանի մէջ...:

Հանգիստ և զուարթ, ինչպէս Սոկրատը
 թոյնը խմելու ըսելէին, անվեհեր Տարասկօնցին
 ամենքին մի-մի անուշ խօսք, մի-մի ժպիտ էր
 նուիրում: Նա խօսում էր պարզ, փոքր ինչ մե-
 լամաղձոտ ձայնով. կարծես թէ մեռնելուց առաջ
 նա կամենում էր նախապէս ամենքի սիրտը
 լցնել բարի յիշատակներով և խորին ցաւակ-
 ցութեամբ: Լսելով իրանց պետի այդ մելամաղ-
 ձիկ խօսակցութիւնը որսորդներից միքանիսը
 լաց էին լինում, միքանիսն էլ, ինչպէս օրինակ
 քաղաքագլուխ Լադէւէզը և դեղավաճառ Բե-
 զիւքէն սաստիկ խղճահարվում էին...: Ժողո-
 վուրդը, դրսում կանգնած, վանդակների արան-
 քից նայում էր և անդադար աղաղակում. „Կեցցէ
 Տարտարէնը... կեցցէ Տարտարէնը:

Հասաւ վերջապէս բաժանուելու ժամը...
 շոգեկառքի խուլ գլորդոցը և սուր շվոցը թըն-
 դացրին կայարանի կամարները...:

—Մնաս բարով, Տարտարէն... մնաս բարով,
 Տարտարէն... մնաս բարով... մնաս բարով...
 մնաս բարով...:

—Մնաք բարով, ամենքդ էլ, ասաց ջնաշխարհիկ
 հիկ մարդը և յանձին քաջասիրտ հրամանատար

Բրաւեղայի գրկեց իւր սիրելի և թանկագին Տարասկօնը:

Յետոյ արագ քայլերով մօտեցաւ շոգեկառքին և մտաւ վազօններից մէկը, որ լիքն էր փարիզեցիներով: Փարիզեցիները քիչ էր մնում վախից ուշաթափ լինելին, երբոր տեսան այդ տարօրինակ մարդուն այնքան հրացաններով ու ատրճանակներով սպառազինուած:

ԺԴ

Մարսէլի նաւահանգիստը: Ծովազնացոյ թիւն:

186... Թուին, Դեկտ. 1-ին, կէսօրուայ ժամանակ, մի զեղեցիկ ու պայծառ ձմեռնալին օր, մարսէլցիներն իրանց Կաննըրէէր անուանուած նշանաւոր փողոցի վրայ զարմացմամբ նկատեցին մի թուրք. այ՛ս, մի իսկական թուրք, միայն թէ ոչ այնպիսի թուրք, որի նմանը շատ ու շատ յաճախ է սլատահում վաճառաշահ Մարսէլում:

Հարկաւոր է արդեօք ասել որ այդ նոր թուրքը Տարտարէնն էր, Տարասկօնցի մեծն Տարտարէնը: Երջապատուած իւր զէնքերի արկղներով, իւր գեղարանով, պաշարեղէններով

նա գիմում էր դէպի նաւահանգիստը, որտեղից Զուաւ անունով նաւով պիտի ծովագնաց լինէր դէպի Միջերկրականի միւս ափը: Դեռ ևս տարասկօնցիների ովսանանների ազդեցութեան տակ, միանգամայն յափշտակուած Մարսէլի երկնքով և ծովի շնչով, Տարտարէնը զուարթագէմ առաջ էր գնում. հրացաններն ուսին դրած և աչքերը չափ զիտում էր Մարսէլի հրաշալի նաւահանգիստը, որ նա իւր կեանքում առաջին անգամն էր տեսնում: Խեղճ մարդն այն աստիճանի սքանչացել էր որ կարծում էր թէ այդ ամենը երազումն է տեսնում: Նրան այնպէս էր թվում որ ինքը բոլորովին ուրիշ մարդ է, մի նշանաւոր նուապետ և որ ինքը թափառում է այն Փանտաստիքական քաղաքներից մէկում, որոնց մասին կարդացել էր Հազար ու մի գիշերուայ մէջ:


Նրա աչքի առաջ բարձրանում էր մի ամբողջ անտառ հազարաւոր կոյմերի, ծածանում էին երկրագնդի բոլոր պետութիւնների դրօշակները—շուէրական, ռուսական, յունական, թուրիզի, ամերիկական, և այլն և այլն: Ամեն տեսակի և ամեն մեծութեան նաւեր՝ զարդարուած յաւերժահարսների, աստուածուհիների, սուրբ կոյսերի և ուրիշ պատկերներով, մէկ-

մէկու մօտ այնպէս խռնուել էին ծովափում, որ նրանց արանքում հազիւ կարելի էր նկատել ջրի մի փոքրիկ կտոր...: Գոռում-գոչիւն, աղաղակ՝ և այն էլ աշխարհի բոլոր լիգուներով թնդացնում էին նաւահանգիստը, որ ծածկուած էր մաքսառուների, գործակալների, բեռնակիրների ու մշակների մի ամբողջ բանակով: Այստեղ Աւելի հեռուն տարածվում էին խանութները սկսած ամենաշքեղ մազազիններից մինչև ծխից սևացած փոքրիկ կրպակները, որոնց մէջ նաւատիներն իրանց համար կերակուր էին պատրաստում: Այդտեղ կարելի էր տեսնել ամեն տեսակ առուտուր և ամեն տեսակ ապրանք— ծխամորճներ, կապիկներ, թուխակներ, պարան, առագաստի կտաւ, հագարումի տեսակ մանր-մունր իրեղէններ և խաղալիքներ, աշագին ոսկեզօծ կանթեղներ, ժանգոտած ճախարակներ, հնամաշ խարիսխներ, ծովային հեռագիտակներ՝ ժան-հարի և Գիւզէյ-Տրիւէնի ժամանակուանից մնացած: Նաւատիները և մանրուք ծախող կանայք անդադար անցուղարձ էին անում մի-մի կողով կամ տաք-տաք կերակրի ամանները ձեռներին...: Ահազին քանակութեամբ փռուած էին այդտեղ մետաքսեղէններ, մետաղներ, փայտեղէն, բրդեայ գործուածներ, շաքար, բամբակ, օղի և շաքարե-

ղէզն: Մէկ խօսքով կատարեալ մի խառնուրդ Արևելքի և Արևմուտքի:

Ամբողջ նաւահանգիստն անընդհատ շարժման մէջ է: Մէկ նաւ դուրս է գալիս, միւսը գալիս է, մէկը դուրս է գալիս—միւսը գալիս է. և այդպէս առաւօտից մինչև դիշեր ու դիշերուանից մինչև առաւօտ: Եւ բոլոր ժամանակ օդը թնդում է անիւների և մեքենաների դրդոցով, նաւատիների աղաղակներով, մշակների գոռում-գոչիւնով, երգերով, շոգենաւերի շվոցներով, գանգակների զօղաջիւնով: Իսկ այդ ամենի վրայից փչում է ծովային հողմը, որ վերցնում է բոլոր այդ ձայները, այդ աղաղակները և քշում, թափ տալիս ու խառնում իւր սեպհական ձայնի հետ՝ կազմելով մի կատաղի, մի վայրենի երաժշտական հնչիւն, որ թև է տալիս և մղում մարդուն հեռու հեռու, աշխարհի մէկ ծայրից մինչև միւս ծայրը:

Ահա այդ դիւցազնական փողի ձայնովն էր որ մեր անվեհեր Տարտարէնը մտաւ նաւառիւծների աշխարհը գնալու համար...:



քղամտասի վն լանդատասի խոցասի քէՄ անքէր
 յիցառնեղՍ և իցլեմեղՍ
 -եղաց ունըմնան սեպտիման ԳրոցնՍ
 ցասին սիյար ք սղար ասմ քէՄ և ի ցլն սան
 սիյար ցասին—սիյար ք սղար ցլին և սիյար
 -ի և զմէր մէմին ըմտաւտա սլարցա և ի
 վտանման զոյնց և՛ ասաւտա մէմին ըմտաւտեց
 զգնամեցմն և իցմեգմն և ևտրմն զրո
 -վացն իտղմնիարարա իցմեմտաւտա խոցոցրք
 զգնամեքոց իտղմնիմ իտմեմն-ևտար զյմն
 դա իս՛ իտմեմնարք զգնմնարք իտղմնեք
 ցո զնրա՛ միլախա՛ ք ևտրք ըմտգի իմնա
 -վարարա դա զգնմնա՛ դա զոյնց ք ևտմեղմի
 զա՛ ևտմտասի և սիյաւ իտն իտուց և զգնմ
 իրատասի վն իտղմնարք աս՛ իմնա՛ մարա՛քմն
 ք և՛ ի՛ն զո մեմե՛ն՛ մարա՛քեպո՛ իմեղլա՛ի վն
 ևտմե՛ ասմ՛ մարդան ևտրն և սիյան
 զղլան սմն մէմին ըմղլան քէն ի՛նցտա՛լա
 միտմնա՛ զրոք մարտմնարքիք րա աս՛Ս
 ասմ ասան զմեղատա՛ն քմեմնա՛ զնն զո զէ
 ասմ ևտման՛ ասլանք զնցտա՛լա իմեմե՛մտ

ԽՄԻՄՄԻ ԽԱԱԿ

ԹՈՒՐԲԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

իտմնարք աս՛ իմնա՛
 ևտմտասի և սիյաւ
 իտղմնարք զգնմնարք
 իտղմնեք ցո զնրա՛
 միլախա՛ ք ևտրք
 ըմտգի իմնա
 վարարա դա զգնմնա՛
 դա զոյնց ք ևտմեղմի
 զա՛ ևտմտասի և սիյաւ
 իտն իտուց և զգնմ
 իրատասի վն իտղմնարք
 աս՛ իմնա՛ մարա՛քմն
 ք և՛ ի՛ն զո մեմե՛ն՛ մարա՛քեպո՛
 իմեղլա՛ի վն ևտմե՛ ասմ՛
 մարդան ևտրն և սիյան
 զղլան սմն մէմին ըմղլան
 քէն ի՛նցտա՛լա միտմնա՛
 զրոք մարտմնարքիք րա
 աս՛Ս ասմ ասան զմեղատա՛ն
 քմեմնա՛ զնն զո զէ ասմ
 ևտման՛ ասլանք զնցտա՛լա
 իմեմե՛մտ

մէջքի գօտին անգամ յետ անելու և ազատուելու
 իւր ծանր սպառազինութիւնից: Ահագին դաշոյնը
 սեղմում էր նրա կուրծքը, ատրճանակները քիչ
 էր մնում ազդրները ջարդոտեն: Եւ ի լրումն
 այդ բոլոր տանջանքների Տարտարէն-Սանիօն էլ
 միւս կողմից էր անդադար նեղացնում և հայ-
 հոյում խեղճ հերոսին: Վա՛մնայնի սմ
 Վա՛մնայնի սմ, տեղն է... ետքեզ չէի ասում...
 Հը, ուզում էիր անսպասելի Ա.Ֆրիկան գնալ...
 Համեցէք, այդ էլ քեզ Ա.Ֆրիկան, թնչպէս է...
 Բայց ամենից սարսափելին այն էր որ մինչդեռ
 նա այդպէս տանջվում էր իւր փոքրիկ խցի մէջ,
 փոքր ինչ հեռու՝ ընդհանուր դահլճում միւս
 ճամբորդներն անդադար ծիծաղում, հրհուռում,
 երգում և թուղթ էին խաղում: Այդ ճամբորդ-
 ների մէջ կային բազմաթիւ զինուորական սպա-
 ներ, թեթեւ կանայք և օրիորդներ, թափա-
 ռական դերատաններ ու դերասանահիներ, մի
 հարուստ մահմեդական, որ վերագրառնում էր
 Մեքքայից, մի ալբանացի արքայազարմ իշխան,
 որ անդադար խաղում ուլլ քէֆ էր անում:
 Դրանցից ոչ մէկին ծովը չէր բռնում, ուստի
 նրանք էլ բոլոր ժամանակ շամպանեա էին
 խմում և զուարճախօսում: Զուլալի նա-
 լապետի հետ, որ մի շատ ուրախ և զուար-
 ճախօս մարտիչի էր և ղերկուր կին էր պա-

հում—մէկը Մարտէլլում, միւսը Ալփիրում:
 Տարտարէնը իւր մտքում անիծում էր այդ
 բոլոր ճամբորդներին, որոնք աւելի ևս զրզը-
 ուում էին նրա տանջանքը:
 Գլ և վերջապէս երրորդ օրը, կէսօրից յետոյ,
 մի տարօրինակ շարժում սկսուեց անաւի վրայ,
 որ անխելեց մեր հերոսին սթափուել իւր թըմ-
 լուցութիւնից: Զանգերը տալիս էին, անաւատի-
 ները դէսուդէն էին վազվզում: Ի՞նչ յայտնի
 մնում—Մեքենան դէպի առաջ, մեքենան դէպի
 յետ, գնում էր անաւպետը կտրուած ու
 խուլոտ ձայնով: Գլ և օրիորդն ևս մղվել
 Մտօպ, կանգնիր: Եւ անուր կանգ առաւ,
 ճօճուելով ջրի մէջ, ինչպէս օդապարիկը օդի
 ալիքներում: Գլ և օրիորդն ինչպէս վազում
 գնաց Այդ անկարծական դէպքը սարսափեցրեց
 Տարտարէնին: Գլ և օրիորդն միտում
 պոչ և Օգնեցէք, օգնեցէք, խեղդվում ենք,
 դռաց նա ահօւելի ձայնով և մէկ անգամից
 ոյժերն իրան հաւաքելով դուրս ցատկեց խցից
 և սպառազինուած բարձրացաւ անաւի տախ-
 տակամաճի վրայ: Գլ և օրիորդն ևս
 ուղն ցւոյ զմեզապաճ յմեզապաճ ցլ նու
 ձ մեզապ մազքմ ցլ նուռնի միբղա նու
 ...ամ զմապիջ ըստ յամանիսմաճ աօն
 Գլն մամեխաճաան ըստ ամ ամբքմն ւճ

նապոյեյՍ ցաւին .ն. ԲլլայաՍ ցլլին—նառ-
 քա ղձ նառծիմա նապան ղոյ ցմէդատաղած
 ցրդե րդոն ճեղու բան շկարդի ղէն, ի ղէն ցոյ
 ցգմաջմատ աղմ միձ նառ
 յոսմ նաւը հասել էր տեղ: Զուտը մտնում էր
 նաւահանգիստ, մի փոքրիկ և գեղեցիկ, բայց
 բոլորովին լուռ, անշշունչ, համարեա թէ ան-
 կենդան նաւահանգիստ: Ինչմ հանդէպ, մի բլրա-
 կի վրայ փռվում էր Ալթիրը իւր կաթնագոյն
 սպիտակ տնակներով, որոնք մէկ-մէկու սեղմե-
 լով ցածանում, իջնում էին դէպի ծովի ափը:
 Վերևում սփռվում էր Ալթիրական կապոյտ եր-
 կինքը, բայց, Աստուած իմ, ինչ հրաշալի կապ-
 տութիւն:

Չնաշխարհիկ Տարտարէնը, իւր սարսափը
 մոռացած, դիտում էր այդ գեղեցիկ տեսարանը
 և խորին յարգանքով ականջ էր դնում Ալբա-
 նացի իշխանին, որ նրա կողքին կանգնած ցոյց
 էր տալիս քաղաքի զանազան թաղերն ու փո-
 ղոցները: Նա լաւ կրթութիւն ստացած մարդ
 էր երևում այդ իշխանը. իւր հինգ մատիպէս
 ճանաչում էր Ալթիրը և սքանչելի կերպով խօ-
 սում էր արաբերէն: Տարտարէնը իւր մըտ-
 քում արդէն վճռում էր ինչքան կարելի է
 մօտ ծանօթանալ այդ իշխանի հետ...:

Եւ մինչդեռ նա այդ մտածութեան մէջ

էր, մէկ էլ լանկարծ նա նկատեց բազմաթիւ
 կոշտ ու սեւագոյն ձեռքեր, որոնք դրսից դէպի
 նաւի ներսն էին ուղղվում. նոյն ըսպէին մի
 զանգրահեր սև խափշիկ բսաւ նրա առաջին:
 Տարտարէնը սարսափեց, բայց դեռ բերանը բաց
 չարած ամբողջ նաւն արդէն բռնուած էր հա-
 ռիւրաւոր սեւամորթ, կիսամերկ, հահելի և
 ժայնտատես ծովային աւազակներով:
 Տարտարէնը շատ լաւ էր ճանաչում այդ
 հէներին: Իրանք նրանք էին, այն նշանա-
 վոր հրանք, որոնց նա քանիքանի անգամ
 փնտռել է Տարասկօնի փողոցներում, գիշերուայ
 մթութեան մէջ: Ահա վերջապէս նրանք:
 Եւ առաջ նա սարսափից մնաց
 ստաւծ տեղը կանգնած: Բայց երբ տեսաւ որ
 հէները յարձակվում են արկղների և սպայու-
 սակների վրայ, երբ տեսաւ որ նրանք համարձակ
 կերպով կողոպտում են նաւը, հերոսն իսկոյն
 ուշքի եկաւ և սուրը պատեանից հանելով
 ի ղէն, ի ղէն՝ գոռաց նա ճամբորդներին և
 ինքն ամենից տող յարձակուեց աւազակների
 վրայ:

— Ques aco? — ինչ կայ, ինչ էք անում, —
 հարցրեց նաւապետը մօտենալով Տարտարէնին:
 — Այ՛ջուռ արէք, նաւապետ, շուտով զի-
 նաւորեցէք ձեր նուատիներին:

— Ինչո՞ւ... ամ ծոյախնայ յձ յձն յգձ

— Ի՞նչպէս թէ ինչո՞ւ մի թէ չէք տեսնում...

— Ի՞նչ... մտորելու միջ մտղմմ վամ

— Ահա այդ աւագակներին...

Նաւապետը զարմացած նայում էր Տարբ տարէնի երեսին։ Այդ բոպէին մի ահագին խափշիկ՝ մեր հերոսի դեղարանը կռնակին բարձած վագելով անցնում էր նրանց մօտով։ «Սպասիր, թշուառական», գոռաց Տարասկօնցին և սուրը ձեռքին վագ'ց գէպի խափշիկը։

Նաւապետը նրա առաջը կտրեց և ձեռքը ձգեց նրա գօտկին։

— Հանգստացէք, ի սէր Աստուծոյ, սրանք աւագակներ չեն... ծովային աւագակները վաղուց արդէն վերացել են աշխարհի երեսից... սրանք հասարակ բեռնակիրներ են։

— Բեռնակիրներ... մտա յգձ յույի մղմմիտոն

— Այո՛, հասարակ բեռնակիրներ, սրոնք սպրանքը տեղափոխում են նաւէց ցամաքի վրայ։ Յետ դրէք ձեր սուրը սլատեանի մէջ, տուէք ինձ ձեր տոմսակը և գնացէք այդ խափշիկի ետևից։ Նա կ'առաջնորդէ ձեզ հիւրանոց կամ ուր որ կամենաք...

Տարտարէնը փոքր ինչ կոտրուած, տուեց իւր տոմսակը և խափշիկի ետևից իջաւ մի ահագին մակոկի մէջ, որտեղ արդէն դարսուած

էին նրա բոլոր արկղները, զէնքերը, պաշարեղէնը։ Խափշիկը բարձրացաւ այդ արկղների դէզի վրայ և ծնկները ձեռքերի մէջ առած կապկի նման պարզ ց. մի ուրիշ խափշիկ էլ սկսեց թիավարել...։

Այդ երկու կապիկները ծիծաղելով նայում էին Տարտարէնի երեսին և բաց էին անում իրանց սպիտակ կաթնագոյն ատամները։

Նաւակի գլխին պինդ կանգնած, մ.ժ Տարասկօնցին ձեռքն ամուր դրել էր սրի երախակալին և սպասում էր. չնայելով նաւապետի խօսքերին նա այսուամենայնիւ դեռ բոլորովին վտտահ չէր այդ սևամորթ բեռնակիրների վրայ, որոնք այնքան քիչ նմանութիւն ունէին Տարասկօնի քաջասիրտ բեռնակիրների հետ...։

Հինգ բոպէից լետոյ նաւակը կանգ առաւ ցամաքի մօտ և Տարտարէնը ոտ դրեց այն բարբարոսական հողի վրայ, ուր երեք հարիւր տարի առաջ մի սպանիացի կալանաւոր Սիքալէլ Սերվանտէս անունով, բանտապետների խաբագանների տակ, յօրինում էր այն չնաշխարհիկ վէպը, որ պիտի կրէր Դոն-Քիշոտի անունը...։

— Դասաւամ մթաեխաւ յձ աաբ մթագոյն մ յգձմ
մ ցիտծ միձ յոթն ցցմմմաթէա գմոպ յգն
— Իվմյն յոնցմ մասադարա մապոց միձ մտն
— Դոց մ ևապպաբ մոնմ մցմմնապոյ միվաձոյա գմմ

նալով թէ ինչ կերպ իւր միտքը հասկացնէ
այդ բարբարոսներին, նա սկսում էր կամ Փրան-
սերէն ճառախօսել կամ գաւառական բարբա-
ռով և կամ մինչև անգամ լատիներէն լեզուով,
թէև նրա լատիներէն իմացածն էլ մեծ բան
չէր: Բայց, աւսդ, այդ ամենն իզուր էր. նրան
ոչ ոք հասկացող չկար...: Բարեբաղդաբար այդ
րոպէին մի կարճահասակ մարդ, համազգեստը
հագին, դեղին օձիքով, մի երկայն գաւազան
ձեռքին երկնքից իջած հրեշտակի նման մէջ
մտաւ և գաւազանի հարուածով սկսեց ցրուել
այդ խառնիճազանճ ամբոխը: Այդ մարդը քա-
ղաքի ոստիկաններից մէկն էր: Շատ քաղաքա-
վարի կերպով նա առաջարկեց Տարտարէնին
իջնել եւրոպական հիւրանոցում և նրա պա-
րանքը լանձնեց այդ հիւրանոցի սպասաւոր-
ներին:

Հէնց առաջին քայլերից Տարտարէնը մնաց
ափշած, բերանը բաց: Նա Ալփիրը երևակա-
լում էր մի արևելեան, առասպելական, կա-
խարդական քաղաք, մի ինչ-որ խառնուրդ Կոս-
տանդնուպօլսի և Ջանզիբարի...: Բայց այժմ
նրա առաջ փռուած էր համարեա նոր Տարաս-
կօնը...: Սրճարաններ, հիւրանոցներ, լայն
փողոցներ, չորսյարկանի տներ, մի փոքրիկ հը-
րապարակ, ուր զինուորական երաժշտական

խումբը նուազում էր Օֆֆէնբախի պօլկաները,
գեղեցիկ հագնուած տղամարդիկ և տիկիներ,
միքանի հատ կօհօտներ և բազմաթիւ զինուո-
րականներ, զինուորներ, սպաներ և ոչ մի հատ
թուրք...: Այն, ոչ մի հատ թուրք, բացի միակ
Տարտարէնից... Նա սկսեց մինչև անգամ քա-
շուել, երբոր անց էր կենում հրապարակից.
ամենքը զլուխները ծռած նրան էին մտիկ
տալիս. երաժիշտները կանգ առան և Օֆֆէն-
բախի պօլկան մի երկու վայրկեան մնաց ընդ-
հատուած:

Երկու հատ հրացան ուսերին դրած, ա-
տրըճանակը կողքից քաշ արած, Տարտարէնը
լուրջ և սիգածեմ քայլերով անցաւ այդ ամբոխի
միջով. բայց երբոր հասաւ հիւրանոց, նրա
ջղերն այլևս չկարողացան համբերել և նա
թուլացած զլորուեց գետին: Տարասկօնը, Մար-
սէյը, Միջերկրական ծովը, ալբանացի իշխանը,
Ծովային աւազակները—այդ բոլորը խառնուե-
ցին, տակն ու վրայ եղան նրա գլխի մէջ...
Ձեռքերի վրայ ներս տարան նրան սենեակ,
զէնքերը վերցրին, շորերը հանեցին և կամե-
նում էին արդէն ուղարկել բժշկի ետեւից. բայց
մեր հերոսը հէնց որ զլուխը դրեց բարձին՝
սկսեց մի այնպէս քաղցր խումփացնել, որ հիւ-
րանոցի տէրն այլևս աւելորդ համարեց դիմել

գիտութեան օգնութեան...: Ամենքը կամացուկ
զուրս արծան սենեակից և զուռը վրայ դրին:

... ասմիք զի անհոգի մի գիտնորոյ տա՛ր զմաց զին
տա՛ր զին չո մի գիտնորոյ զմաց զմաց... ցիմնարկոյ
իսկն զբաց ցիմնոյ տա՛ր զին չո... ցիմնոյ
... ասմիք զի անհոգի մի գիտնորոյ տա՛ր զմաց զին
տա՛ր զին չո մի գիտնորոյ զմաց զմաց... ցիմնարկոյ
իսկն զբաց ցիմնոյ տա՛ր զին չո... ցիմնոյ

Քաղաքային ժամացոյցը ժամը երեքն էր
խփում, երբոր Տարտարէնը զարթնեց: Նա քնել
էր մի ամբողջ գիշեր, մի ամբողջ առաւօտ և
կէսօրից յետոյ էլ միքանի ժամ: Բայց պէտք է
խոստովանուէր որ նախընթաց երեք օրը խեղճը
շատ էր տանջուել...:

Աչքերը բաց անելուն պէս իսկոյն նրա
մաքով անցաւ որ այժմ գտնվում է առիւծների
աշխարհում. և ինչ ծածկեմ ձեզանից, երևա-
կայելով թէ առիւծներն այդքան մօտ, համա-
րեա իւր թթի տակին են, թէ պէտք է վեր-
ջապէս դէմ առ դէմ հանդիպէ նրանց հետ,
բռռ... մի սառը դող անցաւ նրա ամբողջ
մարմնով...: Տարտարէնն աւելի խորը խրուեց
բարձերի և վերմակի տակ...:

Սակայն միքանի ընկերից յետոյ շնորհիւ
իրան շրջապատող տաք և պայծառ եղանակին,

մեծ և լուսաւոր սենեակին, մաքուր և կապու-
տակ երկնքին նրա տրամագրութիւնը կամաց-
կամաց սկսուեց բարեփոխուել. իսկ երբ նա
հէնց անկողնի մէջ մի թեթեւ նախաճաշիկ էլ
արաւ ու միքանի բաժակ էլ զինի դատարկեց,
կրկին նախկին հերոսը դարձաւ և զէպի ա-
ռիւծները, զէպի առիւծները՝ « գոռալով զուրս
ցատկեց անկողնից և շորերը հագաւ: »

Ահա նրա գործողութեան ծրագիրը. առանց
ոչ ոքի մի բան ասելու զուրս գալ քաղաքից
զուրս, թափանցել աւազոտ անապատը, սպա-
սել այնտեղ մինչև գիշերը վրայ հասնի, դա-
րանամուտ լինել և առաջին առիւծը որ հան-
դիպի՝ հրո-վրո կրակ տալ...: Յետոյ միւս ա-
ռաւօտ վերագառնալ հիւրանոց, մի լաւ նա-
խաճաշիկ անել, ընդունել այժիրցիների շնոր-
հաւորութիւնները և մի կառք ուղարկել սպա-
նած գազանը քաղաք բերելու համար:

Նա շտապով սարսաղինուէց, ճանապարհ-
հորդական վրանը ձգեց կանակին և վիզն ուղիղ
բռնած զուրս եկաւ փողոց: Որպէս զի ոչ ոք նրա
մտադրութիւնը չհասկանալ, նա ոչ ոքից հար-
ցուփորձ չարաւ ճանապարհի մասին, այլ զիմեց
ուղղակի զէպի աջ, հասաւ մինչև Բաբի-Սալունի
կամարները, որտեղ բազմաթիւ այժիրական
հրէաներ սարգերի նման ոստայնների մէջ

դարանակալած իրանց փոքրիկ խանութներից նայում էին նրա վրայ. յետոյ անցաւ թատրոնական հրուարակից, մտաւ քաղաքի արուարձաններից մէկի մէջ և վերջապէս դուրս եկաւ այն մեծ փոշեից ճանապարհի վրայ, որ տանում է դէպի Մուստաֆա:

Ճանապարհը բռնուած էր բազմաթիւ հանրակառքերով, հասարակ կառքերով, եզնասայլերով, խոտի բեռներով, զինուորներով, փոքրիկ էշերի կարաւանով, հաց ծախող խափշիկ կանանցով, ալջասցի գաղթականներով, կարմրահասններձ սպահիներով: Այդ ամբողջ բազմութիւնը գոռալով, գոչելով, երգելով, ածելով ընթանում էր փոշեից ճանապարհով, որի երկու կողմը սփռվում էին բազմաթիւ խանութներ, կրպակներ, զինետներ, մսավաճառանոցներ և այլ աղտոտ շինութիւններ...:

— Ա՞յ յ է սրանց գոված Արևելքը, — մտածում էր մեծն Տարտարէնը նայելով այդ խայտաճամուկ բազմութեան վրայ. — ո՞ւր են հապաթուրքերը. ես թուրք այստեղ շատ քիչ եմ տեսնում:

Նա վերջին խօսքը դեռ չէր արտասանել, մէկ էլ յանկարծ նրա աչքովն ընկաւ մի փառաւոր ուղտ, որ հնդկաւի նման փքուած, ծանր ու ահագին քայլերով անցնում էր նրա

մօտով: Տարտարէնի սիրտն սկսեց տրոփել: Արդէն ուղտերը երևացին. կընշանակէ առիւծներն էլ շատ հռու չեն: Եւ իրաւի փոքր ինչ անցած նա նկատեց մի խումբ որսորդներ, որոնք հրացաններն ուսներին դրած գալիս էին իւր հանդէպ:

— Վախկոտներ, — մտածեց մեր հերոսը անցնելով նրանց մօտից, — վախկոտներ և թուլասիրտներ. չեն ամաչում խմբով են դուրս գալիս առիւծի վրայ և այն էլ շները ետևներից ձգած: Խեղճ մարդը մտքովն անգամ չէր կարող անցկացնել որ Ալթիրում բացի առիւծից ուրիշ կենդանու որս էլ կարող է լինել:

Սակայն որսորդների ուրախ և ինքնաբաւական դէմքը մի կողմից, միւս կողմից էլ շներով և պալուսակներով առիւծներ որսալու նահապետական եղանակն այն աստիճան հետաքրքեցին Տարասկօնցի հերոսին, որ նա մօտեցաւ նրանցից մէկին և մի թեթեւ արհամարհական ժպիտ երեսին հարցրեց.

— Բարեկամ, որսներդ թնչպէս է:

— Վատ չէ, պատասխանեց որսորդը մի զարմացական հայեացք ձգելով Տարտարէնի սարօրինակ սպառազինութեան վրայ:

— Իսկի սպանեցիք թէ չէ:

— Ինչպէս չէ... և բաւական մեծ քանա-

բում բռնած Տարտարէնը ծնկաչոք պառկեց
 գետնի վրայ և սկսեց սպասել...: Անցաւ մի
 ժամ, երկու ժամ, Տարտարէնն սպասում է, բայց
 ոչինչ չէ երևում...: Այն ժամանակ նա մտա-
 բերեց որ նշանաւոր որսորդներն առիւծներին
 հրաօղբերլու համար միշտ իրանց հետ վեր-
 ցնում են մի ուլ. այդ ուլի ոտը թոկով կանգնում
 են և թոկը քաշելով ստիպում են նրան մկը-
 կալ: Տարտարէնը իւր հետ ուլ չունենալով
 մտածեց ինքը նրա տեղը բռնել, ուստի սկսեց
 ուլի ձայնով «մէ-մէ» մկըկալ:

Սկզբում նա հանդարտ ու կամաց էր մկը-
 կում, որովհետեւ սրտի խորքում վախենում էր
 որ չի նի թէ առիւծները յանկարծ լսեն և գան...
 բայց լետոյ տեսնելով որ ոչ ոք չէ գալիս, նա
 սկսեց աւելի բարձր ձայնով մկըկալ՝ «մէ... մէ...»:
 Պարծեալ ոչ ոք չերևաց... վերջապէս համբե-
 րութիւնից դուրս գալով նա միքանի անգամ
 իրար վրայ «մէ... մէ... մէ...» մկըկաց և այն էլ
 այնպիսի բարձր ձայնով որ ուլը կամաց-կամաց
 ահագին եզ դարձաւ...:

Յանկարծ՝ նրանից միքանի քայլ հեռու
 կարծես գետնի տակից մի ահագին սև բան
 դուրս պրծաւ... Տարտարէնը ձայնը գցեց փորը:
 Ահագին սև բանը գլուխը բարձր ու ցած էր
 անում, գետինը հոտոտում էր, թռչկոտում էր,

վազվզում էր, մէկ անյայտանում էր, մէկ էլ
 նորից երևում... ինչ խօսք որ այդ մի առիւծ
 էր...: Արդէն շատ պարզ երևում էին նրա
 չորս կարճիկ թաթիւրը, ահռելի մարմինը և
 մթութեան մէջ փայտակող գոյգ աչքերը:
 Տարտարէնը հրացանը կպցրեց թշին, սուր վեր
 քաշեց և բամբ-բամբ... կրակ տուեց...: Յե-
 տոյ նա ցատկից միքանի քայլ դէպի լետ,
 որսորդական գանակը հանեց և մնաց տեղը
 արձանացած:

Մի սարսափելի մոնչիւն արձագանք տուեց
 հրացանի ձայնին:

„Կայաւ“, աղաղակեց բարեսիրտ Տարասկոն-
 ցին և պատրաստուեց դէմ դնել վիրաւորուած
 գազանին. սակայն գազանը փոխանակ յարձա-
 կուելու մոնչելով սկսեց փախչել: Տարտարէնն
 անշարժ մնաց իւր տեղում. նա այժմ սպասում
 էր քածին...: Չէ որ գրքերի մէջ ասուած է,
 որ որձը վիրաւորուելիս քածը օգնութեան
 է հասնում...:

Բայց զժբաղդաբար քածը չէր երևում:
 Երկու-երեք ժամ գուր տեղն սպասելուց լետոյ
 նա այնքան յոգնեց որ այլևս ոտների վրայ
 կանգնել չէր կարող: Գիշերուայ ցօղն արդէն
 իջնում էր գետնի վրայ, օդը ցրտում էր, ծո-

վային քամին աւելի և աւելի զգալի էր դառնում: « Դե՛ քա՛յ դո՛ քոսոյ շմջ ... Եւսոյ՞ ընդոյ՞մ ապա՞ — Լաւ և իրլինի, եթէ մինչև արևածագը փոքր ինչ մեկնուեմ հանգստանամ, ասաց չնաշխարհիկ որսորդը և մրտելուց խոյն տալու համար մտածեց բաց անել ճանապարհորդական վրանը: Բայց սատանի նման այդ վրանը մի այնպիսի բարդ կազմուածք ունէր, որ ինչ արաւ-չարաւ, խեղճը չկարողացաւ բաց անել: Վերջապէս բարկացած վրանը ձգեց գետնին և միքանի չաղ-չաղ լինջոցներ դուրս թափելով բերանից ինքն էլ մեկնուեց վրանի վրայ:

« Տա՛, տա՛, ըս, ըն տարարա՛... »:

— Այդ ինչ ձայն էր, — բացականչեց Տարտարէնը քնատեղից լանկարծ վերցատկելով:

Այդ գինուորական փողի ձայնն էր, որ լրսվում էր մօտակայ գինուորանոցից. արդէն առաւօտեան փողն էին հնչեցում... Առիւծների որսորդը շուարած աչքերն էր ճմռում... Նա՛ որ կարծում էր իրան անսահման անապատի մէջ... այժմ գիտէք ուր էր գտնվում... մի բանջարանոցում, մի կողմից կաղամբի, միւս կողմից ճակնդեղի շարքերի մէջ...:

« Դարտարէնի Սահարան ծածկուած էր գեղեցիկ բանջարեղէնով... Նրանից փոքր ինչ հեռու՝ Մուտաֆայի կանաչագարդ կողերի վրայ արշալուսի

պայծառ ցօղի արանքից շողշողում էին ալժիրական փառահէղ մարմարինոնեայ ամարանոցները...:

Այդ անսպասելի տեսարանն աւելի ևս զարմացրեց մեր խեղճ հերոսին և լցրեց նրա սիրտը դառնութեամբ:

« Այստեղի մարդիկ բոլորովին լիմար են, ասում էր նա, որ առիւծների կողքին կաղամբ և ճակնդեղ են ցանում...: Ձէ՞ որ առիւծները հասնում են մինչև այստեղ... և այդ արդէն շնորհք է...: Եւսոյ՞ կենդանի ասլացուցը... »:

« Կենդանի ասլացուցն՝ այն արեան բծերն էին, որ գազանը փախչելու ժամանակ թողել էր ճանապարհի վրայ: Այդ արիւնոտ հետքերի վրայ կռացած, աչքերը չռած, ատրճանակը ձեռքին բռնած, քոջասիրա Տարասկօնցին կաղամբից կաղամբ և ճակնդեղից ճակնդեղ թռչելով վերջապէս հասաւ մի փոքրիկ արտ, որտեղ վարսակ էր ցանած...: Այդտեղ կոտորուած հասկերի մէջ, արեան լճում թաթախուած մի ահագին վէրք գլխին՝ կողքի վրայ մեկնուած էր մի հաստ... Հաստ իմացէք թէ ինչ... »:

— Ի հարկէ որ առիւծ, ուրիշ ինչ կարող էր լինել: յայտարարեց յմա զձ նամմնայ սծծ

— Ո՛չ, եանդլիշ էք... մի հատ աւանակ, մէկն այն փոքրիկ աւանակներից, որոնք այնքան տարածուած են Ալժիրում:

յն ճիկիկներ կարծես խլացել էր և ոչինչ չէր լսում...: Բարեբաղդաբար այդ ըուպէին մի երրորդ անձնաւորութիւն երևաց պատերազմի գաշտի վրայ: Այդ պատաւի սմուսինն էր, որ պանդոկ էր պահում և շատ լաւ հաշուատես էր: Երբ նա նկատեց թէ ում հետ գործ ունի և իմացաւ որ սպանիչը համաձայն էր վճարել իւր զոհի գլխագինը, իսկոյն գինաթափ արաւ սպառաւին և գործը կարգի դրեց:

Տարտարէնը վճարեց երկու հարիւր Փրանկ. իսկ աւանակն՝ արժէր շատ-շատ տասը Փրանկ և ոչ աւելի: Ս. յնուհետեւ նրանք թողեցին աւանակին մի թղենու տակ և պանդոկապետը զուարթացած տարասկօնեան ոսկիների փայլով, հրաւրեց մեր հերոսին իւր պանդոկը, որ գտնվում էր մի քանի քաջ հեռու, մեծ ճանապարհի կողքին...

Այժմ երբ որ սորդներն ամեն կիւրակի հաւաքվում էին այդ պանդոկում նախաճաշելու, որովհետեւ այդ տեղը որսի համար շատ լաւ տեղ էր, մանաւանդ ճագարների կողմից...:

- Իսկ առիւծներ, հարցրեց Տարտարէնը.
- Առիւծներ, պատասխանեց պանդոկապետը զարմացած նրա երեսին նայելով:
- Այո՛, առիւծներ, միթէ առիւծներ եր-

բէք չեն պատահում, կրկին անգամ հարցրեց խեղճ հերոսն արդէն փոքր ինչ յուսահատուած ձայնով:

Պանդոկապետը չկարողացաւ ծիծաղը բռնել:

— Ինչ առիւծ, ինչ բան...: Առիւծներն այստեղ քնչ գործ ունին:

— Բայց միթէ Այժմիւրում առիւծներ չկան:

— Ես իմ Աստուած, կեանքումս չեմ տեսել, թէեւ ահա քսան տարուց աւելի է որ ապրում եմ այս կողմերում: Սակայն լսել եմ և կարծեմ մինչև անգամ լրագրներում կարդացել եմ որ կան... միայն թէ ոչ այստեղ, այլ այստեղից շատ հեռու, Ա. Փրիկայի խորքերում — հեռաւոր հարաւում...:

Այդ ըուպէին նրանք հասան պանդոկ, մէկն այն պանդոկներից, որոնց նմանն ամեն տեղ կարելի է հանդիպել: Դռան գլխին մի չորացած ծառի ճիւղ և պատերի վրայ բլիկարդի ձողեր էին նկարած հետեւեալ համեստ արձանագրութեամբ.

ՂՕՉՁԱՂՆԵՐԻ ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ղօչչաղների ժամագրութիւն...: Ա. կանջը կանջի, ո՞վ Բրաւիդա...:

Ե Երևան 1917 թ. հունիսի 15-ին
 Հանրակառքի, մաւրիտանացի կտոջ եւ յասմիկեայ փնջի
 պատմութիւնը:

Նատ քիչ մարդ կըստասհի որ հէնց ա-
 ռաջին քայլում հանդիպէ այդպիսի անյաջողու-
 թեան և չյուսահատուի. բայց Տարտարէնի նման
 միտուած մարդիկը շուտով չեն ընկճվում:

— Առիւծները հեռաւոր հարաւումն են, —
 մտածեց հերոսը. էհ, ինչ կայ որ. շատ լաւ,
 ես էլ կըզնամ հեռաւոր հարաւ:

Եւ վերջին պատառը կուլ տալուն պէս,
 տեղիցը վեր կացաւ, շնորհակալութիւն արաւ
 պանդոկատիրոջ, անոխակալ սրտով համբու-
 րուեց պառաւի հետ, մի վերջին կաթիլ ար-
 տասուք թափեց թշուառ իշուկի վրայ և ան-
 միջպէս ճանապարհ ընկաւ քաղաք՝ հաստատ
 մտքին դրած լինելով շորերը կապել և նոյն
 իսկ օրը ուղևորուել դէպի հեռաւոր հարաւ:

Իժբաղդաբար քաղաք տանող ճանապարհն
 այսօր կարծես երէկուանից աւելի հեռացել էր.
 արեգակը սարսափելի կերպով այրում էր. օդը
 լցուած էր փոշիով. վրանը և զէնքերը սաս-
 տիկ ճնշում էին...: Տարտարէնը զգաց որ ոտ-
 քով չպիտի կարողանայ քաղաք հասնել, ուստի

նա կանգնեցրեց առաջին հանգիստը հանրա-
 կառքը և մտաւ մէջը: Ս.հ. խեղճ Տարտարէնի Տարտարէն: Հա-
 զարպատիկ աւելի լաւ կըլինէր նրա անուան,
 նրա փառքի համար, եթէ նա մտած չլինէր այդ
 անիծուած կառքի մէջ և ոտքով շարունակած
 լինէր իւր ճանապարհը, թէկուզ նա կաթուա-
 հար լինէր օդի, վրանի և զէնքերի ծանրու-
 թեան տակ...:

Տարտարէնը բռնեց կառքի մէջ ազատ
 մնացած միակ տեղը: Մի ծայրում նստած էր
 մի ուսամօրուք կրօնաւոր, քիթը աղօթագրքի
 մէջ թաղած. նրա դէմուդէմը մաւրիտանացի
 մի երիտասարդ վաճառական, որ անգագար ծը-
 խում էր. լետոյ մի մալթացի նաւաստի և չորս
 թէ հինգ մաւրիտանացի կանայք, որոնք ոտից
 մինչև գլուխ փաթաթուած էին սպիտակ ծած-
 կոցներով. ծածկոցի տակից երևում էին մի-
 միայն նրանց աչքերը: Նրանք գնացել էին այ-
 ցելութեան Արդ-էլ-Կագիրի գերեզմանին և
 այժմ լետ էին դառնում, բայց այցելութիւնը,
 ինչպէս երևում էր, առանձին տրամութիւն չէր
 պատճառել նրանց. նրանք անգագար քաղցրեղէն-
 ներ էին կոծողում և ծածկոցի տակ հրհրում
 ու փսփսում էին մէկմէկու ականջին:

Տարտարէնին այնպէս թուաց որ նրանք

շատ են իւր վրայ նայում: Մանաւանդ մէկը, որ նստած էր իւր գէմուդէմը, աչքը քցել էր իւր աչքերին և ամբողջ ճանապարհին իրան էր մտիկ տալիս: Թէև այդ կնոջ երեսը ծածկուած էր քօղով, այսուամենայնիւ նրա խոշոր և սևորակ աչքերի փայլը, նրա սիրուն և գողտրիկ բազուկները, նրա ձայնի քաղցր հընչիւնը, նրա գլխի նազելի շարժումները—այդ ամենը պարզ ցոյց էր տալիս որ ծածկոցի տակ թաքնուած է մի դեռատի, չքնաղ, պաշտելի արարած...: Խեղճ Տարտարէնը նստած տեղը տանջվում էր: Արևելեան այդ հրացայտ աչքերի լուռ փաղաքշանքը նրան այրում, սպանում էր. նա մէկ քրտնում էր, մէկ սառչում...:

Այդ իբր թէ բաւական չէր, հողաթափներն էլ մէջ մտան...: Նա զգում էր ինչպէս իւր որսորդական կուպիտ կօշիկների վրայից փոքրիկ մկան նման անդադար անցուդարձ էին անում գեղեցկուհու հողաթափները. և այդ սարսափելի կերպով խողտում էր իւր ամբողջ մարմինը... Ի՞նչ անել, Տէր Աստուած, պատասխանել արդեօք այդ հրացայտ հայեացքներին, այդ խողտիչ շարժումներին...: Դիցուք թէ այժ, իսկ հետևանքը...: Սիրային արկածը Արեւելքում,—չէ՞ որ այդ մի սարսափելի բան է...:

Եւ իւր վիպական ու տարասկօնական երե-

ւակայութեամբ քաջասիրտ Տարտարէնը տեսնում էր իրան արդէն ներքինիների ձեռքում, գլուխը կտրած, մի տուրակի մէջ կարուած, ժալովի ծայրից դէպի ծովն է գլորվում: Այդ հանգամանքը փոքր ինչ սառցնում էր նրան...:

Իսկ փոքրիկ հողաթափները շարունակում էին իրանց խողտիչ արշաւանքները և հրացայտ աչքերն աւելի ևս լայն բացուելով նմանում էին երկու թաւշեայ ծաղիկների, որոնք կարծես ասում էին.

—Քաղեր մեզ, քաղիր:

Կառքը վերջապէս կանգ առաւ թատրոնեան հրապարակի վրայ, Բաբ-Ազուն փողոցի հանդէպ: Վայրենի նազով սեղմուելով իրանց ծածկոցների մէջ մաւրիտանացի տիկիները մէկ-մէկու ետևից իջան կառքից. ամենից վերջը իւր տեղից բարձրացաւ Տարտարէնի տիկինը, և բարձրանալու ժամանակ այնպէս մօտեցրեց իւր դէմքը հերոսի դէմքին, որ սա զգաց նրա շունչը, լի թարմութեամբ և երիտասարդութեամբ, լի լասմիկի, մուշկի և քաղցրաւենիների անուշ բուրմունքով...:

Տարասկօնցին այլևս չկարողացաւ դիմանալ: Հարբած սիրոյ զգացմունքով և գլուխը կորցրած նա սրացաւ մաւրիտանացի տիկնոջ ետևից... նրա քայլերի ձայնի վրայ տիկինը գլուխը լետ

դարձրեց, մէկ մատը տարաւ դէպի շրթունքը, կարծես ուզում էր ասել «սուս», իսկ միւս ձեռքով ձգեց նրան մի հոտաւէտ փունջ, հիւսած յասմիկ ծաղիկներից: Տարտարէնը կռացաւ որ փունջը վերցնի, և որովհետեւ մեր հերոսը մի քիչ ծանր էր, մի քիչ էլ գէնքերն էին ծանրացնում, ուստի և նա չկարողացաւ շուտով կատարել այդ գործողութիւնը...:

Երբ նա փունջը գետնից վերցրեց և սրտի վրայ սեղմած գլուխը վեր բարձրացրեց, գեղեցիկ մաւրիտանուհին այլևս չկար: Նա անյայտացել է:

Ը

Այլա լեռների տախտեր, քնեցէք:

Այլա լեռների առիւծներ, քնեցէք: Քրնեցէք անխռով ձեր խոր որջերի մէջ, վայրենի կակուտների և հալուէների արանքում... մի քանի օրից լետոյ Տարասկօնցի Տարտարէնն այլևս կրմոռանայ ձեզ: — Այժմ նրա բոլոր պատերազմական գործիքները, նրա գէնքերը, նրա գեղարանը, նրա վրանը, նրա պաշարեղէնը, այդ բոլորը կապած կապկպած հանգստանում են հիւրանոցի անկիւնում:

Հանգստացէք և դուք գիսապանծ առիւծներ, և թող սպանչի երկիւղն այլևս չվրդովէ ձեր խաղաղ բունը: Տարասկօնցու միտքն այժմ ուրիշ տեղ է. նա իւր մաւրիտանուհուն է փնտրում: Հանրահառքի գէպքից լետոյ խեղճ մարդն անընդհատ գգում էր իւր կոշտ ստների վրայ հողաթափների փափուկ խողտանքը. օգի մէջ, ծովից փչող քամու և երեկոյեան զեփիւռի մէջ, ամեն տեղ էլ նա գգում էր յասմիկի, մուշկի և քաղցրաւենիների անուշ բուրմունքը:

Նա առանց մաւրիտանուհու այլևս չէր կարող ապրել. պէտք էր փնտրել, պէտք էր անպատճառ գտնել նրան:

Բայց ուր փնտրել, թնչպէս գտնել: Ալժիրի նման բազմամարդ քաղաքում գտնել այն կնոջ, որի շունչը, աչքերի և հողաթափների գոյնն է միայն քեզ ծանօթ, այդ հեշտ բան չէ: Միմիայն սիրահարուած Տարասկօնցին կարող էր այդ տեսակ բան մտածել:

Ամենից սարսափելին այն էր որ մաւրիտանուհիները բոլորն էլ միևնույն ձևով հագնուած և միևնույն տեսակ ծածկոցով փաթաթուած լինելով ամենեւին մէկմէկուց չէին որոշվում. բացի դրանից յայտնի է որ Արևելքում կտնայք առհասարակ տնից չեն դուրս գալիս: Նրանց տեսնելու համար պէտք է գնալ քա-

ղաքի այն մասը, որտեղ *Թուլքերն* են ապրում:
 Իսկ քաղաքի այդ մասը ով չգիտէ որ մի կատարեալ աւազականոց է: Ծուռուձուռ, նեղ ու մուժ փողոցներ, որտեղ տները այնքան մօտ են իրար որ նրանց տանիքները համարեա կըսչում են մէկմէկու և կազմում են մի խաւար տունէլ: Տների դռները ցած, պատուհանները փոքրիկ, տխուր և վանդակապատ. աջ և ձախ փոքրիկ մռայլ խանութներ, որտեղ կատաղի թուրքերը գլուխները չալմայով փաթաթած վայրենի աչքերը և փայլուն ատամները սրած ծխում են և անդադար իրար մէջ փսփսում...: Աստուած գիտէ թէ ինչեր են փսփսում:

Չեմ կամենում ձեզանից ծածկել որ մեր Տարտարէնն առանց ներքին յուզման չէր կարող անցնել այդ փողոցներից: Ընդհակառակը նա սաստիկ յուզուած էր և այդ մուժ տեղերից անցնելիս միշտ չափազանց զգուշութեամբ դէսուդէն էր նայում և ձեռքից բաց չէր թողնում ատրճանակի ոտքը: Ամեն քայլափոխում նա սպասում էր որ ահա ներքինիները և ենիչերիները կըթափուին իւր վրայ. սակայն մաւրիտանուհու սէրը նրան ոգևորում և հսկայի սիրտ էր տալիս:

Ութ օր շարունակ անվեհեր Տարտարէնը թափառում էր թուրքերի թաղերում: Երբեմն

արագիլի քայլերով ճեմում էր նա բաղնիքների առաջ սպասելով այն ժամին, երբ կանայք լուացուած ու կարմրատակած խումբ-խումբ դուրս էին գալիս բաղնիքից. երբեմն ամբողջ ժամերով ծալապատիկ նստում էր մզկիթների դռների առաջ և աչքը ձգած նայում էր մրտնոդ-եյլոդներին:

Պատահում էր որ երբ մուժն ընկնում էր և նա յուսահատուած վերադառնում էր դէպի հիւրանոց, որեւիցէ մաւրիտանական տան մօտով անցնելիս յանկարծ նրա ականջին էին ընկնում երգեցողութեան, կիթառի, թմբուկների և կանացի ծիծաղի ձայներ: Նրա սիրտն իսկոյն սկսում էր սաստիկ կերպով տրոփել...:

„Կարելի է նա այս տան մէջն է“, մտածում էր նա. և եթէ փողոցում մարդու նշան չկար, մօտենում էր այդ տանը. ձեռքը տանում էր տան դռան և կամացուկ խփում էր...: Երգեցողութիւնն ու ծիծաղն իսկոյն ընդհատվում էին. դռան ետեւից լսվում էին փսփսոցի ձայներ:

— Սիրտ առ, Տարտարէն,— քաջալերում էր նա ինքնիրան. — այս ըոպէիս գլխիդ մի խաթա պիտի գայ:

Բայց իաթի փոխանակ կամ մի կուժ սառը

շուր էին թափում նրա գլխին և կամ թզի ու նարնջի կեղևներ...:

Ուրիշ որևէ ծանր դէպք երբէք չէր պատահում:—Քնեցէք, Ատլաս լեռների առիւծերը, քնեցէք:

Թ

Մոստէսեգրոյի Գրեգորի իշխանը:

Ամբողջ երկու շաբաթ խեղճ Տարտարէնը փնտրում էր իւր ալթիրցի տիկնոջ և հաւանականաբար գեռ էլի շատ կըփնտրէր, եթէ սիրահարների Աստուածը նրան օգնութեան չհասնէր ի դէմս մէկ ալբանացի ազնուականի:

Ահա թէ բանն ինչպէս պատահեց:

Զմեռուայ ամեն շաբաթ երեկոյեան Ալթիրի մեծ թատրոնում տեղի է ունենում փառաւոր զիմակահանդէս: Գահլիճում մեծ բազմութիւն չէ լինում—միքանի յետ ընկած դերասաններ, միքանի այն տեսակ կանայք, որոնք ամեն տեղ գնում են զօրքի ետեւից, և հինգ թէ վեց հատ էլ լուացարար աղջիկներ, որոնք իրանց առաքինի կեանքից միակ լիշատակ են պահում սխտորի և զաֆրանի հոտը...:

Գլխաւոր հանգիսատեղին իսկուպէս այն

գահլիճն է, որտեղ թղթախաղն է լինում: Սրտեղ կանաչ սեղանների շուրջը խռնվում են տենդոտ և կրքոտ խաղացողները—թուրքեր, մաւրներ, նեգրներ, մալթացիներ և հասարակ զիւղացիներ, որոնք չեն խնայում մի ամբողջ գութանի կամ մի զոյգ լծկանի գինը մէկ անգամից դնել մի մէկնոցի կամ մի թագաւորի վրայ...:

Նայեցէք նրանց դէմքերին. ամենքի գոյնը թռած, ատամները սխմած, աչքները կրակ կրտրած, բոլոր ուշադրութիւնը միայն մէկ կէտի, մէկ թղթի վրայ է ամփոփած: Աւելի հեռուն կանգնած են երբայցիներն իրանց երկայն բաճկոնակներով և սև թաւշեայ գլխարկներով: Նըրանք լուռ են և մտախոհ. միայն երբեմն-երբեմն, թեթև խորհրդակցութիւնից յետոյ, մի երկայնամօրու ծերունի պատրիարք՝ Հայր Աստուծո կերպարանքով մօտենում է սեղանին և մի խաղ է խաղում. այդ ժամանակ բոլոր երբայական աչքերը, այդ սև սաթի նման աչքերը սևեռվում են թղթերի վրայ և կարծես կախարդում են ոսկեայ գրամները, որոնք մէկմէկու ետեւից կարծես թե լի վրայով անցնում և ընկնում են նրանց անյատակ գրպանները:

Աւելորդ է լիշել թէ ինչ կռիւներ, ինչ պատերազմներ, ինչ հայհոյութիւններ, ինչ

աղաղակներ և ինչ գողութիւններ ու անկարգութիւններ են պատահում այդ աւազակային որջի մէջ...:

Ահա այդ դժոխային զբօսավայրն էր, ուր Տարտարէնը մի երեկոյ եկել էր հոգեկան անդորրութիւն և վշտերի մոռացումն գտնելու համար:

Բազմութեան մէջ միայնակ մնացած՝ մեր հերոսը հանդարտ քայլերով ճեմում էր դահլճում մտածելով իւր մաւրիտանուհու մասին: Մէկ էլ յանկարծ սեղաններից մէկի մօտ, ոսկիների զրնգոցի միջից լսելի եղան երկու բարկացած ձայներ:

— Ես ձեզ ասում եմ որ այդ քսան Փրանկն իմս է, պարոն:

— Պարոն...:

— Այո՛, պարոն, իմս է:

— Իմացէք թէ ո՛ւմ հետ էք խօսում, պարոն:

— Իմանալու կարիք չկայ, ես այդ լաւ եմ տեսնում, պարոն:

— Ես Մոնտէնեգրօյի Գրէգօրի իշխանն եմ, պարոն:

Այդ անուան վրայ Տարտարէնը, բոլորովին յուզուած, ճղեց ամբօխը և մօտեցաւ սեղանին: Նա ուրախ էր և հպարտ որ գտաւ իւր իշ-

խանին, այն քաղցրաբարոյ և քաղաքավար իշխանին, որի հետ պատիւ էր ունեցել ծանօթանալու նաւի վրայ...:

Իժբաղդաբար այդ բարձր իշխանական տիտղոսը, որ այնքան շլացուցիչ էր միամիտ Տարասկօնցու համար, ոչինչ տպուկորութիւն չարաւ սպայի վրայ, որի հետ իշխանը կռուի էր բռնուել:

— Ինձ քննէ թէ դուք ո՛վ էք, — պատասխանեց սպան ծիծաղելով. և երեսը դարձնելով ամբօխին աւելացրեց. — Մոնտէնեգրօյի Գրէգօրի իշխան, ո՞վ է ձանաչում այդ իշխանին...: Ո՛չ ոք: Տարտարէնը յուզուած մի քայլ ևս առաջ դնաց:

— Ներեցէք, պարոն, ես պատիւ ունիմ ձանաչելու իշխանին, ասաց նա ամենալուրջ և ամենահաստատ ձայնով:

Սպան մի ընդդէմ նայեց նրա երեսին՝ յետոյ ուսերը թափ տալով ասաց.

— Լա՛ւ, լա՛ւ, տարէք բաժանեցէք ձեր մէջ իմ քսան Փրանկը, հալալ լինի:

Եւ այս ասելով կռնակը դարձրեց ու անյայտացաւ բազմութեան մէջ:

Տաքարիւն Տարտարէնը կամենում էր յարձակուել նրա ետևից, բայց իշխանը թո՛ղ չտուէր՝ ասելով.

գրաստ—Թողէք, ես գիտեմ թէ ինչ կ'անեմ ներ-
քան: Եւ յիշեմ զձեր անարար անարար անարար

Եւ մտնելով Տարասկօնցու թեւը, շտապ
քայլերով դուրս եկաւ դահլճից: Եւ յիշեմ զձեր
անարար անարար անարար անարար անարար
Հէնց որ յոտքները դուրս գրին՝
Մտնտէնեգրօյի իշխանը գլխակը վերցրեց, ձեռքը
մեկնեց մեր հերոսին և գողգոջուն ձայնով
բացադանչեց:

— Պարոն Բարբարէն... շնորհակալ

— Տարտարէն— ամօթխածութեամբ ուղ-
ղեց հերոսը: Եւ յիշեմ զձեր անարար անարար

— Տարտարէն թէ Բարբարէն յայդ միև-
նոյն է: Եւ յիշեմ զձեր անարար անարար անարար
դուռը սերտ բարեկամներ ենք:

Եւ ազնուաշուք իշխանը բուռն եռանդով
թափ տուեց նրա ձեռը: Կարող էք երևակայել
Տարասկօնցու ուրախութիւնը և հպարտու-
թիւնը:

— Իշխան... իշխան, կրկնում էր նա ան-
ասելի հրճուանքով: Եւ յիշեմ զձեր անարար անարար

Քառորդ ժամ անցած երկու բարեկամները
նստած ծովափեայ ճաշարաններից մէկում կրե-
չիալի ազնիւ գինով սրբագործում էին իրանց
նոր բարեկամութիւնը:

Զարմանալի դուրեկան մարդ էր այդ Մոն-
տէնեգրօյի, իշխանը: Գեղեցիկ, բարեկազմ,

խոսող մազերով, մաքուր սափրուած, կենդանի
և վարվաւոր պայքերով, շնորհալի շնորհուած-
քով, զարգարնած ալլալի շքանշաններով և
թեթեւ իտալական առողջանութեամբ, որով նա
նմանում էր Մագարինին՝ միայն առանց բեխի:
Նա շատ հմուտ էր լատինական լեզուին, որով
հետև իւրաքանչիւր ընդէ վկայութիւններ էր
բերում Տակիտոսից, Ովրատիոսից և Յուլիոս
Վեսարից:

Ինչեւ լինելով հին կալուածատէր ազնուական-
ների տոհմից, նա համարեա տասը տարեկան
հասակից ենթարկուել էր իւր եղբայրների հա-
լածանքներին, իբր թէ իւր ազատամիտ գաղա-
փարների համար: Այդ ժամանակուանից նա
թափառում էր աշխարհէ աշխարհ մասամբ անձ-
նական գուարճութեան և մասամբ էլ մտաւոր
զարգացման համար: Բայց զարմանալի տարա-
դիպութիւն. իշխանն ամբողջ երեք տարի անց
էր կացրել Տարասկօնում...: Երբ Տարտարէնը
լայտնեց իւր զարմանքը որ երբէք չէ հան-
դիպել նրան ոչ ժողովարանում և ոչ էլ քա-
ղաքական զբօսարանում, իշխանը խուսափիչ
ձայնով պատասխանեց որ ինքը շատ քիչ էր
տնից դուրս գալիս...: Տարասկօնցին քաղա-
քավարութիւնից ստիպուած չկամեցաւ ալլա
կանգ առնել այդ խնդրի վրայ: Նա բաւականա-

ցաւ միայն նրանով որ բոլոր մեծ մարդկանց կեանքը ծածկուած էր մի տեսակ գաղտնիքով...:

Մի խօսքով մի սքանչելի տղայ էր այդ երիտասարդ իշխանը: Անդադար ազնիւ զինին կուլ տալով նա մեծ համբերութեամբ ականջ էր դնում Տարտարէնին, որի խօսակցութեան նիւթը դարձեալ մաւրիտանուհին էր: Նա մինչև անգամ խոստացաւ որ ինքն այդ տեսակ բաներում փորձուած լինելով, հեշտութեամբ կարող է գտնել խորհրդաւոր զեղեցիկուհուն:

Երկար ժամանակ նրանք նստած կոնծում էին, ի միջի այլոց չմոռացան անուշ անել նաև Ալժիրի տիկիներէի և ազատ Մոնտէնեգրօյի կենացները: Իսկ ցածու՝ նրանց ոտքերի տակ ծովը կոծում էր և ալիքները զարնուելով փեղին այնպիսի ձայներ էին հանում, ինչպէս ջրի մէջ թրջած մահուղը թափ տալու ժամանակ: Եղանակը տաք էր և երկինքն աստղալից: Պլատանների միջից սոխակը հնչեցնում էր իւր քաղցր դալապիկը...:

Փողը վճարեց Տարտարէնը:

ժ

Գու ինձ ասն քո հօր անունը, ես քեզ կ'ասեմ այս ճաղկի անունը:

Միւս օրը վաղ առաւօտեան իշխան Գրէ-գօրին արդէն Տարտարէնի սենեակումն էր:

—Շուտ, շուտ արէք, հագնուեցէք...: Ձեր մաւրիտանուհին գտնուած է...: Նրա անունը Բաիա է... քսան տարեկան, ջահէլ, սիրուն և արդէն այրի...:

—Այրի..., ինչ բաղդաւորութիւն, —բացազանչեց հերօսը, որ այսուամենայնիւ շատ էր կասկածում Արեւելքի խանդոտ ամուսիններից:

—Այո, այրի՝ միայն թէ իւր եղբօր խիտ հսկողութեան տակ:

—Գրողը տանի եղբօրը...:

—Եղբայրն էլ մի վայրենի մարդ է. շուկայում ծխամորճների առուտուր է անում:

Տարտարէնը լուեց և ընկաւ մտատանջութեան մէջ. իշխանն այդ նկատեց և վրայ բերաւ.

—Բայց ի հարկէ այդ ձեզ համար ոչինչ: Դուք այն մարդկանցից չէք, որոնք այդպիսի դատարկ բաներից քաշվում են: Բացի դրանից միքանի հատ ծխամորճ առնելով ես յոյս ունիմ որ դուք միանգամայն շահած կըլինիք եղբօր

սիրտը...: Դէ՛հ, շուտ արէք հագնուեցէք...
բաղդաւոր էք, բաղդաւոր:

Երեսի գոյնը թռած, սիրտը յուզուած և
լի սիրոյ զգացմունքով Տարտարէնը ցատկեց ան-
կողնից և տաճկական լայն վարտիկը շտապ-
շտապ կոճկելով՝ հարցրեց.

— Աւրեմն ինչ պէտք է արած:

— Ինչ պէտք է արած. — պէտք է իսկոյն
նամակ գրել տիկնոջ և ժամադրութիւն խընդ-
րել:

— Աւրեմն նա ֆրանսերէն է՞ լ գիտէ, —
հիասթափուած ձայնով հարցրեց միամիտ Տա-
ասկոնցին, որ իւր սիրուհուն երազում էր մի
անխառն արևելցի:

— Մի բառ անգամ չգիտէ, — պատասխա-
նեց իշխանն անյողգողգ եղանակով. — դուք ինձ
կըթելադրէք և ես կըթարգմանեմ արաբերէն:

— Ինչքան քարի էք, իշխան, ինչքան բա-
րի էք...:

Եւ Տարասկոնցի հերոսը ձեռքը ճակատին
դրած սկսեց մեծ-մեծ քայլերով ճեմել սենեակի
մէջ:

Հասկանալի է որ ալժիլըցի մաւրիտանու-
հուն չէր կարելի այնպիսի նամակ գրել, ինչպէս
որ գրում են Փարիզի գեղանիներին: Բարեբաղ-
դաբար մեր հերոսը շատ կարգացած մարդ էր

և կարող էր Գուստաւ Էմարի հնդկական պեր-
ճախօսութիւնը խառնելով Լամարտինի Արևել-
լիակն ճանապարհորդութեան յոճի հետ, և
այդ ամենը համեմելով Երգ Երգոցի բանաս-
տեղծական կտորներով, մի այնպիսի նամակ
կազմել, որ միանգամայն համապատասխան լինէր
արևելեան ճաշակին: Նամակն սկսվում էր Երգ
Երգոցի հետևեալ խօսքերով.

— «Ինչպէս ջայլամը անասլատի աւագնե-
րի մէջ...» և վերջանում էր այսպէս.

— «Դու ինձ ասան քո հօր անունը, ես քեզ
կրպակմ'այլ ծաղկի անունը...»: Նամակի հետ
միասին սերահար Տարտարէնը կամենում էր
ուղարկել նաև խորհրդաւոր ծաղիկների մի
փունջ, ինչպէս որ այդ պահանջում է Արևել-
քի սովորութիւնը, բայց իշխան Գրեգորին
յայտնեց որ աւելի լաւ է փնջի փոխանակ
ուղարկել միքանի հատ ծխամորճ: սրանով նա
նախ գրաւած կըլինի վայրենի եղբօր սիրտը, և
երկրորդ՝ մեծ հաճույք պատճառած կըլինի տիկ-
նոջ, որ շատ սիրում է ծխել:

— Դէ՛հ, շուտ անենք, գնանք ծխամորճներ
գնենք, — սոսց Տարտարէնն անհամբեր ձայնով:

— Ո՛չ... ո՛չ... թողէք ես մենակ գնամ.
Ես աւելի աժան կըգնեմ:

— Ինչ...: Գուր ինքներդ էք ուզում

իւր փոքրիկ բաց օտներով, իւր մատանիներով
 զարգարուած փափուկ մատներով, իւր վարդա-
 գոյն թխիկ թշերով: Արևելեան երուկեթել ըզ-
 գեստը շնորհալի կերպով նստած էր նրա վրայ
 և ցոյց էր տալիս որ այդ զգեստի տակ թաք-
 նուած է մի նազելի, մի գիրուկ, մի կլորիկ,
 մի ջերմ կենդանի մարմին...: Նարգիլէի սա-
 թեալ գլուխը ծխում էր նրա գեղեցիկ շրթունք-
 ների արանքում և ծրարում էր նրան հոտա-
 ւէա և խորհրդաւոր մշուշով: Մտնելով ներս
 Տարասկօնցին մի ձեռքը դրեց սրտի վրայ
 և արևելեան սովորութեամբ մէջքից
 մինչև գետին կռանալով խորը գլուխ
 վեր բերեց: Կռանալու ժամանակ նա շոտա-
 ցաւ կիսախուփ աչքերը կրքոտ կերպով դէպի
 վեր ոլորել...: Բախան մի րոպէ անձայն նայեց
 նրա երեսին, լետոյ նարգիլէն ձեռքից բաց
 թողնելով գլուխը շուռ տուաւ և ծածկեց
 ձեռները մէջ: Մի կատաղի, անզուսպ
 ծիծաղ թրթռեցնում էր նրա գիրուկ
 և ճերմակ պարանոցը, որ նմանում
 էր մարգարիտներով լեցուն պա-
 յուսակի:

ցլոցցիմէն սխուզի ԺԱ նիկ զն ողբելիլ բանն

Սիդի Տարտի Բէն Տարտի:

Եթէ մի երեկոյ մտնելու լինիք Ալթիբի
 ասիական մասի սրճարաններից մէկը և ականջ
 դնէք այնտեղ հաւաքուած մաւրիտանցիների
 խօսակցութեան, մինչև այսօր էլ գեռ յաճախ
 կըլսէք մի ինչ-որ Սիդի Տարտի Բէն Տարտի
 անունով Եւրոպացու մասին, որ միքանի տա-
 րի առաջ սպրում էր այդտեղ Բախա անունով
 մի գեռատի տիկնոջ հետ: Մաւրիտանցիները
 մինչև այսօր էլ չեն կարողանում առանց ժրպ-
 տալու և առանց իրար աչքով անելու լիշել
 այդ հարուստ և առատաձեռն Եւրոպացու ա-
 նունը:

Այդ Սիդի Տարտին ուրիշ մարդ չէր բայց
 եթէ, ինչպէս ընթերցողն արդէն զուշակում
 է, մեր Տարասկօնցի Տարտարէնը...:

Այն, մեծ սուրբերի և մեծ հերոսների
 կեանքում միշտ լինում են կուրացութեան,
 մոլորութեան և զայլթակղութեան ժամեր:
 Չնաշխարհիկ Տարասկօնցին ևս բացառութիւն
 չկազմեց այդ օրէնքից. երկու ամիս շարունակ
 նա մոռանալով առիւծներին և իւր փառքը
 անձնատուր եղաւ արևելքի մեղկութեան և

մնաց Ալթիրոււմը թմրած ինչպէս Աննիքալը
Կապուա քաղաքում:

Տարտարէնը քաղաքի ասիական մասում
վարձել էր մի շատ սիրուն տնակ արաբական
ճաշտով կառուցուած և զարդարուած բանան-
ներով, զով սրահներով և գեղեցիկ շադրուան-
ներով: Իւր մաւրիտանուհու հետ միասին առ-
անձնացած ապրում էր նա այդ տանը՝ հեռու
քաղաքային աղմուկներից, ոտից մինչև գլուխ
արաբական զգեստ հագած, առաւօտից մինչև
երեկոյ նարգիլէն բերանում բռնած և շրջա-
պատուած արևելեան համադամ կերակուրներով
ու քաղցրաւենիներով:

Նրա դէմուդէմը, մի գահաւորակի վրայ թեք
ընկած, կիթաուր ձեռին բռնած Բախան գանա-
զան ասիական եղանակներով ու սլաքերով աշ-
խատում էր գուարճացնել իւր միասնեակին:

Որովհետև ոչ տիկինը Փրանսերէն գիտէր
և ոչ էլ Տարտարէնը արաբերէն՝ այդ պատճա-
ռով էլ խօսակցութիւնը բաւական դանդաղ էր
առաջ դնում. այդ բանն զգալի էր մանաւանդ
Տարտարէնի համար, որ այնքան սովոր էր խօ-
սելու Բեզիւքէի դեղարանում կամ գինովաճառ
Պոստէկալդի խանութում:

Բայց այդ էլ ունէր իւր քաղցրութիւնը:
Տարտարէնը մի տեսակ գուարճութիւն և մեղ-

կութիւն էր զգում երբ ամբողջ օրն անխօս գա-
հաւորակի վրայ թեք ընկած նիրհում էր նար-
գիլէի զլլոցի, կիթաուի մեղմ հնչիւնների և մար-
դարտացող շագրուանների կարկաչիւնների տակ:

Նրա կեանքն ամբողջապէս բռնում էին
նարգիլէն, բաղնիքը և սիրոյ փափկութիւն-
ները: Նա շատ քիչ էր տնից դուրս գալիս:
Երբեմն-երբեմն միայն Սիդի Տարտրին իւր
տիկնոջ հետ միասին ջորիով գնում էին նուռն
ուտելու փոքրիկ այգում, որ գնել էր քաղաքի
շրջակայքում...: Բայց երբեք, ոչ մի անգամ
նա չէր իջնում քաղաքի եւրոպական մասը:
Այդ թաղը իւր անտանելի եւրոպացիներով մի-
անգամայն զգուելի էր նրա համար:

Մի խօսքով Տարասկօնցին բոլորովին եր-
ջանիկ էր և բազդաւոր: Երջանիկ էր մանա-
ւանդ Տարտարէն-Սանխօն, որ տաճկական հա-
մադամներով յլփացած ինքնաբաւական ժպի-
տով փառարանում էր իւր գոյութիւնը: Տար-
տարէն-Բիշօռը երբօր միտն էր բերում Տարաս-
կօնը և իւր խոստացած առիւծի մորթիները,
մէկ-մէկ խղճի մի թեթև խայթոց էր զգում,
բայց այդ երկար չէր տևում. Բախայի մի ակ-
նարկը կամ այն անիծած քաղցրաւենիների հօտը
բաւական էր մի ակնթարթում ցրուելու նրա
բոլոր տխուր մտածութիւնները:

Երեկոյեաններն իշխան Գրէգորին մտնում էր փոքր ինչ ազատ Մոնտէնէզրոյի մասին խօսելու... Զարմանալի պատրաստականութեամբ այդ բարեսիրտ ազնուականը կատարում էր Տարասկօնցո՛ւ տան մէջ և թարգմանի և մինչև անգամ տնտեսի պաշտօն. և այդ ամենը միմիայն լանու՛ն բարեկամութեան և իւր անձնական հաճոյքի համար...:

Բացի իշխանից Տարտարէնն ընդունում էր իւր մօտ և միքանի թուրքեր. այդ բոլոր կատաղի մարդիկ, որոնք մի ժամանակ այնքան սարսափ էին ազդում նրան, մօտիկ ծանօթութիւնից յետոյ դուրս եկաւ որ շատ բարի, շատ համեստ և շատ քաղաքավարի մարդիկ են: Մաքաթը երեք թէ չորս անգամ այդ պարոնները երեկոյեան հաւաքվում էին Սիդի Տարտրիի մօտ, նրա քաղցրաւենիներն անուշ էին անում, փողերը տանում և տասը ժամը խփելուն պէս հանգարտութեամբ տեղներից վեր էին կենում ու փառք տալով Ալլահին և իւր Մարգարէին քաշվում էին իբանց տները:

Նրանց գնալուց յետոյ Սիդի Տարտրին և իւր հաւատարիմ կողակիցը դուրս էին գալիս պատշգամբի վրայ, որտեղից նրանց աչքերի առաջ պարզվում էր ամբողջ քաղաքը: Զորս կողմը նոյնպիսի հազարաւոր պատշգամբներ,

լուսաւորուած լուսնեակի մեզմ ճառագայթներով, սանդխաձև իջնում էին մինչև ծովափը:

Գեղեցիկ և խորհրդաւոր է Ալթիլի լուսնկայ գիշերը: Եւ այդ խորհրդաւոր լուսթեան մէջ լանկարծ լսելի է լինում մի քաղցր մեղեդի, որ կայծակի նման ճղում անցնում է մըթնոլորդը. մերձակայ մինարէթի վրայ երևում է մի վայելչահասակ մուէզզին, որ իւր սքանչելի ձայնով լցնում է հորիզոնը երգելով Ալլահի փառքը և փառաբանելով Նրա Մարգարէի անունը:

Մուէզզինի ձայնը լսելուն պէս Բախան իսկոյն կիթառը ձեռքից ձգում էր և աչքերը սևեռած Սատո՛ւ պաշտօնեայի վրայ կարծես խմում էր նրա աղօթքի քաղցրութիւնները: Մինչև աղօթքի վերջը նա մնում էր այդպէս լափշտակուած, դողդոջուն, մտքով երկինք բարձրացած ինչպէս հնադարեան սրբուհիներից մէկը...: Տարտարէնը լուզուած նայում էր իւր կողակցին և ինքնիրան մտածում էր որ այդ մի շատ գօրաւոր և ճշմարիտ կրօն պէտք է լինի, որ կարողանում է այդպիսի ոգևորութիւն և ջերմեռանդութիւն ներշնչել իւր հաւատացեալներին...:

Նա գայթակղվում էր, երբ մտածում էր իւր սեպհական կրօնի մասին...:

Տարասկոն, ծածկիր զէմքէ ամօթի և տխրութեան քողով. քո գաւակդ արդէն մըտածում է հաւատուրաց լինել. . . :

ԺԲ

Տարասկոնից մեկ գրում են:

Մի օր իրիկնադէմին Սիգի Տարտին ջորու վրայ նստած միայնակ վերադառնում էր իւր փոքրիկ այգուց. . . : Ջորին բեռնաւորուած էր ձմերուկներով ու նարինջներով: Տարասկոնցին ոտքերն այդ բեռների վրայով չռած, ձեռքերը փորի վրայ գրած, տատանուելով զըրաստի միօրինակ քայլերից և նեղուած օդի տաքութեամբ կէս-քուն կէս-արթուն հանդարտ առաջ էր գնում, ուշք չդարձնելով շրջապատող բնութեան գեղեցկութեան վրայ:

Մէկ էլ լանկարձ՝ քաղաք մտնելիս՝ մի բարձր ձայն ստիպեց նրան սթափուել այդ թրմրած դրութիւնից:

— Վահ, գրողը տանի, կարծես պարոն Տարտարէնը լինի. . . :

Այդ անուան և Տարասկոնեան առողա-

նութեամբ արտասանուած այդ խօսքերի վրայ Տարտարէնը գլուխը բարձրացրեց և իրանից միքանի քայլ հեռու նկատեց Ջուլալ շոգենաւի նաւապետ Բարբասուին, որ սրճարաններից մէկի առաջ նստած ծխախոտը բերանին աբսէնթ էր խմում:

— Ան, բարով, բարով, պարոն Բարբասու, բացազանչեց Տարտարէնը և ջորին կանգնեցրեց:

Բարբասուն փոխանակ պատասխանելու, մէկ րոպէ աչքերը չռած նայեց նրա վրայ, լեռնային մի այնպիսի սաստիկ ծիծաղ բարձրացրեց, որ Սիգի Տարտին ինչպէս որ կար այնպէս էլ մնաց իւր ձմերուկների ու նարինջների վրայ ստուած, քար կտրած:

— Այդ ինչ փաթթոց է գլխիդ փաթթած, պարոն Տարտարէն. ուրեմն ճշմարիտ է որ ասում են թէ դուք թրքացել էք. . . : Իսկ ինչ է անում փոքրիկ Բահան, էլի Փարիզի փողոցային երգեր է երգում. . . :

— Փարիզի երգեր, — կրկնեց Տարտարէնը վերաւորուած ձայնով, — իմացած եղէք, պարոն նաւապետ, որ այն տիկինը, որի մասին ականարկում էք, մի շատ սրատուաւոր մաւրիտանուհի է և մի հատիկ Ֆրանսերէն բառ անգամ չըգիտէ. . . :

— Բախան... ֆրանսերէն ոչ մի բառ չը գիտէ... Ի՞նչ էք առում, պարոն Տարտարէն:—
 Եւ նաւապետն սկսեց աւելի ևս բարձր ծիծաղել:

— Յետոյ նկատելով Սիդի Տարտրիի նեղացած և վիրաւորուած դէմքը, նա փոքր ինչ հանգարտեց և վրայ բերաւ.

— Շատ կարելի է, գուցէ ես սխալվում եմ, դուցէ իմ ասածս ուրիշ կին է... միայն այսքանը կ'ասեմ, պարոն Տարտարէն, որ լաւ կ'անէք, թէ շատ էլ հաւատ չընծայէք արժիր-ցի մաւրիտանուհիներին և արբանացի իշխաններին...:

— Տաւապետ, իմացած եղէք, որ իշխանն իմ բարեկամն է:

— Լաւ, լաւ, մի բարկանաք... թողնենք այդ. չէք կամենալ մի բաժակ արսէնի՞ ծանուշ անել: Ո՛չ: Գուցէ որեւիցէ լանձնարարութեան ունիք. ես շուտով կըլինիմ Տարասկոնում...: Ս. յդ էլ ո՛չ. դէհ ուրեմն մնաք բարով...: Բայց գուցէ փոքր ինչ ֆրանսիական ծրխախոտ կըկամենաք. համեցէք, շատ լաւն է. կարելի է օգտակար էլ լինի. ինչպէս տեսնում եմ Արևելքի ծխախոտը՝ ձեր գլուխը շատ է շուռ տուել:

— Տարտարէնը ծխախոտը վերցրեց և մտա-ծուլութիւնների մէջ խորասուզուած շարունակեց իւր ճանապարհը: Թէև նրա վեհ հոգին հրաժարվում էր հաւատալ իւր լսածներին, այսու-ամենայնիւ Բարբասուի խօսքերը վշտացրել էին նրա սիրտը. բացի դրանից այդ հանդիպումը, այդ մայրենի առողանութիւնը, այդ ամենը զարթեցնում էին նրա մէջ սաստիկ խղճահարութիւն:

Հասնելով տուն, նա տանը ոչ օքի չգտաւ: Բախան գնացել էր բաղնիք... խափշիկ աղա-խինը նրա աչքին աւելի ադեղ էր երևում, ամբողջ տունն աւելի տխուր էր թվում...: Սարսափելի վատ տրամադրութեան մէջ խորասուզուած նա նստեց շատրուանի մօտ և Բարբասուի տուած ծխախոտով սկսեց ծխամորճը լցնել: Ծխախոտը փաթաթուած էր Սիմաֆոր անու-նով լրագրի մի թերթում: Այդ թերթը բանալուն պէս նրա աչքովն ընկաւ իւր հայրենի քաղաքի անունը. նա աչքերը չառեց այդ աղղերի վրայ և սկսեց կարդալ.

Տարասկոնից մեզ գրում են.
 „Ամբողջ քաղաքը մտայուզութեան մէջ է: Երևելի և անվեհեր Տարտարէնը, որ գնացել է Աֆրիկա առիւծներ որսալու, միքանի ամսից ի վեր ո՛չ մի լուր չէ հազարգել իւր մա-

սին...: Ի՞նչ է պատահել մեր հայրենակից հե-
րոսին...: Այլ որ ծանօթ է նրա անվեհեր հո-
գու, նրա լանդուզն համարձակութեան և ար-
կածատէր բնաւորութեան հետ, նա սարսափում
է այդ հարցի առաջ...: Արդեօք նա էլ ուրիշ
շատերի նման թաղուել է անապատի աւազնե-
րի տակ, թէ յօշոտուել է այն ահօելի գա-
զաններից, որոնց մորթիներով պիտի գարդա-
րէր նա մեր քաղաքի դահլիճները...: Սարսա-
փելի անյայտութիւն...: Սակայն Բօկէրի աօ-
նավաճառում եղած աֆրիկական վաճառական-
ներից մի քանիսը պատմում են որ անապատի
խորքերում հանդիպել են մի ինչ-որ եւրոպա-
ցու, որի նշանները շատ նման են Տարտարէ-
նին և որը ուղևորվում էր դէպի Տումբուկ-
տու...: Տէր Աստուած, Ի՞նչ պահապան լինիս
մեր Տարտարէնին: “

Այս տողերը կարդալով Տարասիօնցին կար-
մբեց, դեղնեց և սարսուաց: Ամբողջ Տարասիօնը
մէկ անգամից նրա աչքի առաջը եկաւ — ժողո-
վարանը, գլխարկորսները, կօտէկալդի խանու-
թը, Բեզիւքէի դեղարանը և այդ ամենի վրայ
թեւատարած արծուի նման քաջասիրտ հրամա-
նատար Բրաւիդան իւր երկայն բեխերով: Եւ
մինչդեռ ամենքը կարծում էին նրան կատա-
ղի գազանների ճանկերում, նա մեղկութեան

և փափկութեան մէջ սուզուած անհոգ նստել
էր շաղրուանի առաջ: Տարտարէնը զգաց իւր
լանցանքը, ամաչեց և արտասուեց: Մէկ էլ
լանկարծ ցատկեց ոտքի և „դէպի առիւծները“,
դէպի առիւծները“ գոռալով վազեց դէպի այն
կողմը, ուր փոշիների տակ թաղուած ընկած
էին ճանապարհորդական վրանը, զէնքերի արկ-
ղը, դեղարանը և այլ պարագաները: Շտապով
այդ բոլորը նա հաւաքեց և դուրս բերաւ բա-
կի մէջ:

Տարտարէն-Սանխօն այլևս չկար. մնա-
ցել էր միայն Տարտարէն-Բիշօտը:

Մի անթարթում նա իւր շորերը փոխեց,
զէնքերը հագաւ, մի երկու տողով յանձնա-
րարեց Բախային իշխանի հոգացողութեան, մի-
քանի հատ բանկային հագարանոց տոմսակներ
ծրարի մէջ դրաւ ու թողեց իւր սիրուհուն և
սպաշած ու գարմացած աղախնին թողնելով մի-
այնակ՝ դուրս թռաւ տնից և մտաւ այն կառ-
քը, որ տանում էր դէպի Բլիդահ...:

սիրուն քաղաք էր, զարդարուած նարնջի ծառերով, որոնց ետևում երևում էին մաքուր սըրճարաններ, կանաչեղէնի և այլ խանութներ...: Սյդ շատ լաւ էր, միայն թէ առիւծի հոտ չէր գալիս:

—Հարաւ, աւելի ևս հարաւ,—մըթմըթաց Տարտարէնը և շաւելի խորը խորուեց իւր նըստած տեղում: Սյդ ըստ էին կառքի գուռը բացուեց և թարմ ու զով օդը մտաւ ներս իւր թևերի վըրայ, կարնջենիների սնուշահոտութեանը հետ միասին, ներս բերելով մի փոքրիկ պարոն, և բաճկոնակի մէջ փաթաթուած, մըթեր, նիհար, խորշամած, վիզը բարձր փողպտի մէջ թաղուած, մի կաշեայ գրատետր կոնստակին և մի հովանոց էլ ձեռքին բռնած—մի կատարեալ գաւառական նոտար:

Տեսնելով Տարասկօնցու սպառազինութիւնը, փոքրիկ ծերունին, որ նրա դէմուդէմն էր նստած, սաստիկ զարմացաւ և սկսեց անթարթ աչքերով նայել մեր հերոսին:

Ձիերը բաց արին, նոր ձիեր լծեցին, կառքն սկսեց շարունակել իւր ճանապարհը, իսկ ծերունին աչքը չէր հեռացնում Տարտարէնից:

Վերջապէս Տարասկօնցին չհամբերեց և դիմե-

լով ծերունուն և նոյնպէս նայելով աշիղ նրա երեսին հարցրեց.

—Պարոն, այս ձեզ զարմացնում է: Ինչ, չէ զարմացնում, այլ անհանգիստ է պնտւմ, —պատասխանեց ծերունին բոլորովին սառը եղանակով: Բանն այն է որ Տարտարէնը իւր անհազին զինանոցով և առանց այն էլ անհազին մարմնով միքանի մարդու տեղ էր բռնել...:

Ծերունու պատասխանը Տարտարէնի բարկութիւնը շարժեց: —Երևի, պարոն, դուք կարծում էք որ ես ձեր հովանոցով պիտի դուրս գայի առիւծներ որսալու, —ասաց չնաշխարհիկ հերոսը յաղթական ձայնով: Ծերունին աչքը ձգեց իւր հովանոցին, թիթեկ կերպով ժպտաց և յետոյ նոյն սառնարիւնութեամբ հարցրեց.

—Ուրեմն, պարոն, դուք... Տարտարէնը զգոյս տալով Տարասկօնցի Տարտարէնն էմ, առիւծների կոտորիչը...:

Սյդ խօսքերն արտասանելով անվեհեր Տարասկօնցին թափ տուեց իւր Ֆէսի փիւսկիւղը, ինչպէս որ գաղանների թագաւորը թափ է տալիս իւր արքայական բաշը:

Սի սարսափի շարժում անց կացաւ ամբողջ կառքի միջով:

այս Տիրացուն երեսը խաչ Հանեց, կօկոտները ճիչ արձակեցին և լուսանկարիչը մօտեցաւ Հերոսին, ուրախանալով այդ բաղդաւոր՝ դէպքի վրայ, որ պիտի պատիւ բերէր նրա արհեստին:

Սիմիայն փոքրիկ ծերուկն էր, որ մնաց բոլորովին անխռով: — Եւս առիւծ էք սպանել արդէն, պարոն Տարտարէն, — Հարցրեց նա իւր անվրդով եղանակով:

— Դուք հարցնում էք թէ արդեօք շատ առիւծ եմ սպանել. ես կըցանկանայի միայն որ դուք ձեր գլխի վրայ այնքան մազ ունենայիք, ինչքան որ ես առիւծ եմ սպանել:

Այս սրամիտ պատասխանը պատճառ դարձաւ ընդհանուր զուարճութեան ու ծիծաղի մտնքն իրանց հայեացքը դարձրին ծերուկի լերկ գանգի վրայ, ուր հազիւ նշմարվում էին երեք դեղնած աղուամազ:

Այդ ժամանակ լուսանկարիչը մէջ մտաւ և համեստ ձայնով դիմելով Տարտարէնին ասաց.

— Դժուար զբաղմունք էք ընտրել, պարոն Տարտարէն... շատ դժուար և վտանգալից զբաղմունք...: Ահա օրինակի համար պիտի Բօմբօնէլը...

— Ա՛հ... այո՛, դուք յովազների որսորդ

Բօմբօնէլի մասին էք ուզում ասել, — ընդհատեց Տարտարէնն արհամարհական ձայնով:

— Իսկ դուք ճանաչում էք Բօմբօնէլին, — Հարցրեց փոքրիկ ծերուկին:

— Փնձ... այդ ինչ խօսք է... քսան անգամից աւելի մենք միասին որսորդութիւն ենք արել...:

Ուրեմն դուք յովազներ էլ էք սպանում, պարոն Տարտարէն:

— Այո՛, պատահում է... միայն թէ այնպէս... ժամանակ անց կացնելու համար պատասխանեց այլ Տարտարէնին ձանձրացած ձայնով: — Բնորոշ մի հերոսական շարժումով գլուխը վեր բարձրացնելով՝ աւելացրեց.

— Իայց այդ ի հարկէ այն չէ, ծինչ-որ առիւծը:

— Ի հարկէ, ի հարկէ, — կրկին մէջ մտաւ լուսանկարիչը. — յովազն ինչ բան է առիւծի մօտ: Իսկպէս՝ ասած յովազը միևնոյն է թէ մի մեծ կատու...:

— Այո՛, այո՛, շատ ճշմարիտ էք ասում. յովազը միևնոյն է թէ մի մեծ կատու, — նկատեց Տարտարէնը, ուրախ լինելով որ կարող է նսեմացնել Բօմբօնէլի փառքը՝ այն էլ տիկիներէ առաջ:

քմաս Այսպէղ կառքը կանգ առաւ և կանապանը
կառքի դռուը բանալով խորին պատկանանքով
դիմեց փոքրիկ ծերունունս՝ քաղցր խոսքով —

— Պարոն, դուք արդէն հասել էք քաղցր
մա մծերունին վեր կացաւ, կառքից իջաւ և
նախ քան դուռը փակելը գրիմեց մեր հերոս
սին և սասց.

— Պարոն Տարտարէն, թույլ կըտանք ինձ մի
փոքրիկ խորհուրդ տալ ձեզից, քաղցր միտքով

— Ինչ խորհուրդ, պարոն: Կաղցր մտքայն
մայր — Ահա թէ ինչ խորհուրդ...: Ես տեսնում
եմ որ դուք իսկապէս լաւ և բարեսիրտ մարդ
էք, ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ գուր տեղը
այստեղ ժամանակ չկորցնել և ինչքան կարելի
է շուտով յետ դառնալ կրկին Տարտարէն: Այս
կողմերում այժմ հոգիւ մի երկու հատ յովազ
մնացած լինի. բայց արժէ արդեօք այդ կատու-
ների համար ժամավաճառ լինել...: Գայով ա-
ռիւծներին, Ալփերում այլևս առիւծ չկայ...: Ես
տարի է արդէն որ իմ ընկեր Շաստէնն
սպանեց այստեղի վերջին առիւծին: Կախով : ասն

Այս ասելով ծերունին գլուխ տուեց, դուռը
փակեց և հովանոցը ձեռին ու գրատետրը կրու-
նատիկն ծիծաղելով հեռացաւ: Եւ մտածեց ցրախ
յմար — Կառապան, — հարցրեց Տարտարէնն ար-
ցառա զյժմմիկից յձ մյա զգտափ զյժմոցնո՞ւ

համարհական ժպտով, — ով էր այդ խելօք ծե-
րունին: Ճառագարդս քմայց զյժմմարով մյա
չմիկ — Մի թէ, չէք ճանաչում. դա զպարոն Բոմ-
բօնէլն էր: Եւ յովազների նշանաւոր որսորդը: Եւ
խամանտ մյոմմիկն, բոմարով զուածաշատս ձ
ճառա զյժմոցնո՞ւ յձ նաժառն անձոցնա
աղյտեղձ զիկ մյո յս քմ : Եւ յաղի զյժմոցով
չյա մյաղի զիկ զյժմմաժառ անձոցնո՞ւ միկ
միկ : Եւ յոգիկ յԱռիւծներն վայրը: Կոտ յն յն ան
յրա միմդոտ յխամանտ մյա մի զուած յոչ
չյժմմ Միլիանահիջեանում Տարտարէնն իջաւ,
իսկ կառքը շարունակեց իւր ճանապարհն ա-
ւելի: Դէպի հարաւ: Կախ յոյժմմո՞ւ զոցնո՞ւ զսոց
չյալ Երկու ձոր էր արդ նա շարունակ զնստած
էր կոշտ նստարանի վրայ, երկու զիշեր էր որ
նա կիսախուժի աչքերով անդադար մտիկ էր
տալիս դուան ձեղքից, թէ արդեօք չէ տեսնիլ
զոնէ մի հատ առիւծի ստուեր: Կախ արժէր
որ նա փոքր ինչ հանդիստ տար իւր խոնջա-
ցած մարմնի: Բացի դրանից, հարկաւոր չէ
ծածկել, որ Բոմբօնէլի դժբաղդ զիպուածից
յետոյ մեր հերոսը, չնայելով իւր զէնքերին,
իւր յահօնելի կերպարանքին և տաճկական կար-
միր զյլսարկին, այսուամենայնիւ շատ էլ լաւ
չէր զգում իրան լուստնկարչի և մանաւանդ
երկու տիկնիներն առաջ: Կախ մա զձ յմբան զիկ

Նա իւր քայլերն ուղղեց զէպի քաղաքի լայն փողոցները, որոնք զարդարուած էին զեղեցիկ ծառերով ու շաղրուաններով: Եւ մինչդեռ փողոցէ փողոց ընկած փնտրում էր որեւէ պատշաճաւոր հիւրանոց, միւսնոյն ժամանակ անընդհատ մտածում էր Բօմբօնէյի տուած խորհրդի վրայ...: Եւ իսկ որ՝ եթէ ճշմարիտ լինէին ծերունու ասածները... եթէ իրաւի այլևս ոչ մի առիւծ չէ մնացել Ալժիրում... ինչո՞ւ համար են այն ժամանակ ուրեմն այդ բոլոր աշխատանքը, այդ բոլոր նեղութիւնները: Այդ մտածութիւնների վրայ էր մեր հերոսը, երբոր ծռուելով զէպի մի այլ փողոց լանկարծ նրա զէմը դուրս եկաւ... ինչ էք կարծում ո՞վ... մի փառահեղ առիւծ, որ ետեւի թաթերի վրայ արքայօրէն բազմած և սքանչելի բաշն արևի տակ պարզած սպասում էր մի սրճարանի առաջ: — Լապա ինչ էին ասում, թէ այլևս առիւծ չէ մնացել, — բացազանչեց Տարտարէնը և մի քայլ լետ ցատկեց...: Այդ բացազանչութեան վրայ առիւծը գլուխը խոնարհեցրեց և բերանով վեր բարձրացնելով զետնի վրայ դրած փայտե սամանը մեկնեց զէպի Տարտարէնի կողմը, որ սարսափից մնացել էր անշարժ... Մի արաբ, որ այդ

ըսպէին մօտով անցնում էր միքանի սև փող ձգեց ամանի մէջ. առիւծը գլուխ տուեց և պոչը շարժեց...: Այն ժամանակ Տարտարէնն արդէն հասկացաւ թէ ինչ բան է: Նա տեսաւ այն, ինչ որ սկզբնական սարսափը չէր թողել նրան տեսնելու. նա տեսաւ մի խումբ մարդիկ հաւաքուած կոյր և ընտելացած գազանի շուրջը և երկու հատ ահագին նեղր, որոնք մի-մի գաւազան ձեռներին ման էին ածում առիւծին քաղաքի փողոցներով, ինչպէս որ ման են ածում արջներն ու կապիկներին:

Տարասկօնցու արիւնը խփեց գլխին: — Թշուառականներ, — որոտաց նա ահաւելի ձայնով, — ինչպէս էք համարձակվում դուք այդպէս նուաստացնել ազնիւ և վեհ անասուններին: — Եւ սլանալով առիւծի վրայ կօրզեց փայտե ամանը նրա արքայական ժանիքների արանքից: Երկու նեղրները կարծելով որ նա ուզում է խլի հաւաքած փողը, ընկան Տարասկօնցու վրայ և սկսուեց մի սարսափելի տուրուղմփոց...: Նեղրները խփում էին, կանայք ճչում, իսկ մանուկները ծիծաղում էին. մի ծերունի կաշեգործ հրեայ իւր խանութի դռան քամակից գոռում էր. «բայ տուէք դատարան... տարէք դատաւորի մօտ»: Նոյնիսկ առիւծը

իւր կոյր տեղովն սկսեց մռնչալ Տարտարէնի վրայ և կռիւր վերջացաւ նրանով, որ մեր հերոսը կատաղի պատերազմից ընկճուած փրուուեց ընկաւ գետնի վրայ փոշու և ցեխի մէջ։ Այդ ընդէին մի մարդ ճղքէց ամբոխը, շտապով մի կողմ քշեց նեզրներին, կանանց և մանուկներին, բռնեց վեր բարձրացրեց Տարտարէնին, թափ տուեց մաքրեց նրա շորերը և յետոյ մի կողմ քաշելով նստացրեց որ հանգստանայ։

— Աստուած իմ, իշխան, միթէ այդ դուք էք, — բացազանչեց Տարտարէնը ջարդուած կողերը մտածելով։

— Այո, իմ քաջ բարեկամ, ես եմ...։ Ձեր նամակն ստանալուն պէս Բախային յանձնեցի իւր եղբորը, մի կառք վարձեցի և շտապեցի ձեր ետևից և ահա հասայ քզիդ այն ընդէին, երբոր հարկաւոր էր ազատել ձեզ այդ կոշտ ու կոսիա մարդկանց կատաղութիւնից...։ Ասացէք, ի սէր Աստուծոյ, այդ ինչ բան էր, ինչո՞ւ համար էր այդ աղմուկն ու կռիւր...։

— Այո, իշխան...։ Միթէ կարելի էր անտարբեր աչքով նայել այդ թշուառ առիւծին՝ փայտէ ամանը բերանում բռնած, նուատացած, յաղթուած և այդ մուսուրման ամբո-

խի համար ծաղր ու ծանակի առարկայ դարձած...։

— Բայց դուք սխալվում էք, ազնիւ բարեկամ. այդ առիւծը նրանց համար ընդհակառակը յարգանքի և երկրպագութեան առարկայ է։ Նա համարվում է սուրբ անասուն և պատկանում է առիւծների այն մեծ վանքին, որ երեք հարիւր տարի առաջ հիմնել է Մահոմէդ-Բէն-Սուդան։ Այդ մի մեծ վանք է՝ լի կատաղի գազանների հոտով և մռչիւնով, ուր բազմաթիւ վանականներ կրթում և ընտելացնում են հարիւրաւոր առիւծներ, և յետոյ իրանց միաբանների հետ ուղարկում են նրանց հիւսիսային Սֆրիկա ժողովարարութիւն անելու...։ Այդ ժողոված փողով պահպանվում են թէ վանքը և թէ նրա միաբանները։ Եւ եթէ նեզրներն այնքան անողոք վերաբերուեցին դէպի ձեզ, դրա պատճառն այն է որ նրանք այնպէս են հաւատում, որ եթէ իրանց անհոգութիւնից մի կոպէկ անգամ կորչի ժողոված փողից, առիւծներն իսկոյն պատառ-պատառ կ'անեն նրանց։

Լսելով այդ անհաւատալի բայց ճշմարիտ պատմութիւնը, Տարտարէնը սիրտ առաւ և հանգստացաւ։

— Եթէ այդպէս է, կընշանակէ որ Ալթի-

նում է երկիւղ և յարգանք ներշնչել արաբ-ներին դէպի Փրանսիական իշխանութիւնը: Այդ է պատճառը որ կառավարութիւնը իւր բոլոր պաշտօնաւորներին՝ սկսած յետին պահապանից մինչև հարկաժողովը, ամենքին էլ զարդարել է զինուորական գլխարկով: Իսկապէս անսած Արժիրը կառավարելու համար հարկաւոր է ոչ թէ խելօք գլուխ և կամ առհասարակ որևիցէ գլուխ, այլ բնական է միայն մի փայլուն զինուորական գլխարկ թէկուզ ձողի վրայ հագրած...: Այդպէս խօսելով և փիլիսոփայութիւն անելով քարվանք կամաց-կամաց առաջ էր գնում: Բորիկ բեռնակիրները թռչկոտում էին ժայռից ժայռ և կապիկների նման կռնչում: Զէնքերի արկղը զնգզնգում էր, հրացաններն արևի ճառագայթների տակ շողշողում էին: Անցողիները մինչև գետին էին խոնարհվում մոզական գլխարկի առաջ... Միլիանահի բերդի կառավարիչը, որ այդ րոպէին դուրս էր եկել իւր տիկնոջ հետ փոքր ինչ զովօր ծծելու, հեռուից լսելով այդ աղաղակները և ծառերի արանքից տեսնելով փայլուն հրացանների շողշողիւնը առաջի նուազ անպէս կարծեց, թէ այդ անբարեբաղ արաբներին մի հրոսակ է, որ ցանկանում էր յարձակումն գործել բերդի

վրայ: Անմիջապէս հրամայեց թմբուկները զարնել, բերդի դռները փակել և ամբողջ քաղաքը պաշարման դրութեան մէջ դնել:

Այդ ի հարկէ վառ նշան չէր քարվանի ոյժի և յաջողութեան համար:

Սակայն դժբաղդաբար երեկոյեան դէմ գործերը խառնուեցին: Բեռնակիր նեղրներից մինը դեղարանի նիւթերից մէկը ծածուկ կերած լինելով սաստիկ փորահարինք էր եղել. մի ուրիշն էլ քաֆրիի օդին խմած լինելով մեռելի նման հարբել, ընկել էր ճանապարհի վրայ: Երրորդն էլ, որ տանում էր ճանապարհորդական լիշատակատարը, յափշտակուած գրքի սուկէզօժ կազմով և զարգարանքով, և կարծելով որ մի մեծ դանձ է գողանում, գողացել և փախել էր դէպի Սահարայի անապատը...: Պէտք էր այդ բոլորի ճարը տեսնել...: Քարվանք կանգ առաւ և մի հնադարեան թղենու շուաքի տակ նստեց խորհրդի:

— Ես կարծում եմ, — ասաց իշխանը, — որ հէնց այսօր մենք պէտք է վաճառենք այդ գող բեռնակիրներին...: Այստեղից ոչ հեռու կայ մի արաբական վաճառանոց. աւելի լաւ է մտնենք այնտեղ և միքանի հատ աւանակ զնենք...:

— Ո՛չ... ո՛չ... աւանակ հարկաւոր չէ, — իշխանի խօսքն ընդհատելով բացազանչեց Տար-

տարէնը, որ աւանակի անունը տալիս իսկոյն միտը բերաւ իշուկի գիպուածը և մինչև ահանջները կարմրեց:..: Եւ յետոյ կամենալով սրտի յուզումը ծածկել վրայ բերաւ.— մթթէ այդ փոքրիկ անասունները կարող են այսքան ծանրութիւնը վերցնել:

Իշխանը ժպտաց:

— Դուք սխալվում էք, ազնիւ բարեկամս, չնայելով նրանց փոքրութեան և գձուձ կերպարանքին, այդ աւանակները շատ ուժեղ զբաստներ են. հարցրէք ահա արաբներին...: Նրանց մէջ մինչև անգամ մի այսպիսի առակ կայ. ասում են նահանգապետը խփում է գաւառապետին, գաւառապետը զինուորին, զինուորըն արաբին, արաբը նեգրին, նեգրը հրեային, հրեան էլ աւանակին. և որովհետև աւանակը ոչ ոքին չէ կարող իսկել, ուստի և մէջքը կըռացնում է ու բեռը վերցնում: Յոյս ունիմ, ազնիւ բարեկամս, որ մեր բեռն էլ կըվերցնի...:

— Ս.յդ այդպէս է, միայն թէ իմ կարծիքով աւանակների քարվանը տգեղ բան է ասքի համար,— ասաց Տարտարէնը.— ես կըցանկալի որ մեր քարվանն ինչքան կարելի է աւելի արևելեան կերպարանք ունենայ...: Ս.յ, եթէ կարողանայինք մի հատ ուղտ ճարել...:

— Իրանից հեշտ ինչ կայ որ... քանի հատ

որ սրաներդ կամենայ,— պատասխանեց Նորին Բարձրափայլութիւնը:

Եւ երկու բարեկամներն ուղղեցին իրանց քայլերը դէպի վաճառանոց: Վաճառանոցը գտնվում էր միքանի վերստ հեռաւորութեան վրայ Շէլիֆ գետի եզերքում: Հինգ թէ վեց հազար պատռտուած շորերով արաբներ արևի տակ այրուելով առուտուր էին անում, շրջապատուած ձիթապտղի թաղարներով, մեղրով լեցուն ամաններով և ծխախոտի ու համեմներէ հակերով: Ս.հազին խարոյկների վրայ ամբողջ ոչխարներ իւղը ծլծլալէ կաթկթելով խորովվում էին. նեգրները, ստաբոբիկ, ձեռներն արեան մէջ շողախուած փոքրիկ դանակներով մաշկում էին ծառից կախ արած մորթոտած ուլերը...:

Մի անկիւնում՝ հազար ու մի կարկատանով նշխուած վրանի տակ՝ ծալապատիկ նստած է մաւրիտանացի միրզան ակնոցները և մի ահագին գիրք առջևը փռած: Մի ուրիշ տեղ ժողովուրդը խռնուել է խաղարանի շուրջը և կատաղած խաղ է անում...: Ս.ւելի հեռուից լսելի են լինում ծիծսողի և հոհուոցի ձայներ— մի հրեայ վաճառական ընկել է դետը և խեղդվում է, ափում կանգնած ամբոխը մտիկ է տալիս և ծիծաղում...: Չորս կողմը վիտում

են կարիճներ, շներ, ագռաւներ և ճանճ...
ճանճ... ճանճ...:

Հակառակի նման ո՛չ մի տեղ ուղտ չէր
երևում: Երկար փնտրելուց լետույ վերջապէս
մի հատ գտնուեց: Այդ մի կատարեալ անա-
պատի ուղտ էր, մի իսկական ուղտ—մազերը
թափուած, գէմքը մեղամաղձոտ, երկայն գըլ-
խով և քաղցածութիւնից հալուած ու կախ
ընկած սապատով...:

Սակայն Տարտարէնին այդ ուղտը շատ
դուր եկաւ: Նա հրամայեց որ իսկոյն քարվա-
նը բռնեն: Ուղտը չոքեց և բռնները բարձե-
ցին: Իշխանը նստեց վզի վրայ, իսկ Տարտարէ-
նը շքեղութեան համար բարձրացաւ սապատի
գլուխը և բազմեց երկու արկղի արանքում:
Այդ վեհ գահոյքից նա հպարտ և շնորհաշուք
շարժուածքով ողջունում էր ամբոխին, որ ա-
մեն կողմից վազել շրջապատել էր նրան: Օհ,
եթէ Տարասկօնցիներն այդ բոսիին ներկայ լի-
նէին այդտեղ...:

Վերջապէս ուղտը վեր կացաւ չոքած տե-
ղից և պարզեց իւր երկայն՝ կոշտերով ծածկը-
ւած ոտները և սկսեց քայլել...:

Ո՛վ սարսափ: Հազիւ փոքր ինչ առաջ
էին գնացել, մէկ էլ յանկարծ Տարտարէնն ըզ-
գաց, որ գոյնը թռչում է...: Այդ անիծած

ուղտն այնպէս էր ճօճում, ինչպէս որ նաւը
Մարսէլից Ալժիր գալու ժամանակ...:

— Իշխան, իշխան, — ձայն տուաւ Տարտա-
րէնը գոյնն աւելի թուցնելով և ամուր կերպով
ուղտի սապատը գրկելով. — Իշխան, ի սէր Աստու-
ծոյ իջնենք...: Ես զգում եմ... Ես զգում եմ...
որ Փրանսիան պիտի խայտառակեմ...:

Բայց բանը բանից անցած էր. ուղտը մէկ
անգամ որ իւր վագը բռնել էր, այլևս անհը-
նար էր նրան կանգնեցնել: Չորս հազարի չափ
արաբներ ոտաբոբիկ վազում էին նրանց ետևից
խելագարների նման հռհռոցով, ծիծաղով և
իրանց ճերմակ ատամներն արևի տակ փայլե-
ցնելով...:

Տարասկօնի չնաշխարհիկ զաւակն ստիպ-
ւած էր խոնարհուել ճակատագրի առաջ...: Եւ
նա խոնարհուեց ուղտի կուզի վրայ ու...
Փրանսիան խայտառակուեց:

Գ

Երեկոյնան դարանակալութիւն դափնեվարդի անտառում:

Մեր որսորդներն ստիպուած էին իջնել ուղ-
տի վրայից և ոտքով շարունակել իրանց ճա-

նապարհը: Տարասկօնցին գնում էր առջևից, ուրտը մէջտեղից, իսկ իշխանը ետևից: Նրանք հանդարտութեամբ և կարճ իջևաններով գիմում էին անդադար դէպի հարաւ: Այդ ճամբորդութիւնը տևեց համարեա մի ամիս և այդ ամբողջ ամիս անվեհեր Տարտարէնը՝ անգտանելի առիւծների ետևից ընկած՝ գիւղից գիւղ թափառում էր Շէլիֆի ընդարձակ անապատում, Փրանսիական ահռելի և բիրտ Ալփերիայի լայնութեամբ և երկայնութեամբ, ուր հին Արևելքի հոտը խառնվում է Փրանսիական աբսէնթի և զինուարանոցի հոտի հետ, ուր Աբրահամն ու Ալֆօնսն ապրում են միասին, ներկայացնելով մի գիւթական և վերին աստիճանի տարօրինակ տեսարան...:

Տեսարանն արդարև հետաքրքրական է այն աչքերի համար, որոնք ընդունակ են տեսնելու...: Մի վայրենի և փտած ժողովուրդ, որին Փրանսիացիները քաղաքակրթում են, պատուաստելով նրան իրանց մոլորութիւնները...: Բիրտ և անկարգ իշխանաւորներ, որոնք քթերը Պատուոյ լեզէոնի լայն ժապաւէնով սրբելով՝ մի այսօր կամ մի ուրիշ համար դանակոծում են անմեղ հպատակներին...: Անխղճմտանք և ագէտ դատաւորներ, Աուրանի և օրէնքի կեղծ պաշտօնաւորներ, որոնք արմաւենիների տակ

իրանց լուսցումը կատարելով մի գլուխ շաքարի կամ մի շիշ օղու համար վաճառում են օրէնքըն ու արդարութիւնը, ինչպէս որ Եսաւը մի աման ոսպնաթանի համար վաճառեց իւր անդրկանութեան իրաւունքը...: Անառակ և արբեցող մեծաւորներ—մի օրևէ զօրապետի նախկին սպասաւորներ և ախոռապետներ, որոնք պոռնիկ լուսցարարների հետ շամպանեայ գինով ողորում լափում են ողջ-ողջ խորոված դառներ, մինչդեռ նրանց դռների առաջ քաղցածութիւնից սովամահ եղող ամբոխը շների բերնից խլում է տիրական սեղանից դուրս շրպրտած փշրունքն ու ոսկորները... իսկ շուրջը—ամենուրեք բարձի թողի աշած դաշտ ր, արեւակէզ ու չորացած արօտատեղիներ՝ ծածկուած ազագուն թփերով, փշով ու տատասկով...: Եւ այդ երկիրն է, որ անուանվում է Ֆրանսիայի շտեմարան: Շտեմարան, աւանդ, դատարկ և առանց ցորենի, լի մեմիայն չաղալներով ու փայտոջիւնելով...: Գիւղերը երեսի վրայ թողած, բնակիչները գլուխները կորցրած, տուն ու տեղից ձեռք վեր առած, սովալլուկ դիմում են իրանք էլ չգիտեն թէ ուր և լցնում են ճանապարհն իրանց մեռելների դիակներով: Մէկ մէկ տեսնվում են Փրանսիական գիւղեր՝ կիսաքանդ խնճիթներով, անմշակ դաշտերով,

ըրջարատած մորեխների անհամար բազմութեամբ, որոնք ամեն բան ապականելուց յետոյ այժմ պատուհանների վարագոյրներն են կրծոտում. իսկ այդ զիւղի Փրանսիացի բնակիչները, որոնք նշանակուած են տեղացիներին քաղաքակրթելու համար, զինեաներում լցուած մի կողմից արսէնթ են խմում, իսկ միւս կողմից քննադատում են հասարակապետութեան և բարեփոխութիւնների նոր ծրագիրները:

Ահա թէ ինչեր պիտի տեսնէր Տարտաբէնը, եթէ որ ուշագրութիւնն ուրիշ բանի վրայ չլինէր. բայց Տարասիօնի զաւակն ամբողջապէս առիւծային կրքերով յափշտակուած ուղղակի առաջ էր զնում առանց այ ու ձախ մտիկ տալու, աչքերը սեւեւած դէպի այն երեւակայական զազանները, որոնց հետքն անգամ չէր երևում:

Քարվանն ամեն օր իջեանում էր տեղական զիւղերից մէկում. ամեն տեղ՝ շնորհիւ իշխանի փալուն գլխարկի՝ մեր որսորդները հանդիպում էին գրկաբաց ընդունելութեան: Նրանք ցած էին գալիս ազաների տանը, որոնք սովորաբար բաղկացած էին ահազին սենեակներից առանց լուսամուտների: Այդ սենեակները խառնիխուռն կերպով զարդարուած էին ասիական նարգիլէներով և եւրոպական թան-

կազին պահարաններով, Զմիւռնիայի գորգերով և Սաքսօնեան յախճապակետայ անօթներով, տաճկական թախտերով և Լուի-Ֆիլիպպի ժամանակուայ արուրեայ ժամացոյցներով...: Ամեն տեղ ի պատիւ Տարտաբէնի տալիս էին հանդէսներ տեղական պարերով և երաժշտութեամբ, ձիարշաւներով և հրախաղութեամբ...: Եւ երբ այդ ամենը վերջանում էր, հիւրասէր ազան մօտնում և ներկայացնում էր հսշիւր...: Այդ է ահա արաբների հիւրասիրութիւնը:

Սակայն առիւծները դեռ չէին երևում և ոչ միայն իրանք այլև իրանց հետքն էլ չէր երևում: Չնայելով դրան Տարասիօնցին չէր լուսահատվում: Անվահէր քաջութեամբ առաջանալով միշտ դէպի հարաւ, ամբողջ օրը նա ատրճանակը ձեռին յսփում էր այն ծառին, այն թփին և „փիշու-փիշու“ էր անում, որպէսզի առիւծները թփերի տակից դուրս գան...: Իսկ ամեն երկոյ էլ պառկելուց առաջ մի երկու ժամ դարան էր մտնում և սպասում... բայց զուր աշխատանք և անօգուտ վաստակ. առիւծ չկար ու չկար:

Սակայն մի երեկոյ, այսպէս ժամը հնգին թէ վեցին, երբ քարվանն անցնում էր մի փոքրիկ դարաստանով, ուր արևի ջերմութիւնից թուլացած լորամարդիները թուչկոտում էին խո-

տերի մէջ, մէկ էլ յանկարծ Տարտարէնի ականջին դիպաւ մի հրաշալի մռնչիւն, որ նա շատ անգամ լսել էր Տարասիօնում՝ գիշերները գազանանոցի ետևում դարանակալած ժամանակ. սակայն մռչիւնը շատ հեռու, շատ աղօտ և հազիւ հազ լսելի էր:

Տարտարէնն սկզբումն այնպէս կարծեց թէ այդ իրան թվում է միայն...: Բայց մի վայրկեանից յետոյ մռչիւնը նորից լսելի եղաւ՝ թէեւ նոյնպէս հեռուից բայց աւելի որոշ կերպով. այս անգամ այլևս տարակոյս չէր կարող լինել, որովհետև ամեն կողմից շներն էլ սկսեցին հաչել և գէնքերն ու պաշարեղէնները զրնգզրնգացին ուղտի դողդոջուն կուզի վրայ...:

Անտարակոյս այդ առիւծի մռնչիւն էր. շուտ, շուտ, պէտք է իսկոյն դարանակալել. մի րոպէն անգամ թանգ է:

Միքանի քայլ հեռու մի քիւմբէզ (սուրբի գերեզման) կար, սպիտակ գմբէթով և դռան վրայ մի փոքրիկ դարակով, ուր գրուած էին հանգուցեալի դեղին հողաթափները: Բիւմբէզի պատերի վրայ ճեղքերի արանքում խրուած ու փաթաթուած էին շորի կտորներ, ոսկեայ թերթեր, դանազան գոյնի մագէր և հազար ու մի տեսակ կտորտանք...: Տարտարէնն իշխանին և ուղտն ապահովացրեց այդ գմբէթի տակ ու ինքն

սկսեց իւր համար դարանակալութեան տեղ փնտրել: Իշխան Բրէգորին կամենում էր նոյնպէս գնալ նրա ետեւից, բայց Տարտարէնը թոյլ չտուաւ. նա կամենում էր միայնակ ճակատ ճակատի գալ առիւծի հետ: Յամենայն դէպս նա պատուիրեց Նորին Մեծութեան չհեռանալ այդտեղից և զգուշութեան համար սահ տուեց նրան իւր քսակը, որ լիքն էր թանկագին թղթերով ու բանկի տոմսակներով. նա վախենում էր որ այդ թղթերը չպատառոտուին առիւծի ճանկերում: Այդ այդպէս կարգի դնելուց յետոյ մեր հերոսը իւր գործին կացաւ:

Գերեզմանից հարիւր քայլ հեռու, մի ցամաքած առուակի ափին, երեկոյեան վերջալուսի շողի տակ դողդոջում էր դափնեվարդերի մի փոքրիկ անտառ: Այդտեղ ահա Տարտարէնը դարանակալեց ծնկների վրայ չոքած, հրացանը ձեռքին բռնած և որսորդական մեծ գանակն առջևն աւազի մէջ խրած, բոլորովին այնպէս, ինչպէս որ նա կարգացել էր գրքերի մէջ:

Իշերը վրայ հասաւ: Վերջալուսի վարդագոյն շողը փոխուեց մանիշակի, մանիշակն էլ մութ կապոյտի...: Ներքևում, ցամաքած առուակի խճերի մէջ մի փոքրիկ հայելու նման փայլում էր մաքուր և վճիտ ջուրը. այդ գանակների ջուր խմելու տեղն էր: Առուակի միւս

ափում նկատվում էր մի նեղ շաւիղ, որ կոխ-
կռտուած էր զաղանների ահռելի ճանկերով:
Այդ շաւիղը բաւական էր մարդուն վրայ սար-
սուռ ազդելու համար:

Աւելացրեցէք դրա վրայ նաև աֆրիկական
գիշերների անորոշ ու խուլ ձայնը, ծառերի սուս-
փիւնը, չաղալների ոռնոցը և երկու-երեք հա-
րիւր մետր բարձրութեամբ թռչող կռուակների
սրտաձմիկ կառաչը, և այն ժամանակ կըհաս-
կանաք թէ որ աստիճանի տեղիք կայ սարսա-
փելու...:

Եւ Տարտարէնը սարսափում էր. մինչև
անգամ սաստիկ սարսափում էր. ատամներն
իրար էին խփվում, հրացանը ձեռքում դողդո-
ղում էր և դիպչում աւազի մէջ թաղած դանա-
կին...: Հապա թ'նչ էք ուզում. միշտ էլ լինում են
ժամեր երբ մարդ տրամադրուած չէ ինչպէս
որ հարկաւոր է. և բացի դրանից միթէ հե-
րոսներն էլ մարդիկ չեն և երբէք վախ չպիտի
զգան...:

Ուրեմն մի մեղադրէք Տարտարէնին որ նա
էլ վախ էր զգում. սակայն չնայելով դրան նա
մի ժամ, երկու ժամ պահ մտած սպասում էր...:
Մէկ էլ լանկարծ լսելի եղան դտաձայներ...:
Այս անգամ մեր հերոսը երկիւղից գլուխը բո-
լորովին կորցրեց...: Մթութեան մէջ երկու ան-

գամ իրար ետեւից առանց նշան բռնելու կրակ
տուաւ և երեսը շուռ տալով բոլոր ուժով սկը-
սեց փախչել դէպի գմբէթը...: Այնտեղ մնաց
միայն դանակը՝ աւազի մէջ խրուած, իբրև լի-
շատակի արձան ամենամեծ սարսափի, որ երբ-
և-իցէ զգացել է աղամորդին...:

— Իշխան... եկէք... առիւծ...:

Ձայն չկար:

— Իշխան, իշխան, ուր էք...:

Իշխանը չկար: Գերեզմանի սպիտակ պատի
վրայ երևում էր միմիայն ուղտի անճոռնի շուաքը
իւր անճոռնի կուզով...: Իշխան Գրէգորին փա-
խել էր, տանելով իւր հետ փողի սքակը...: Ար-
դէն մէկ ամիս էր որ Նորին Մեծութիւնն սպա-
սում էր այդ դէպքին...:

Ե

Վերջապէս:

Այդ արկածալից և տխուր գիշերուայ միւս
օրը երբ մեր հերոսը լուսագէմին վաղ աչքերը բաց
արաւ և համոզուեց որ իշխանը և իւր փողերն
անյայտացել են և այն էլ անգառնալի կերպով,
երբոր նա տեսաւ իրան մեն-մենակ այդ փոք-

րիկ գերեզմանատան մէջ խաբուած, կողոպտուած, վայրի անապատի մէջ երեսի վրայ թողուած իւր թշուառ ուղտի հետ միասին, մի քանի սև փող միայն զրպանումը, այն ժամանակ Տարասկօնցին առաջին անգամը իւր կեանքում սկսեց կասկածել...: Մօնտէնէզրօ, բարեկամութիւն, փառք և նոյնիսկ առիւծն այժմ արդէն կասկածելի էին թվում նրան...: Մեծ մարդն սկսեց դառն կերպով արտասուել՝ ինչպէս որ Փրկիչը Գեթսեմանի պարտէզում:

Եւ մինչդեռ նա այդպէս զլուխը երկու փիւ մէջ առած մտախոհ նստած էր գերեզմանի դռանը, մէկ էլ յանկարծ գիմացի թուփը շարժուեց և ափշած Տարտարէնն իրանից տասը քայլ հեռու տեսաւ մի ահագին առիւծ, որ զլուխը բարձր բռնած սարսափելի մռնչիւնով գիմում էր ուղիղ իւր վրայ...:

Այս անգամ Տարտարէնն ամենևին չդողաց:

— Ահա՛ վերջապէս, — գոռաց նա տեղից ցատկելով և հրացանն առիւծին ուղղելով... բամբ-բամբ... փրշտ-փրշտ, որտտաց հրացանը և առիւծը՝ զլխին երկու գնդակ ստանալուց զլորուեց գետնի վրայ: Եւ երբ Տարտարէնն աչքերը վեր բարձրացրեց, տեսաւ երկու կատաղի նեզրներ, որոնք գաւազանները ճօճելով վազում

էին դէպի ինքը: Այդ նեզրները Միլիանահի նեզրներն էին, իսկ առիւծը, որին նա սպանել էր, Մոհամմէդի վանքի ձեռնասուռն կոյր առիւծն էր...:

Կատաղի և կրօնամոլ նեզրներն անպտուտառ նրան պատառ-պատառ պէտք է անէին, եթէ այս անգամ ևս քրիստոնէաների Ստուտածը չուղարկէր նրան մի ազատիչ հրեշտակ: Ազատիչ հրեշտակն անտառապահն էր, որ այդ րոպէին կարծես գետնի տակից գուրս պրծաւ սուրը կռնատակին գրած:

Անտառապահի պաշտօնական գզակը մէկ անգամից հանդարտեցրեց նեզրների կատաղութիւնը: Վեհ և հանգարտ կերպով նա իսկոյն արձանագրութիւն կազմեց, առիւծի դիակը բարձեց ուղտի կռնակը և ամենքին առաջն արած տարաւ գատարան:

Սարսափելի և երկարատև եղաւ այդ գատաստանը:

Վայրենի Ալթիից յետոյ Տարտարէնը տեսաւ և մի ուրիշ Ալթիի, ո՛չ պակաս բիրտ և վայրենի, այն է քաղաքային, դատավարական և փաստաբանական Ալթիիը: Նա տեսաւ այն դատաստանական խարդախութիւնները, որոնք կատարվում են զինեաների մութ անկիւններում. նա ծանօթացաւ այն հարբեցող զրազիւր-

ների, կաշառակեր պաշտօնեաների, երեսպաշտ
 և անառակ դատավարների հետ, որոնք մորե-
 խի նման դրուագաւոր թղթերի մէջ բուն գը-
 րած կրճուժ և սլոկուժ են գիւղացիների և
 տգէտ բնակիչների ունեցած-չունեցածը և
 թողնում են նրան բոլորովին լիքի, ինչպէս
 տերեւթափ ծառերն աշնան ժամանակ...:

Սմենից առաջ հարկաւոր էր որոշել թէ
 առիւծը որտեղ է սպանուած— քաղաքական
 թէ զինուորական իշխանութեան հողի վրայ: Ս-
 առաջին գէպքում գործը ենթարկվում էր քա-
 ղաքական դատարանին, իսկ երկրորդ գէպքում
 զինուորական: Զինուորական դատաստանի ս-
 նունը տալիս խեղճ Տարասկոնցու մարմինը դող
 էր բռնում. նա արդէն տեսնում էր իրան
 կամ հրացանի բռնուած և կամ յաւիտենական
 բանտարկելութեան դատապարտուած...:

Սարսափելին այն էր որ այդ երկու իշ-
 խանութիւնների սահմանները շատ խառն են
 Սլոխիւում: Վերջապէս մի ամբողջ ամիս գնալ
 գալուց, սրան-նրան արսէնթ խմեցնելուց յե-
 տոյ, ժամերով արեգակի տակ սպասել տալուց
 յետոյ, որոշեցին որ թէև առիւծն սպանուած
 է զինուորական հողի վրայ, սակայն Տարտա-
 րէնը նշան է բռնել քաղաքական հողի վրա-
 լից. ուստի և գործը ենթարկուեց քաղաքական

դատաստանի և մեր հերոսը դատապարտուեց
 երկու հազար հինգ հարիւր Փրանկ տուգանքի
 առանց հաշուելու դատաստանական ծախքերը...:

Ի՞նչպէս պէտք էր այժմ այդ ամենը վը-
 ճարել: Իրականում մնացած միքանի կտոր սև
 փողը վաղուց արդէն մսխուել էր խնդրագրերի և
 արսէնթի վրայ: Առիւծների գժբաղդ որսորդը
 ստիպուած էր ունեցած-չունեցածը մաս-մաս
 վաճառել: Նա վաճառեց բոլոր ատրճանակները,
 սրերը, դաշոյնները, հրացանները, մի մանրավա-
 ճառ զնեց պաշարեղէնը, մի դեղավաճառ էլ դե-
 ղարանը. նշանաւոր կոշիկներն ու նշանաւոր ճա-
 նապարհորդական վրանը նոյն վիճակն ունեցան:

Սմեն պարտք վճարելուց յետոյ Տարտա-
 րէնին մնաց միայն առիւծի կաշին և ուղտը:
 Կաշին նա մեծ խնամքով ծրարեց և ուղարկեց
 Տարասկոն՝ քաջասիրտ հրամանատար Բրաւի-
 դայի անունով: Իսկ ուղտը նա ուզում էր գործ
 ածել Սլոխի վերագառնալու համար, միայն
 ոչ թէ հեծնելով, այլ ծախելով և ծախած
 փողով կառք վարձելով: Իժբաղդաբար ուղտը
 գնող չկար. ոչ ոք մի կոպէկ էլ չէր ուզում
 տալ նրան: Իսկ Տարտարէնը կամենում էր ինչ-
 քան կարելի է շուտով հասնել Սլոխի. նա կա-
 րօտել էր Բախայի կապոյտ բաճկոնակին, իւր
 գեղեցիկ տնակին, իւր շագրուաններին. նա

կամենում էր հանգիստ առնել իւր փափուկ գահաւորակներէ վրայ և սպասել Ալթիբրում մինչև Ֆրանսիայից փող ստանալը: Ուստի մեր հերոսը վճռեց բանը չյետաձգել. տանջուած բայց դեռ ևս չլուսահատուած, առանց փողի, ստքով ճանապարհ ընկաւ: Այդ դժբաղդութեան մէջ ուղտը չթողեց Տարտարէնին: Այդ տարօրինակ կենդանին մի անբացատրելի քնքշութեամբ կպել էր իւր տիրոջ. և երբ նա ճանապարհ ընկաւ, ինքն էլ սկսեց նրա ետեւից գնալ յարմարացնելով իւր քայլերը նրա քայլերին:

Սկզբումն այդ բանը շատ դուր եկաւ Տարտարէին. այդ աստիճանի հաւատարմութիւնը և այդ աստիճանի անձնագոհութիւնը միանգամայն նրա սրտովն էին, մանաւանդ որ ուղտը շատ սակաւապէտ կենդանի է և համարեա ոչինչ ծախք և խնամք չէ պահանջում: Սակայն միքանի օրից յետոյ Տարասկօնցին սկսեց արդէն ձանձրանալ այդ մեղամաղձոտ կենդանու ընկերակցութիւնից, որ լիշեցնում էր նրան անցած դժբաղդութիւնները. իսկ երբ կենդանին քաղցածութիւնից աւելի ևս լրարեց և տգեղացաւ, նրա տխուր մուռթը, ծալ-ծալ եղած կողքը, թաւալուող ընթացքը միանգամայն անտանելի դարձան Տարտարէնի համար. այժմ նա մտածում էր թէ ինչպէս ազատուի ուղտի

ձեռքից: Բայց ուղտը հաստատ էր իւր հաւատարմութեան մէջ: Տարտարէնը փորձեց թաք կենալ, բայց ուղտը նրան գտաւ. նա աշխատեց փախչել, բայց ուղտն էլ վազ տուաւ նրա ետեւից. . . : Նա քարով խփում և հալածում էր ուղտին. բայց ուղտը մի ըսպէ կանգնում, տխուր աչքերով նայում էր նրա երեսին և յետոյ դարձեալ շարունակում էր հետեւել նրա քայլերին: Տարտարէնը վերջիվերջոյ ստիպուած էր տեղի տալ այդ հաստատակամութեան առաջ:

Սակայն ութ օրից յետոյ երբ նա փոշոտ, կեղտոյ, հեռուից տեսաւ Ալթիբի սպիտակ տընակները ծառերի և կանաչների մէջ թաղուած, երբ նա բոլորովին մօտեցաւ քաղաքի դռանը և նկատեց որ ամենքը ծիծաղով են նայում իրան և իւր ընկերակցին, նա այլևս չկարողացաւ համբերել: «Ո՛չ, ո՛չ, — ասաց նա, — ես չեմ կարող մի այսպիսի անճոռնի կենդանու հետ Ալթիբ մտնել». և օգուտ քաղելով ժողովրդի և կառքերի խնուած բազմութիւնից նա իսկոյն դուրս եկաւ ուղիղ ճանապարհից և ձգեց իրան մի փոսի մէջ: Միքանի ըսպէից յետոյ նա տեսաւ որ ուղտը վիզը դուրս ցցած, մուռթը կախ արած տարսափելի արագութեամբ վազում է ուղիղ ճանապարհով: Այն ժամանակ կարծես մի ահագին

Ճանրու թիւնից թեթեացած մեր հերոսը դուրս եկաւ փոսից և մի ծուռուժուռ ճանապարհով մտաւ քաղաք:

2

Պիտագորասի զփայլուն թեան ետեւից:

Հասնելով իւր տան առաջ Տարտարէնը զարմացած կանգ առաւ: Արևը մայր մտնելու վրայ էր. փողոցներում ոչ ոք չէր երևում: Կիսաբաց դռնից, որ աղախինը մոռացել էր փակել, լսվում էին ծիծաղի, բաժակների և շշերի ձայներ. և այդ ամենի միջից մի քաղցր և ուրախ կանացի ձայն, որ երգում էր մի ինչ-որ Փարիզի փողոցային երգ.

Aimes tu, Marco la Belle,

La danse aux salons en fleurs. .

—Տէր Աստուած, Տէր Աստուած,—բացագանջեց Տարտարէնը և գոյնը թուցրած ընկաւ ներս: Խեղճ Տարտարէն. ինչ տեսարան էր ըստպատում նրան...: Տան դստիկոնի կամարների տակ, շշերի, քաղցրաւենիների, բարձերի, ծխամորճների, թմբուկների ու կիթառների մէջ Բախան ոտքի վրայ կանգնած միայն մի բարակ շապկով և վարտիկով, մի զինուորական գլխարկ թեք կերպով գլխին դրած, երգում էր Marco la

Belle երգը...: Նրա ոտքերի տակ մի գորգի վրայ թեք ընկած, սիրով և քաղցրաւենիներով լրիացած ծիծաղում ու հռհռում էր Բարբասուն—անամոթ անզգամ նաւապետ Բարբասուն:

Տարտարէնը ներս ընկաւ փոշոտ, նիհարած, արևից սևացած, աչքերը ճակատը թռած. նրա գալուստն ընդհատեց այդ քաղցր տաճկա-Փրանսիական զուարճութիւնը: Բախան փոքրիկ շան նման մի սարսափի ճիչ արձակեց և փախաւ ներս. իսկ Բարբասուն ամենեւին չշփոթուեց, այլ ընդհակառակն աւելի ևս բարձր ծիծաղելով գիմեց Տարտարէնին և ասաց.

—Է՛հ, պարոն Տարտարէն, ի՛նչպէս է ես ձեզ չէի ասում որ նա Փրանսերէն գիտէ:

Տարասկօնցին կատաղած մօտեցաւ նրան.

—Նաւապետ, որոտաց նա ահռելի ձայնով:

—Digo li que venqué moum bon! դուռաց Բախան սենեակից: Տարտարէնը մէջքը կոտրուած ընկաւ բարձի վրայ. նրա մաւրիտանուհին ո՛չ միայն գիտէր Փրանսերէն, այլև խօսում էր Մարսէլի բարբառով...:

—Չէ որ ես ձեզ ասում էի, թէ շատ էլ չպէտք է հաւատ ընծայել ալփիբցի մաւրիտանուհիներին և արբանացի իշխաններին,—շարունակեց նաւապետը: Տարտարէնը գլուխը բարձրաձրեց.

— Դուք զիտէք թէ ո՛ւր է իշխանը:

— Օ՛հ, իշխանը շատ էլ հեռու չէ. նա այժմ գտնվում է Մուստաֆայի բերդում, ուր դատապարտուած է հինգ տարի բանտարգելութեան: Անշնորհքը բռնուել է ձեռքն ուրիշի գրպանը կոխած ժամանակ...: Բայց բանտարգելութիւնը նրա համար նոր բան չէ: Նորին Մեծութիւնն արդէն մէկ անգամ էլ երեք տարի նստել է բանտում և եթէ չեմ սխալվում նոյնիսկ Տարասկօնում... այո՛, այո՛, Տարասկօնում...:

— Տարասկօնում, բացառանչեց Տարտարէնը մէկ անգամից ամեն բան գլխի ընկնելով, — անդ է պատճառը որ անգգամը քաղաքի միայն մի մասն էր ճանաչում...:

— Ա՛հ, պարոն Տարտարէն, պարոն Տարտարէն. այս անիծած երկրում մարդ պէտք է աչքերը լաւ բաց անի, թէ չէ շատ խաղեր կրգան գլխին: Այդ էլ մուէզզինի պատմութիւնը դարձաւ...:

— Ի՞նչ մուէզզին... Թէ՛նչ պատմութիւն...:

— Ա՛յ ձեր գիմացի մուէզզինը, որ սիրահարութիւն էր անում Բախայի հետ: Անցած օրը լրագրում նկարագրած էր այդ բանը և ամբողջ Արժիրը մինչև այսօր էլ ծիծաղում է...: Երևակացէք որ մուէզզինը մինարէթի վրայից աղօթք անելով, ձեր քթի տակին սիրահարութիւն էր անում Բախայի հետ, և Ալլահին փառաբանելով ժա-

մադրութիւն էր նշանակում ձեր սիրուհուն...:

— Տէր Աստուած, ուրեմն այստեղ ամենքն էլ լրբեր և անգգամներ են, — բացառանչեց թշուառ Տարասկօնցին:

— Նոր նուաճած երկրներում միշտ էլ այդպէս է, փիլիսոփայական եղանակով նկատեց Բարբասուն. — բայց ինչևիցէ, եթէ ինձ լսէք, ինչքան կարելի է շուտով լետ կըգառնաք Տարասկօն:

— Հեշտ է ասելը «լետ կըգառնանք», բայց ինչով, թէ՛նչ փողով...: Ուրեմն դուք չգիտէք թէ ինչպէս են ինձ անապատումը պլոկել...:

— Այդ ոչինչ, — ասաց նաւապետը ծիծաղելով. — ահա Զուալը վաղը ճանապարհ է ընկնում. եթէ ցանկանում էք ես ձեզ կըհասցնեմ Տարասկօն...: Համաձայն էք, բարեկամ... էհ, ուրեմն լաւ...: Այժմ լսեցէք. ահա դեռ միքանի շիշ գինի և կերակուրներ են մնում. նստեցէք, և ամեն բան մոռացութեան տանք...:

Իւր արժանապատուութիւնը պահպանելու համար մի րոպէ տատանուելուց լետոյ, Տարասկօնցին համաձայնուեց, նստեց, բաժակը լցրեց և սկսեց քէֆ անել: Բաժակների չրխչրխկոցի վրայ Բախան դուրս եկաւ, երգեց Marco la Belle մնացած տները և քէֆը շարունակուեց կէսգիշերից էլ աւելի:

Ժամը երեքին մօտ գլուխը թեթևացրած

և ոտները ծանրացած՝ բարեսիրտ Տարտարէնը
 իւր բարեկամ նաւապետին ճանապարհ դրած
 յետ էր դառնում: Անցնելով մզկիթի մօտով նա
 լիշեց մուէզզինի չարութիւնը և ծիծաղեց: Բայց
 հէնց այստեղ էլ նրա գլխու մը ծնեց վրէժխըն-
 դրութեան մի դեղեցիկ ծրագիր: Մզկիթի դուռը
 բաց էր. նա մտաւ ներս, անցաւ գորգերի վը-
 րայից, բարձրացաւ վերև և հասաւ մի փոքրիկ
 խորանի, որ լուսաւորուած էր առաստաղից կախ
 արած երկաթեայ լապտերով...:

Մուէզզինն այդտեղ էր, գահաւորակի վրայ
 նստած, ահագին ապարօշք գլխին, սպիտակ հին
 մուշտակով, ծխամորճը բերանին և մի ահագին
 բաժակ արքէնի էլ առաջին, որ նա կամաց-կամաց
 կուլ էր տալիս սպասելով այն ժամին, երբ պէտք
 էր հաւատացեալներին հրաւիրել աղօթքի...:

Տարտարէնին տեսնելիս նա սարսափից ծը-
 խամորճը ձեռքից վայր ձգեց:

— Եւր և հանդարտ նստիր տեղդ, — ասաց
 Տարասկօնցին. — ա՛նր ինձ միայն ապարօշք ու
 մուշտակը...:

Մուէզզինը դողդողալով հանեց և տուեց
 Տարտարէնին: Տարտարէնն ապարօշք փաթա-
 թեց գլխին, մուշտակը ձգեց վրան և հպարտ-
 հպարտ բարձրացաւ մինարէթի գլուխը:

Ծովը հեռուից շողշողում էր: Սպիտակ

տանիքները փայլում էին լուսնի շողերի տակ:
 Ծովային գեփիւռի միջից լսվում էին կիթա-
 ուի ձայներ...: Տարասկօնցի մուէզզինը մի ընդէ-
 լուռ մնալուց յետոյ, բազուկները բարձրացրեց
 վեր և սարսափելի ձայնով սկսեց օրհնութեանը.

— Լա Սլլահ, իլ Սլլահ...: Մուհամմեդը
 ծաղրածու է... Արևելքը, Աուրանը, բաշաղա-
 ները, աւիւճները, մաւրիտանուհիները ամենքն
 էլ սուտ են ու մի գրօշ չարթեն...: Աշխարհի երե-
 սին այլևս թուրք չկայ... կան միայն գողեր և խա-
 բեբաներ... Կեցցէ Տարասկօնը, կեցցէ Տարասկօնը...:

Եւ մինչդեռ չնաշխարհիկ Տարտարէնն ա-
 րաբերէն և Ֆրանսերէն լեզուների տարօրինակ
 խառնուրդով թափում էր իւր Տարասկօնեան
 լիշոցները հորիզոնի չորս կողմերի, քաղաքի,
 ծովի, հովիտների և լեռների վրայ, միւս
 մուէզզիններն իրանց որոշ և վեհ ձայնով ար-
 ձասգանք էին տալիս նրան և հաւատացեալները
 քնատեղերից զարթած ջերմեանգուլթեամբ ծե-
 ծում էին իրանց կուրծքը...:

Է

Տարասկօն, Տարասկօն:

— Կէսօր է: Զուաւը շոգիով լցուած պատ-
 րաստվում է ճանապարհ ընկներու: Վերևում,

սրճարաններից մէկի գատիկոնի վրայ սպաները հաւաքուած դիտակով նայում են այն երջանիկ նաւին, որ պիտի գնայ Փրանսիա... Զինուորականների գլխաւոր գուարճութիւններից մէկն է այդ ներքեւում ծովը հանդարտ կերպով տատանվում է, իսկ ծովափի երկայնութեամբ գետնի մէջ խրած տաճկական թնդանօթները փայտատակում են արևի ճառագայթների տակ։ Նանսպարհորդներն աւելի և աւելի սկսում են խոնուել, բեռնակիրներն անդադար անցուզարձ են անում նաւից դէպի ափ և ափից դէպի նաւ։

Տարասկօնցի Տարտարէնն է միայն առանց ապրանքի։ Ս.հն նա իջաւ ծովային փողոցից, անցաւ փոքրիկ շուկայով, որ լի է բանաններով և ձմերուկներով, և դիմում է նոյնպէս դէպի նաւահանգիստ իւր բարեկամ Բարբասուի ուղեկցութեամբ։ Խեղճ Տարասկօնցին թողել է մաւրիտանական ափի վրայ իւր բոլոր ինչքն ու երազները և այժմ վերագանւում է հայրենիք կողոպտուած, ձեռքերը դատարկ գրպանների մէջ գրած...:

Հազիւ թէ նա ոտը դրել էր նաւապետի մակոյկի մէջ մէկ էլ յանկարծ մի անասուն, շունչը կտրած, վիզը դուրս ցցած հեւալով հասաւ նրա ետևից։ Այդ անասունն ուղտն էր — հաւատարիմ ուղտը, որ քսանուչորս ժամից է

վեր փնտրում էր իւր տիրոջն ամբողջ Այժիրում։
— Տարտարէնն ուղտին տեսնելուն պէս իսկոյն գոյնը թուցրեց և այնպէս ձևացրեց որ իբր թէ չէ ճանաչում նրան. բայց ուղտը ձեռք վեր առնողը չէր։ Նա ահագին քայլերով վազվզում էր ափի վրայ, նա կանչում էր իւր բարեկամին, նայում էր նրան ամենաքնքուշ և աղերսական հայուածքով։ Նրա տխուր աչքերը կարծես ուզում էին ասել. „Տար ինձ, տար ինձ քեզ հետ միասին հեռու, հեռու այս խեղճ Արաբայից, այս ծիծաղելի Արևելքից, որ այժմ լցուել է շոգեմեքենաներով և ուր ուղտը կորցրել է այլևս իւր նախկին պատիւն ու նշանակութիւնը։ Ինչպէս դու վերջին թուրքն ես, այնպէս էլ ես վերջին ուղտն եմ...: Այլևս մենք մէկ-մէկուց չբաժանուենք, ո՞վ իմ սիրելի Տարտարէն...“:

— Այդ ուղտը ձերն է, հարցրեց նաւապետը։
— Ամենևին, — պատասխանեց Տարտարէնը, որին սարսափեցնում էր այդ անձուռնի կենդանու ուղեկցութեամբ Տարասկօն մտնելու միտքը։ Եւ այդպէս ուրանալով նա իւր թշուառութեան օրերի ընկերին, ինչպէս որ Պետրոս առաքեալը մի ժամանակ ուրացաւ... նա հրամայեց թիավարել և հեռանալ այժիրական ափերից...: Սակայն ուղտն այս անգամ ևս չուրացաւ իւր տիրոջ. միքանի ըրպէ ջուրը

Հոտոտած, յետոյ ձգեց իրան ծովը և վիզը ջրից դուրս ցցած ու կուզը կռնակի վրայ տատանելով մակույկի ետեւից սկսեց լողալ դէպի Ջուաւ... Մակույկն ու ուղտը միաժամանակ կանգ առան շագինաւի կողքին։

— Իեղձս գալիս է այդ ուղտին, — ասաց նուապետ Բարբասուն, — լաւ է էն նրան վեր կառնեմ նաւի վրայ և երբ Մարսէլը հասնենք կընծայեմ այնտեղի կենդանաբանական պարտէզին։

— Եւ նա հրամայեց ճախարակներով ուղտին վեր բարձրացնել և շոգենաւը ճանապարհ ընկաւ։

Ճանապարհորդութիւնը տուեց երկու օր և այդ երկու օրուայ ընթացքում Տարտարէնը մնաց իւր խուցի մէջ փակուած, չհամարձակուելով գլուխը տախտակամածի վրայ բարձրացնելու և այդ ոչ թէ այն պատճառով որ ծովը փոթորկալից էր և կամ թէ ծով — նրան բռնում էր, ոչ այլ որովհետեւ հէնց որ նա գլուխը վեր էր բարձրացնում, ուղտն իսկոյն մօտենում էր նրան և սկսում էր զանազան հաճոյական պտոյտներ գործել նրա շուրջը... Իեւ ևս ոչ մի ուղտ աշխարքի երեսին այդքան սէր չէ ունեցել դէպի մարդը...

Իւր խուցի փոքրիկ լուսամտից Տարտարէնը նկատում էր որ հեազհետեւ ալժիրական կապոյտ երկինքն անյայտանում է և դառնում է աւելի

մուսլ վերջապէս մի առաւօտ նաւաչքերը բաց արաւ և նրա ականջին դիպան Մարսէլի զանգանկների ձայները... Նրանք արդէն հասել էին... Զուաւը խարխուէր ձգում։

Մեր հերոսը, որ առանց այրանքի էր, լուռ ու մունջ նաւից մեցած իջաւ, շտապով անց կացաւ քաղաքի միջով և հանգիստ շունչ առաւ միայն այն ժամանակ, երբ տեղաւորուեց Տարապիոն գնացող գնացքի երրորդ կարգի վագօններից մէկի անկիւնում։ Բոլոր ժամանակ նա երկիւղ էր կրում որ չլինի թէ ուղտը գոյ իւր ետեւից բաց հազիւ թէ գնացքը Մարսէլից երկու վերստ հեռացել էր, մէկ էլ յանկարծ ամենքը գլուխները պատուհանից դուրս հանած սկսեցին զարմացման ձայներ արձակել։ Տարտարէնը նոյնպէս գլուխը դուրս հանեց և ինչ տեսնի... ուղտը, պարոններ, անխուսափելի ուխտը, որ վիզը դուրս ցցած վազում էր զնացքի ետեւից, առանց մի քայլ անգամ նրանից յետ մնալու։ Տարտարէնը կայծակնահար եղածի պէս կուչ եկաւ անկիւնում և ձեռներով երեսը ծածկեց։

Այդ չարաբաստիկ արշաւանքից յետոյ մեր հերոսը ցանկանում էր որ իւր վերադարձը ինչքան կարելի է ծածուկ և աննկատելի լինի։ Բայց այժմ տարօրինակ չորքոտանու ներկայութիւնն անկարելի էր դարձնում այդ։ Տէր

Աստուած ինչ թշուառ վերադարձ էր այդ վերադարձը... առանց մի կոպէկ փողի, առանց առիւծների, առանց ո՛չ մի բանի և միայն մի հատիկ վիզը ծուռ ուղտի ուղեկցութեամբ...:

«Տարասկօն...» «Տարասկօն» լսելի եղաւ յանկարծ երկաթուղու պաշտօնեայի ձայնը:

Հարկաւոր էր ցած գալ վագօնից:

Ո՛վ զարմանալի բան, հազիւ մեր հերոսի գլխարկի ծայրը երևացել էր իջևանի դռան մօտ, մէկ էլ յանկարծ մի սարսափելի աղաղակ գլղղեցրեց իջևանի կամարները: «Կեցցէ՛՛՛ Տարտարէնը... կեցցէ՛՛՛ Տարտարէնը... կեցցէ՛՛՛ առիւծների քաջայաղթ որսորդը», որդտում էր ամբօխըն ամեն կողմից և փողերի ու դպրոցական երաժշտական խմբերի ներդաշնակ երգեցողութիւնն արձագանք էր տալիս այդ որոտման...:

Տարտարէնը քիչ էր մնում խելքը գլխից թռցնի. նա կարծում էր որ այդ մի երազ է: Բայց ո՛չ, ամբողջ Տարասկօնը ներկայ էր այդտեղ և ցնծութեան աղաղակներով ողջունում էր նրան գլխարկը վեր-վեր ձգելով: Ահա քաջայաղթ հրամանատար Բրաւիդան իւր ահագին ընչացքներով, ահա զինավաճառ Կոստեկարը, ահա դեղավաճառ Բեգիւբէն և ահա վերջապէս գլխարկների որսորդները, որոնք շտապում ու շրջապատում են իրանց չնաշխարհիկ պետին և

Տարտարէնի սպանած առիւծը հօ մի հատ չէր, այլ տասը, քսանը, հարիւրը... առիւծների մի ամբողջ երամակ...: Այդպիսով Տարտարէնը դեռ ևս Մարսէլ չհասած, նրա անունն արդէն հռչակուած էր այնտեղ. նա ինքն էլ չգիտէր որ իւր վերադարձը հեռագրով արդէն հաղորդուած է Տարասկօն, որ ահա շտապել էր ընդառաջել իւր չնաշխարհիկ զաւակին...:

Բայց ժողովրդի ցնծութիւնն առաւել ևս սաստկացաւ, երբ հերոսի ետեից երևաց յանկարծ մի տարօրինակ չորքոտանի, փոշու և քրտնքի մէջ շաղախուած...: Տարասկօնցիք ըսկզբումն այնպէս կարծեցին թէ այդ անասունն

ձեռների վրայ յաղթական կերպով ցած են բերում նրան սանդուխքների վրայից:

Եւ զիտէ՞ք ինչն էր առիթ տուել այդ փառաւոր ընդունելութեան—կոյր առիւծի կաշին, որ Տարտարէնն ուղարկել էր Բրաւիդայի հասցեով: Այդ կաշին, որ տարասկօնցիները շքեղ կերպով տեղաւորել էին քաղաքային դահլիճում, գրգռել էր ո՛չ միայն տարասկօնցիների այլև ամբողջ հարաւային Փրոնսիացիների երևակայութիւնը: Լրագրներն սկսել էին ահագին յօդուածներով նկարագրել այդ կաշու պատմութիւնը. մինչև անգամ մի ամբողջ դրամա էին յորինել այդ առիթով:

Տարտարէնի սպանած առիւծը հօ մի հատ չէր, այլ տասը, քսանը, հարիւրը... առիւծների մի ամբողջ երամակ...: Այդպիսով Տարտարէնը դեռ ևս Մարսէլ չհասած, նրա անունն արդէն հռչակուած էր այնտեղ. նա ինքն էլ չգիտէր որ իւր վերադարձը հեռագրով արդէն հաղորդուած է Տարասկօն, որ ահա շտապել էր ընդառաջել իւր չնաշխարհիկ զաւակին...:

Բայց ժողովրդի ցնծութիւնն առաւել ևս սաստկացաւ, երբ հերոսի ետեից երևաց յանկարծ մի տարօրինակ չորքոտանի, փոշու և քրտնքի մէջ շաղախուած...: Տարասկօնցիք ըսկզբումն այնպէս կարծեցին թէ այդ անասունն

առասպելական Տարասկ անունով հրեշն է, որ մի ժամանակ ապականում էր իրանց քաղաքի շրջակաները...:

—Մի վախենաք, այդ իմ ուղտս է, հասգըստացրեց Տարտարէնը իւր համաքաղաքացիներին: Եւ արգէն Տարասկօնեան արևի՛ այդ հարաւային խաբեբայ արևի ազգեցութեան տակ նա ուղտի կռնակը շփելով աւելացրեց.



—Սա մի ազնիւ կենդանի է...: Սրաներկայութեամբ է որ ես սպանել եմ բոլոր իմ աւիւժներին...:

Այս ասելով նա մտաւ երջանիկ հրամանատարի թևը, և ուղտը ետևից ձգած ու շրջապատուած գլխարկների ազնիւ որսորդներով իւր քայլերն ուղղեց գէպի բաօբաբի անակը:

Եւ մինչդեռ ժողովուրդը շարունակում էր թնդացնել օգը որևորուած կեցցեների բռուն աղաղակով, Տարտարէնն արդէն սկսել էր իւր նշանաւոր որսերի պատմութիւնը:

—Երևակայեցէք ձեզ, ասում էր նա, որ մի երեկոյ Սահարայի խորքերում... 7





1958

2013

